


« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիկերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախոն-նական խօսակցումին մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չճարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնու-թիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ



ԱՆԱԿԻՏ


ՀԱՆԴԻՍ ԱՄՍԵԱՅ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն., Գ. Ե. Ղ. Ա. Բ. Ո. Ի. Ե. Ս. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Ա. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1899

ԹԻԻ 4



ՆՈՒՊՈՐ ՓՍԵՍ.

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Յաւազին ու երկարաձիգ ոգեւարէ մը յետոյ, ահա կը կորսնցնենք մեծ մտքի ու մեծ սրտի մարդը, որ իր կեանքին ամենէն փառաւոր արտադրութիւնն էր «հայր» անուանակոչութիւնը որով իր ձեռքովը գերութենէ փրկուած Ֆելլանները զինքը պսակեցին, եւ զոր մէնք Հայերս պիտի դասենք շարքին մէջ այն բարձր դէմքերուն որոնք մեր ցեղին կարողութիւնները իրենց գերագոյն զօրութեամբը արտայայտեցին :

Իրպուածը զինքը նետած ըլլալով օտար երկիր մը, պարագաներն ու անմիջականապէս կատարուելիք գործի մը պայծառ ու տիրական ըմբռնումը զինքը կապած ըլլալով այդ ընտրութեան հայրենիքին, Նուպար իր ուժերը յատկացուց Եգիպտոս մը վերաստեղծելու ձեռնարկին : Նկարագիղ ու վիպական հրապոյր մը կար այդ գաղափարին մէջ, որուն հողը Մեհեմէտ-Ալի պատրաստած էր, եւ զոր Նուպար ուզեց ամբողջապէս իրականացնել : Հին պատմութեան վեհագոյն էջերուն ազդեցութեամբը կազմուած, իր երիտասարդ հոգին տենչը ունէր վաղեմի մեծութիւնները արթնցնելու : Միւս կողմէ, Արեւելքի մէկ անկիւնը ծնած, մօտէն կը ճանչնար խորին փտութիւնը ուր արդի Արեւելքը, երբեմնի մեծաշուք գաղափարականութենէն մերկացած, դանդաղօրէն կը մեռնէր, կրօնամուլութեան, տգիտութեան եւ բռնութեան բեռին տակ : Եւրոպական կանոնաւոր կրթութեան մը չնորհիւ, իւրացուցած էր արեւմտեան արդի քաղաքակրթութեան յստակ ու ազնիւ սկզբունքները, արդարութեան տենչը, ազատութեան սէրը, հաւատքը անհատներու եւ ազգերու համար լաւագոյն կեանքի մը, յարգանքը Օրէնքին : Ըղձաց փոխադրել իր Արեւելքին մէջ ինչ որ Եւրոպան սկսած էր գործադրել : Ուզեց եւրոպացնել Արեւելքը :

Իր պատմական ուսումնասիրութեանցը մէջ յուզմունքով կանգ առած էր Չմշկիկ կայսեր, Ներսէս զօրավարին վրայ, երկու մեծ հայազգիներուն որոնք բիւզանդեան կայսրութեան ամենէն հզօր դէմքերէն եղած էին : Անոնք իրեն վստահութիւն ու քաջութիւն տուած էին, եւ հաւատքը թէ իր ցեղը կարող էր աշխարհի թատերաբեմին վրայ ամենէն բարձր դերերը կատարել : Երազեց Չմշկիկ մը ըլլալ :

Աւելի մեծ եղաւ քան Չմշկիկը : Փոկասի

յաջորդը արիւնի հերոս մըն էր : Նուպար արդարութեան պատերազմիկը եղաւ :

Ինքը, միևնախը, յաջողեցաւ մահմետական բարբարոսութեան ձեռքէն զերծանել Եգիպտոսը, անզգալարար, առանց բուռն ցնցումի, շքեղորհիւ առասպելական ճարտարութեան մը, հանձարեղօրէն գիտնալով գործածել մարդերը, օգտուիլ պարագաներէն, հաշուել հաւանականութիւնները : Միևնախը՝ կ'ըսեմ, որովհետեւ Եգիպտոսի մէջ ուր կը գործէր, տեղական տարրը, բացարձակապէս ստրկացած, անկարող էր իրեն օժանդակ ըլլալու, ու եւրոպական կառավարութիւնները աւելի Եգիպտոսը զրաւել կ'ուզէին քան Նուպարի ծրագիրը գիւրացնել : Նուպար գիտցաւ ներդաշնակել ամենէն հակասական շահերը, Եգիպտոսի փոխարքային համար ստացաւ Սէյիլ առաձգական պատուանունը որ Եգիպտական կէս-անկախութեան մը նուիրագործումն էր հանդարտօրէն չնորհուած, եւ վերջապէս հաստատեց Սաուն-Գատարանները, որոնցմով Եգիպտոսի ժողովուրդը ինքնապաշտպանութեան ուժ մը կը գտնէր իր տեղական բռնաւորներուն խարազանին ինչպէս օտարազգի շահագործողներու սնգլութեանը դէմ :

Այդ գործը զոր Նուպար ի գլուխ հանեց, Հայու գործ էր էականապէս : Եւրոպական քաղաքակրթութեան Արեւելքի մէջ տարածման միջնորդի պէրը, զոր Նուպար յաղթականօրէն կատարեց, մեծ դերն է Հայուն : Եւ արդէն ոչ ոք այնքան խորապէս Հայ եղաւ որքան իր բովանդակ կեանքը օտարութեան մէջ անցուցած այդ մարդը, որ հայերէն շատ քիչ գիտէր : Յեղին հոգին ունէր, այն ապստամբ, անհանդարտ ու հպարտ հոգին, ամէն լուծ կրժող, արդարութեան ու ազատութեան յաւիտենապէս ծարաւ : Ու միանգամայն ճապարակ միտքը, անվկանդ հաստատամտութիւնը եւ լեզուանի ու խորամանկ նրբութիւնը ունէր իր ցեղին : Գիտէր այդ ամէնը եւ հպարտ էր Հայ ըլլալուն : Ամէն տեղ, ամենուն, միշտ հոչակեց իր հայութիւնը :

Իր ցեղը պիտի պանծայ իրմով, ինչպէս ինքը կը պարծենար իր ցեղով : Իր անունը յարգանքի կը հրաւիրէ օտարները հայ ազգին նրկատամբ : Նուպարի մահուան առթիւ եւրոպական մամլոյն մէջ երևցած բազմաթիւ յողուածները, մեծ հանգուցեալին ներբողին հետ, ներբողը կը հիւսեն այն ցեղին որուն կը պատկանէր անիկա :

Մահուանը երկրորդ օրը, յուզուած ու հապճեպ գրչով մը չէ որ կարելի պիտի ըլլայ ման-

բամանաբար վերլուծել այդ ամբողջ կեանքը՝ կնճռոտ ու թելադրական : Ատի ամենէն ճոխ ու գեղեցիկ նիւթերէն մէկն է որոնց ուսումնասիրութիւնը պարտքը պէտք է ըլլայ արդի հայ սերունդին : Պիտի նախընտրեմ ամբողջիկ Անահիճի այս թուոյն մէջ եւրոպական մամուլոյն կարծիքը մեր ողբացեալ ազգակցին վրայ , եւ անշուշտ լաւագոյն պիտի ըլլայ , մեր ազգային համեստութեան զգացումը յարգելու համար , որ օտարներու բերնէն լսէ մեր հասարակութիւնը այն բոլոր հիացումը որուն արժանի եղաւ Նուպար : Ես միայն մէկ քանի բառ պիտի ըսեմ ներքին մարդուն վրայ , զոր պատիւ ունեցայ մօտէն ճանչնալու , եւ որ նոյնքան մեծ էր որքան գործիչը :

Առաջին վայրկեանէն , իր անձին բարձր հրապոյրը գրաւեց զիս : Պոլիս , իմ սերունդիս ոչ ոք բացատրած էր Նուպար փաշային նշանակութիւնը : Այդ անունով հեռաւոր , օտար եւ անմատչելի էակի մը գոյութիւնը իմացած էինք միայն . եւ անունին հազուադէպ յեղձեղմանը միշտ կ'ընկերանար «Հայոց համար ոչինչ ըրած է» զանգատը : Այդ միջոցին , Բարիկ , արդէն հրատարակած էի Ֆրանսական հանդէսներու մէջ մէկ քանի յօդուածներ Հայոց արդի կացութեան , Զէյթունի ապստամբութեան , հայ գրականութեան վրայ , ինչպէս նաև Les massacres d'Arménie տիտղոսով գիրքը , որ , Քէլմանսոյի յառաջաբանով մը , ազմուկ հանեց բարիզեան մամուլին մէջ : Նուպար , այդ գրքէն հետաքրքրուած , ուղած էր զիս տեսնել : Գիտենք թէ ի՞նչ ուռեցած , ամբարտաւան ու անկիրթ արարածներ են ընդհանրապէս քիչ շատ «գիրք» ունեցող հայ «ընջ»երը . եւ կ'երեւակայէի , ոչ անշուշտ այդ անչնորհ տիպարներուն նման մէկը , բայց գոնէ բարձրայօն , արհամարհոտ , ինքնագոհ անձ մը , տեսակ մը արեւելեան փաշա , ինչպէս կ'ըսէին : Գտայ քաղցր ձերունի մը , հայրական խանդաղատանքով , նահապետական բարութեամբ , ու ամենէն եւրոպական , ամենէն նուրբ ու չնորհալի քաղաքավարութեամբ : Խրախուսեց զիս այն չնչին ծառայութեան համար զոր կրցած էի մատուցանել ազգային դատին , եւ զոր ինքը կը հաճէր կարեւոր նկատել . խոստացաւ իր օգնութիւնը Հայը Եւրոպային ճանչցնելու համար կատարուած ամէն ջանքերու : Գառնաբար գանգատեցաւ մեր յեղափոխականներուն սղախ-

կան , աննպատակ , անհաշիւ դործունէութենէն : Ու տեսայ այդ եօթանասնամեայ մարդը , փառքով ու վայելքներով յղփացած , որ կը խշխշար , կը մորմոքէր մտածելով . ահա ի՞նչ կացութեանը ուր ինկած էր հայ ժողովուրդը Սասունէն ի վեր : Բազմակուտակ փորձառութեան մը վրայ հիմնուած այդ պայծառ դատողութիւնը , իրական կացութեան ճշգրիտ սև խորին այդ զգացումը , եւ նրբամիտ , փայփայական ու համեղ խօսուածքը զոր ունէր այդ մոգիչը , ինձի այդ օրը միտիթարիչ յայտնութիւնը ըրին կատարելագործուած Հայուն , Հայուն որ թերութիւնները վանած է եւ ունի յատկութիւնները միայն իր ցեղին : Այդ օրէն սկսեալ , մինչև ծագումն իր հիւանդութեանը որ զինքը մահէն առաջ անշարժացուց , կրցայ մտերմօրէն զինքը ուսումնասիրել : Տեսայ ո՞րքան ցաւալի սխալ մը գործած էր մեր ազգը՝ չգիտնալով օգտուել այդպիսի մարդէ մը : Իրաւ է որ Նուպար քաղքենին եղած էր Եզիպտական հայրենիքին , բայց երբեք մոռցած չէր ցեղը որուն կը պատկանէր , եւ նոյն իսկ մոռցած չըլլալուն ապացոյցները սրւած էր մէկէ աւելի անգամ . եւ եթէ իր ցեղը զինքը հասկցած , գնահատած ըլլար , եթէ իր ցեղը ուզած ըլլար դիմել անոր ուժերուն , Նուպար իր ներքին մեծագոյն բաղձանքին գոհացում տուած պիտի ըլլար իր տաղանդը ծառայութեանը զնելով իր ցեղին զոր հիացմամբ կը սիրէր : Քանի՛ անգամ լսած եմ իր դաճնութեամբ տրանջալը այն պազ անտարբերութեան համար որով իր ցեղը զինքը պաշարած էր . «Ես , կ'ըսէր , կեանքս նուիրեցի Եզիպտոսի , որովհետեւ բազը իմ առջիս այդ դործը հանեց , հրապուրուեցայ անկից , եւ կապուեցայ : Բայց օտար երկրի մէջ այդ դործունէութիւնս երբեք ինձի չմոռցուց որ Հայ մըն եմ . երկու երեք բան ըրած եմ ցեղիս համար , բայց կը կարծեմ թէ առոնք ամենէն կարեւոր բաներն են որ կրնայի ընել . Հասգիւղի Շահնազարեան վարժարանին հաստատմանը օգնեցի նիւթապէս . Վ . Լանկլուային 25000 Փրանք սուրբ որպէս զի Հայոց պատմութիւնը Ֆրանսերէնի թարգմանէ եւ Ֆրանսայի ճանչցնէ Հայոց անցեալը . եւ Պերլինի վեհաժողովին ատեն , ծրագիր մը պատրաստեցի հայկական դաւաճներուն համար եւ առաջարկեցի որ ես ներկայացնեմ զայն վեհաժողովին :» Այդ երեք գործը ամբողջ ուղեգիծ մըն էին իրօք , զարգացնել Հայոց միտքը , ճանչցնել հայ ազգը Եւրոպային , ու եւրոպական քաղաքականութեան նպաստաւոր մէկ բո-

պէին՝ հայկական գաւառներուն մէջ հաստատել եւրոպական վարչութիւն մը՝ հիմնուած օրէնքի եւ արդարութեան վրայ: Իր կեանքին մեծ ցաւը եղած էր այդ անհասկացողութիւնը զոր իրեն ցուցուցեր էր հայ ազգը: Քսան անգամ դարակէն հանած է իր ծրագրին դեղնած սևտրակիկը, եւ գուրդուրանքով, արտմութեամբ ու խանգավառութեամբ կարդացած է զայն ինծի (1): Եւ կը կրկնեմ հոս ինչ որ գրեցի արդէն. կարելի է որ այդ ծրագրին նոյնութեամբ իրագործուի արգելքներու բազմէր. բայց հայ ժողովրդին յանցանքը այդ սարագային ոչ այնչափ այդ ծրագիրը, որչափ նոյն իսկ անձնական միջամտութիւնը մերժած ըլլալն է այդ մարդուն, որ իր ճարպկութեամբը անկարելին կարելի ըրած էր Եգիպտոսի մէջ, եւ որ անշուշտ, անգամ մը որ հայկական գործը ձեռք առնէր, միջոցը պիտի գտնէր ո եւ է գործնական արդիւնք յառաջ բերելու:

Ինքզինքը հայկական գործունէութեան մը նուիրելու փորձը չյաջողելով, Նուպար նորէն Եգիպտոս կը դառնար, ուր նոր մաքառում մը կը սկսէր իր հիմնած գործը պաշտպանելու համար անգլիական զօրութեան դէմ: Երբ սակայն Սասունի ջարդերուն լուրը պայթեցաւ ու Եւրոպայի մէջ հայկական խնդիրը սկսաւ նորէն կայծկլտալ, Նուպար ինքնարեւրաբար 15,000 ֆրանք զրկած էր Վենետիկի վանքը, որպէս զի ֆրանսերէն զիրք մը հրատարակեն Հայոց անցեալն ու ներկան Եւրոպային ծանօթացնող, զիրք որ գեռ չհրատարակուեցաւ զժբաղդաբար: Այդ միջոցին, Նուպար, գործէ վերջնապէս քաշուած, Բարիդ եկաւ հաստատուել. եւ այդ վայրկեանէն մինչեւ իր մահը, հակառակ այն դաժնութեան զոր ազգը իրեն պատճառած էր, իր միտքն ու սիրտը ամբողջապէս հայ ժողովրդին կացութեանը նուիրեց: Հիմա ծեր, մէկ սրունքը ձիէ անկումէ մը հաշմուած, եւ մաքով ալ խոնջ էր. հայկական խնդրոյն այս նոր վերաբացմանը մէջ, չէր կրնար անձնական դեր մը խաղալ իբր դիւանագէտ Բայց իր հանրածանօթ եւ յարգուած անձի կշիռը բերաւ այդ հարցին կողմը. հրապարակաւ յայտնեց, կրկնեց, պնդեց թէ իր չարչարուած ազգակիցներուն հետ էր սրտով. ամէն հայասէր ցոյցի իր քաջալերութիւնը, ամէն հայասէր Եւրոպացւոյ իր երախտագիտութիւնը հասցուց, եւ այսպէս

ունեցաւ իր կարեւոր բաժինը Եւրոպայի մէջ ի նպաստ Հայոց հանրային կարծիքը արթնցնելու գործին մէջ: Նոյն ատեն, աւելի անմիջական եւ աւելի ընդարձակ ծառայութիւն մը մատուց իր ազգին, հազարաւոր խեղճեր անօթութենէ փրկելով: Կարելի չէ հաշուել այն բոլոր օգնութիւնը զոր իրմէ գտան դէպքերէն փաստուած անհամար Հայեր. Եգիպտոսի գաղթականները մեծ մասամբ իր շնորհիւր կրցան ապրիլ ամիսներով. Բարիդի ապաստանարանը իր նուէրներովը զիմացաւ. անգլիական եւ զուիցերիական նպաստամատոյց ընկերութեանց զրկեց մեծաքանակ գումարներ, եւ զիստեք որ պատրիարքին ձեռքով նոյն իսկ երկիրը ուղղակի հասցուց իր նպաստը: Հիանալին, այդ անսպառ առատաձեռնութիւնը չէր այնչափ որչափ եղանակը որով կը զգար եւ կը կատարէր զայն. կը ճանչնանք հայ «բարերար»ները որոնք քսան ֆրանք տրւած ատեննին ձեռքերնին երկինք կը բարձրացնեն՝ ազգին համար անանկացածի յուսահատ ձեւերով. հանդարտ, պարզ, անխօսուկ, Նուպար իր օգնութիւնները կը սահեցնէր մութին մէջ, դէպ ի նպատակը, առանց հաշուելու, առանց շնորհակալութեան կամ ազմկալից գովասանքի սպասելու, պարտք մը կատարելու ներքին դժուակութեամբը. եւ կը յիշեմ իր սիրուն ձեւը, այն արեւելեան շարժումը որով ձեռքը կուրծքին կը դնէր, կրք իր բարեգործութեանց ակնարկութիւն ընող ըլլար, Պարտքս է՝ ըսել ուղելով: Բայ ի նուիրատուութիւններէն փախստականներուն ու որբերուն համար, Նուպար յանձն առաւ միանգամայն այն ծախքերը որով կատարուեցան Բարիդի մէջ Հայոց մասին մէկ քանի հրապարակախօսութիւններ, եւ հրատարակուեցան մէկ քանի գրքեր: Եւ օգնեց բազմաթիւ ուսանողներու որոնք վերջին դէպքերուն հետեւանքով ապրուստի ամէն միջոց կորսնցուցած էին:

Իր նիւթական բարեգործութիւններուն չափ, թերեւս աւելի, կարեւոր բարիք մը, զոր Նուպար իր շուրջը, մեր մէջ, սփռեց, իր պայծառ ու հանդարտ մտածումն էր, իր յորդորը զրական գործունէութիւն մը, իր զայրոյթը յախուռն ու անխիղճ խլրտումին դէմ, այն ամբողջ իմաստուն ու փորձառու դասը զոր տուաւ մեզի, խուճը մը Հայերու, իր բարեկամական խօսակցութեանց մէջ: Իր ազգեցութիւնը վրձնական եղաւ այն ձգտումին մէջ զոր ունեցանք մեր ազգային գործունէութիւնը քննութենէ անցընելու, մեր հանրային ձեւնարկներուն մէջ

(1) «Անախիտ»ի յառաջիկայ Թուով պիտի հրատարակենք Նուպար փաշայի ծրագիրը:

գիտակից ուղղութիւն մը մտնելու : Ինքը եւ ոչ խակ գոյութիւնը գիտցաւ այդ յօդուածներուն որ գրուեցան . բայց իրմէ բղխեցաւ «մտածելու եղանակ մը» , որ այդ առողջ ուղղութեան ծրնունդ տուաւ : Եւ ատի ամենէն կարեւոր ծառայութիւններէն մէկն է զոր Նուպար մատուցած եղաւ իր ազգին :

Իր տունը , զոր « հայ տուն » կոչելու մէջ հաճոյք կը գգար , վայրկեան մը իրօք հայկական կեդրոնավայր մը դարձաւ : Ամէն անկիւնէ եկած Հայեր հոն իրարու կը հանդիպէին : Բարիզէն անցնող ամէն Հայ որ տիրոզու մը կամ նշանակութիւն մը ունենար , կ'երթար տեսնել Նուպարը որ մեր « մեծ ծերունին » եղած էր : Աշխարհիս ամէն խորշերէն Նուպարին վրայ կը տեղային ինդրանքներ , խորհուրդ հարցնող գիմումներ , յարգանքի արտայայտութիւններ : Տեսակ մը աշխարհական կաթողիկոս դարձած էր : Եւ այդ դերը կատարեց վեհութեամբ , պարզութեամբ , եւ մեծ քաղցրութեամբ : Սըխալ ճամբէ հտ կեցնելու համար , օգտակար ըլլալու համոզումով , ընդունեցաւ մինչեւ անգամ . . . Նազարբեկը . մեր Աղատիչը պարզած էր ծերունի դիւանագէտին իր ամբողջ վիթխարի ծրագիրը . « Մինչեւ հիմա թերեւս չէիք գիտեր Եւրոպային սրամազրութիւնները , պատասխանած էր Նուպար՝ իր բարի ժպիտովը , բայց հիմա որ գիտէք , այլեւս ոճրագործութիւն պիտի ըլլար , այնպէս չէ՞ , միեւնոյն ընթացքը շարունակելը » Գոհեցիկ բազմախոհներ շահագործել փորձեցին զինքը , աներես մուրացկաններ տանը դուռը ափ ափին , գոնուեցան հրէշներ որ սպանական նամակներ դրկեցին կամ զինքը նախատինքներով ողողող գրութիւններ՝ որովհետեւ իրենց պահանջած գումարը չէին ստացած . ինքը , տրտմած այդ ամենէն , երբեմն ալ զգուած , կը շարունակէր սակայն , լռիկ , բարութեան գործը զոր ստանձնած էր ինքնաբերաբար :

Իրերն ու մարդերը միշտ նկատած էր բարձր հայեցակէտէ մը . եւ կը տեսնէր յստակ ու ճիշդ : Ոչ ցեղի , ոչ կրօնքի , ոչ կուսակցութեան ատելութիւնները ճանչցած էր երբեք : Իր տարօրինապէս հաւասարակչիւ միտքը անձնական ու տեղական կրքերուն ազդեցութիւնը կը թօթափէր : Իր գործունէութիւնը , թէպէտ ձեւին մէջ բացարձակապէս դրական , զուտ գաղափարի մը վրայ հիմնուած էր . եւ կարելի է արդէն Նուպարը յատկանշել սա երկու բառով՝ «դրական գաղափարապաշտ մը» : Այդ « գործի

մարդ »ը , որ կ'ատէր անամէջ երազանքը , ամենաջերմ խանդավառութիւն ունէր մեծ գաղափարներու համար , միայն թէ իրեն համար «մեծ գաղափարները» իրականանալի գաղափարներն էին : Իր գլխաւոր «գաղափարը» , որ իր կեանքին առանցքը եղած էր , Արդարութիւնն էր : «Ես աւելի վարչագէտ մըն եմ քան դիւանագէտ մը» կ'ըսէր : Դիւանագէտը պարտաւորիչ նենգութեանց եւ անխուսափելի կողմնակալութեան մարդը կ'ըլլայ . վարչագէտը տեսակ մը գիտնական է , մարդկային հաւաքական կեանքին պայմաններուն հեշտացումն ու դաշնաւորումը լարող միտք մըն է : Եւ արդարեւ , Նուպարի գործը եղած է՝ սկիզբէն մինչեւ վերջը՝ գտնել միջոցներ մարդկային յարաբերութիւններուն մէջ աւելի՛ արդարութիւն , աւելի՛ կանոնաւորութիւն դնելու համար : « Բոլոր միւս խոշոր բառերը խախուտ են , կ'ըսէր , Արդարութիւնը միայն իրական է : Ամբողջ կեանքս այդ բառը կրկնած եմ : Թող օրէնքը հաստատուի ամէն տեղ , ամէն կրօնքէ , ամէն ազգութենէ , ամէն կուսակցութենէ վեր , եւ մարդոց յարաբերութիւնները պիտի հեշտանան , եւ շատ մը խընդիրներ , շատ մը կոխներ պիտի ինքնին լուծուին » «Ես , կ'աւելցնէր կատակող հպարտութեամբ մը , իմ հանդարտ երեւոյթիս տակ ամենէն մեծ յեղափոխականը եղած եմ գործիս մէջ . եւ առանց արիւնի յեղափոխութիւններն են որ ամենէն տեւական , ամենէն իրական արդիւնքը կուտան » Յաճախ կարգացած է ինծի հատուածներ իր Յուշագրութիւններէն , որոնք շահեկան են արեւելեան դրոյցի մը պէս եւ տեղ տեղ գեղեցիկ՝ ճշմարիտ դիւցազներգութեան մը պէս . Նուպարին հոգին այն օրը պիտի ճանչցուի ամբողջապէս երբ այդ գիրքը հրատարակուի (1) . չեմ գիտեր աւելի սրտաշարժ ու վեհ էջ քան այն զոր դեռ կը յիշեմ՝ իր յստակ , կենդանի կարգացումը , եւ ուր կը պատմէր իր յուզումը երբ Եգիպտոսի ինքնավարութեան գործը յաջողցնելու համար առաջին անգամ Պոլիս կ'երթար . ստեղծագործութեան անձկութիւնը , աւիւնը , հաւատքը եւ վրդովումը կային հոն . Նուպար իր գործը զգացած է ինչպէս մեծ պաշ-

(1) Այդ « Յուշագրութիւններ »ը զոր հրատարակել առաջարկած են արդէն Բարիզի « Ռեվիւ տը Բառիօն » , Լոնտոնի « Նայն-Սինչըրիօն » , եւ մէկ քանի մեծ գրատուններ , պիտի մնան դեռ ատեն մը անտիպ , հանգուցեալին կամբին համեմատ : Երբ Յրաններն ընագիրը տպագրուի , այժմէն արտօնութիւն ստացած ենք հայերէն Թարգմանութիւնը հրատարակելու « Անախիտ » ի մէջ :

տօն մը ճակատագրէն իրեն յանձնուած : Եւ առանց իր գործին այդ վեհաշուք ըմբռնումին , որ իրեն տուած է անսպասուելի վիթխարի տուկունութիւն մը , անկարելի պիտի ըլլար բացատրել որ Նուպար յաջողած ըլլայ ունենալ , տարիներով , պէտք եղած հաստատամտութիւնը , սրատեսութիւնը , հաւատքը եւ ճարպկութիւնը որով Եգիպտոսը Թուրքին լուծէն խլեց եւ որով հիմնեց իր Խառն Դատարանները , զոր ոչ Խախտը կըրցաւ երբեք քայքայել , ոչ իսկ Անգլիան՝ երբ Եգիպտոսը իր իշխանութեան տակ առաւ : Զարմաշմամբ տեսայ որ լրագիրներէն ոմանք Նուպարի գործը գեղեցիկ վիժածք մը համարած էին . չեմ կարծեր որ իր բուն նպատակը Եգիպտական պետութիւն մը կանգնել եւ երկրին բոլոր տարրերուն վրայ եգիպտական տարրը գերիշխան դարձնել եղած ըլլայ . Նուպար «ազգայնական» ձգտում չունէր . հայկական ջարդերուն ամենէն քստմենելի շրջանին անգամ , իր բերնէն ատելութեան բառ մը չլսեցի Թուրք կամ քուրդ ցեղերուն դէմ . այդ ամբողջը կը նկատէր արդիւնք յոռի վարչութեան մը եւ ոչ թէ այս ինչ կամ այն ինչ ցեղին յանցանքը : Նուպարի գլխաւոր նպատակը արեւելքի մէջ հաստատելն էր Օրէնքին յաղթանակը , որպէս զի ոչ մէկ անհատ չկարենայ այլեւս կեղեքել կապկպուած ամբոխները , եւ որպէս զի ոչ մէկ ցեղ չկարենայ ճնշել ուրիշ ցեղեր : Երբ զինքը «Արեւելքի Քաղաքը» ուզեցին անուանել , մերժեց այդ հոյակապ տիտղոսը , նախընտրելով կոչուիլ «արդարութեան ախոյեանը Արեւելքի մէջ» : Նոյն իսկ Անգլիոյ տիրապետումէն յետոյ , այսօր , Նուպարի գործը կը մնայ կանգուն . իր դատարանները կենդանի են , եւ պիտի մնան . Անգլիա դանոնք ջնջելու անխոհեմութիւնը պիտի չգործէ : Անոնց շնորհիւ Եգիպտոսի ժողովուրդը յաւիտենապէս ազատ է ճնշումէ : Անգլիոյ հովանւոյն տակ , կանոնաւոր եւրոպական վարչութեամբ մը , այդ կէս-անկախութիւնը զոր Եգիպտոս ունի այսօր , միակ կարելի բանն էր այդ երկրին մէջ ուր Ֆելլահ տարրը , որուն ակարութիւնը Նուպար խորապէս զգացած էր , երբեք պիտի չկարենար ինքզինքը կառավարել ինքն ինքն իրեն թողուէր : Նուպար կ'ուզէր միեւնոյն բանը ընել Հայաստանի մէջ : Կ'ուզէր Օրէնքը հաստատել հոն ամէն ցեղերէ , ամէն կրօնքներէ վեր , եւ ոչ թէ կանգնել Հայկական Տէրութիւն մը , ինչպէս կը գրէ Էօթէն-Մեկըրոտ սը Վոկիլէ (1) . կը յուսար որ արդարութեան

հաստատմամբ , ցեղերը չկարենալով այլեւս իրար կեղեքել կամ շահագործել , բնական շարժումով մը իւրաքանչիւր ցեղ պիտի խմբուէր , աճէր ու զարգանար իր յատուկ կեդրոնին մէջ , առանց մին միւսին վնասելու . եւ որովհետեւ հաւատք ունէր հայ ցեղին մտաւորական զօրութեանը վրայ , անշուշտ կը մտածէր թէ այդ պայմաններուն մէջ , Հայուն համար ինքնին պիտի լուծուէր իր ցեղական ինքնուրոյն բարգաւաճման խնդիրը : Բայց Հայաստանի հարցը աւելի կնճռոտ էր քան Եգիպտոսինը . ներքին եւ արտաքին պատճառներ արգիլեցին , ինչպէս գիտենք , որ Նուպար փորձէր իր սիրական զաւաճարին այդ ամենէն սիրելի իրագործումը :

Այդ բարձրահայեաց ըմբռնումով էր որ կը հասկնար եւ կը սիրէր իր ցեղը : Ազգայնական զգացումներուն զարգացման համար , լեզուն անհրաժեշտ տարրն է . եւ Նուպար հայերէն չէր գիտեր . լեզուէն զատ , ցեղի մը միջավայրին , ատելութիւններուն ու համակրութեանցը մէջը մանկութենէ ի վեր ապրած ըլլալը կարեւոր դեր մը ունի . եւ Նուպար ութը տարեկանէն օտար երկիր ինկած էր : Ինքզինքը Հայ կը ըզգար՝ մտաւորապէս . եւ առանց կրքի , առանց սովորութեանց ու միջավայրի ճնշողական ազդեցութեան , կը նկատէր ցեղը որուն կը պատկանէր : Ատով , զերծ մնացած էր այն բոլոր միամիտ , սրտաշարժ ու վտանգաւոր ինքնահաւանութիւններէն որով մեր շովէնները կը տեսնեն մեր ազգին պատմութեանը մէջ այն բոլոր մեծութիւնները զոր չենք ունեցած . Նուպար կը տեսնէր ցեղին այն մեծութիւնները զոր մենք ընդհանրապէս չենք տեսներ , եւ որոնք իրականներն են . «Մեծ ազգ մը չենք եղած մենք , կ'ըսէր , եւ չէինք կրնար ըլլալ՝ աշխարհագրական այդ անճոռնի դիրքին մէջ . Ուշիմ , հպարտ , յամառ ու դիմացկուն ժողովուրդ մը եղած ենք . ամէն լուծի դէմ գլուխ վերցուցած ենք . Ասիոյ մէջ եւրոպական քաղաքակրթութեան յառաջապահ գունդը եղած ենք . ահա Հայուն մեծութիւնը : Բայց մեծ ազգ մը չենք եղած , մեծ քաղաքակրթութիւն մը չենք կրցած հիմնել , ինչպէս Պարսիկը , Արաբը կամ Յոնքը : Հայը մեծ կրցած է ըլլալ միայն անհատապէս , եւ օտար երկրի մէջ , ուր պայմանները ներած են իր կարողութիւնները ամենայն ազատութեամբ զարգացնելու . Հայաստան մը , ճշմարտապէս անկախ ու մեծ Հայաստան մը , թերեւս երբեք գոյութիւն չէ ունեցած . բայց գոյութիւն ունեցած են մեծ Հայեր » եւ կը յիշէր

(1) Ֆիկաո, 17 յուն. 99

սառնեիեք հայազգիները որոնք Բիւզանդեան գահուն վրայ բաղմամ են, ու այն մեծ Հայերը որ Ռուսաստանի, Եգիպտոսի, Բուլղարիոյ մէջ եւ այլուր կատարած են գործեր զորս աշխարհ նշմարած է: Իմ անձնական ուսումնասիրութիւններս զիս արդէն առաջնորդած էին այդ տեսողութեան, եւ կը զգայի Նուպարի այդ գատողութեան բացարձակ ճշգրտութիւնը: Իր անձին ազգեցութիւնը, իր խօսքերը, իր գաղափարին ընդլայնումը մեծապէս զօրացուցին իմ մէջս այդ տեսնելու եղանակը: Բայց զգալու եղանակին մէջ տարբերութիւն մը ունէինք, որ բնական էր, եւ որ պատճառ կ'ըլլար որ երբեմն վիճէինք իրարու հետ: Ընդունելով հանդերձ որ Չմշկիկ մը կամ Պրոյերեսիոս մը մարդկային պատմութեան մէջ աւելի ազաշնակարգ զիրք մը ունի, իմ սիրտս աւելի կը մղուէր Աշոտ ողորմածի մը, Լեւոն Ա.ի մը կամ Եղիշէի մը եւ Նարեկացոյ մը, որոնք, թէեւ խոնարհ շրջանակի մէջ, եւ ընդհանուր մարդկութենէն անգիտուած, կատարած էին սակայն դեր մը աւելի դժուարին ու ինքնատիպ, թերեւս աւելի գեղեցիկ, եւ որոնք ինչ, զուտ հայ եղած էին:

Նուպարի մեծ բաղձանքն էր տեսնել Հայոց պատմութիւն մը գրուած այնպէս ինչպէս ինքը կ'ուզէր: Այն Հայոց պատմութիւնը զոր գիտեինք, սուտ մեծութիւններով, պակասներով, սխալներով եւ տգիտութիւններով ակադճուն, կը զայրացնէր զինքը: Գիտական աշխատութիւն մը կ'ուզէր, որ երեւան հանէր Հայուն նշանարիս դերը աշխարհի մէջ, անոր կատարած իրական գործը հայ հողի վրայ ու օտար երկրի մէջ: Մինչեւ վերջին վայրկեանը, կը կրկնէր, անկեղծ ու անձկագին սպասումով մը. «Ո՞վ պիտի գրէ իմ ուզած Հայոց պատմութիւնս»:

Մեծ յուզումներու, մեծ խանդավառութիւններու կարողութիւնը ունէր, ընդհանրապէս ա՛յնքան հազուադէպ մեր ոչ մէկ բանէ զարմացող, ամէն աղէտքի առջեւ անհոգ Հայերուն մէջ: Հայ նահատակներուն յիշատակին Հ. Շաումրթանի ձեռքով Բարիդի Սէնթ-Քլոթիտ եկեղեցւոյն մէջ կազմակերպուած հանգիստը պատարագին օրը, զինքը տեսայ ինքրմէ ելած, իր մեծ աղուոր բարի աչուրները արցունքով լեցուն, ու այդ հսկայ ծերունին գնաց Փրանսացի կրօնաւորին ձեռքը համբուրեց, իր երախտագիտութիւնը յայտնելու համար: —Ու մինչդեռ Հայերէ շատեր եւ ոչ իսկ կը հետաքրքրուին այսօր գիտնալ թէ ի՞նչ քաջութիւններ

գործուեցան Չէյթունի վերջին վեցամսեայ պայքարին մէջ, Նուպար հպարտ հաճոյք մը կը զգար քսան անգամ պատմել տալով Ապահին ու Աղասիին, որ ականատես եւ գործակից եղած էին, այդ յեռնական դիւցադներգութեան բոլոր մանրամասնութիւնները. «Երիտասարդութիւնս վրաս կուգայ, կ'ըսէր, երբոր Ապահը Չէյթունի երգերը կ'երգէ ինձի»: Եւ ինքն է որ կամք յայտնեց որ Աղասիի ծանօթագրութեանց վրայէն Ֆրանսերէն շարագրեմ Չէյթունի պատմութիւնը, որ հրատարակուեցաւ իր ծախքովը:

Ղարաբաղի Նուպարներէն սերած էր, եւ ափիկա կը կրկնէր սիրուն գոռոզութեամբ մը: Չամչեանին մէջ իրեն ցոյց տուած էին էջ մը ուր իր նախահայրներուն քաջութիւնները կը յիշատակուէին: Բերել տուաւ Ղարաբաղի վրայ հրատարակուած հայերէն բոլոր գրքերը. փափաք ունէր իր տոհմին պատմութիւնը գրել տալու: Կարծեմ նոյն իսկ յանձնած էր երիտասարդի մը այդ աշխատութեան հողը, բայց հիււանդութիւնը վրայ եկաւ, ու իր այդ բարեպաշտ ծրագիրը անկատար մնաց:

Գծնդակ ու տրտում վախճան մը եղաւ վախճանը այդ մարդուն: Հիւանդութենէն առաջ, վհատութիւնը զինքը պաշարած էր: Յունական պատերազմէն յետոյ, երբ Եւրոպան թողուց որ թուրքը՝ անխմատ ու լիբր յաղթանակով մը ուժ վերստանայ, Նուպար յուսահատ ու երկչոտ տրամադրութեան մը մէջ ինկաւ: Ատի իրեն ապացոյց մը թուեցաւ որ Եւրոպան ոչինչ պիտի ընէ Արեւելքի քրիստոնէաներուն համար, եւ զգաց որ թուրքին գոռոզութեան եւ զօրութեան այդ արծարծմամբը վտանգը տասնապատիկ մեծցած էր Հայերուն ալ գլխուն: Հաւատքի, խանդի յետին նշոյլը մարեցաւ իր մէջը. մեծ խղճահարութիւն մը, մեծ վախ մը, մեծ գթութիւն մը զինքը տարամերժաբար պատեցին. «կը պաղատիմ, կ'ըսէր, յորդորեցէք Հայերուն որ ոչինչ ընեն, մեռած ձեւանան. ապա թէ ոչ կը փճանան բացարձակապէս»: Եւ իր ոչինչը այս անգամ ո եւ է վերապահութիւն չունէր: Եւ ոչ իսկ ուզեց որ Հայութիւնը ծանօթացնող գրքերու հրատարակութիւնը շարունակուի, ինք որ միշտ խանդավառօրէն համակիր եղած էր այդ գաղափարին: Մինչեւ անգամ նեղսրտութիւն կը զգար ուսանողներու օգնելու: «Հրատարակութիւնները կրնան գրգռել թուրքը, կ'ըսէր, պէտք է ոչ մէկ պատրուակ տալ»: Չուզեց նոյն իսկ ո եւ է աջակցութիւն ընել Անահիտի հիմնարկութեանը: Լրագիրները կը

նկատէր իբր գրգռման պատճառ մը , եւ չէր ուզեր պատասխանատուութեան բաժին մը ունենալ : Բնականաբար համակարծիք չէի կրնար ըլլալ իրեն՝ այդ ծայրայեղ վնասութեան մէջ , բայց կարելի չէր չյարգել իր զգացումը , որ յառաջ կուգար պերագոյն խղճահարութենէ մը : « Հիմա , կ'ըսէր , ուրիշ բան չկայ ընելու բայց եթէ խեղճերուն օգնել , հազարաւոր Հայեր աւնօթի են , հազարաւոր որբեր կան , աղքիւն կեանքը վտանգի մէջ է . ուսանողներէ եւ գըրքերէ առաջ անո՛նց պէտք է մտածել » : Եւ իր ամբողջ առատաձեռնութիւնը կեդրոնացուց , վերջին օրերուն , իր կարօտ ազգակիցներուն օգնելու :

Հիւանդութիւնը աւարտեց ինչ որ վնասու-
թիւնը սկսած էր : Այդ զուարթ ու կրակոտ մարդը յանկարծ ընկղմեցաւ պաղ ստուերի մը մէջ : Տարի մը , սպասեց , ցաւերու մէջ , մահուան : Միտքը պայծառ մնացած էր , եւ իր վիճակին գիտակցութիւնը զինքը ահոելի կերպով չարչարեց : Հազիւ կարող խօսելու , իր միակ բառը ամէն անգամ որ զիս տեսնէր , « Ի՞նչ լուր Պոլսէն » հարցումն էր : Կը սպասէր միշտ ընդհանուր ներումի մը : Լուրերը , զոր ունէի տալու , տխուր էին : Եւ գլուխը կախ , մարեցաւ ու հատաւ խեղճ մեծ մարդը , պաշարուած իր սիրական ընտանիքովը , որ այդ կսկծալի ոգեւարը անուշցուց՝ դիւցազնական գորովով մը :

Մենք պիտի չմոռնանք այդ դէմքը , եւ անոր ազնուական ու կաթողին բարութիւնը : Պիտի չմոռնանք այդ ընտրուած հոգին , որ ուժ մըն էր՝ գաղափարի մը անբաժանելի կերպով կապուած : Պիտի յիշենք իր ալեւոր « ընկեր » ինքնազգատելի խօսակցութիւնը , անթոյն ու պատկերալից սրամտութեամբ մը լուսաւոր , հասուն մտածումով մը ամրացած , արեւելցի զրուցաբանի համեղ ու թեթեւ շնորհովը տոգորուն : Իր պայծառ տեսողութիւնը կեանքի , իր հաւատքը արդարութեան յաղթանակին , իր գործնական ու յստակ ըմբռնումը ազգերու ճակատագրին , իր բովանդակ խորին ու պարզ մտածողութիւնը պիտի ապրին մեր մէջը , անջնջելի : Եւ իր յիշատակին լաւագոյն յարգանքը ընծայած պիտի ըլլանք , եթէ կարենանք ծաւալել մեր մէջը բարեբար ազդեցութիւնը այդ Իմաստունի ձայնին , որ , անկեղծ , հանդարտ ու քաղցր շեշտով մը , մէկ քանի որոշ ու բեղմնաւոր ճըշմարտութիւններ աւանդեց մեզի :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Վիքթոր Պէռառ , ծանօթացած ըլլալով Անահիտի մէկ քանի յօդուածներուն , մեզի զըրկած է , հրատարակուելու համար , հետեւեալ նամակը : Մեր խնդիրը , ու մեր դժբաղդութիւնները մեզի չափ , եթէ ոչ մինչեւ աղեկ գիտցող , մեր դատին յաջողմանը մեզի չափ ցանկացող օտար անձնաւորութեան մը այս մէկ քանի տողերը՝ Հայոց ուղղուած՝ կը կարծենք որ կրնան մեր հասարակութեան վրայ գործել ազդեցութիւն մը այնքան օգտակար որքան կազդուերիչ : Ոչ ոք մոռցած է այն կարեւոր մասնակցութիւնը զոր Պ. Պէռառ բերաւ Ֆրանսայի մէջ հայկական խնդիրը ծանօթացնելու գործին . իր յօդուածները Ռըյիւ սը Բառիին մէջ , զոր յետոյ հրատարակեց Սուրբանիկ Բաղդասարեանի տխրոտուած գրքի մը ձեւով , կաշտուած մամուլի մը եւ հայատեաց կառավարութեան մը ընդդիմութեանը հակառակ , վերջնապէս արթնցուցին ի նպաստ Հայոց Ֆրանսայի հանրային կարծիքը , որ արդէն սկըսած էր լուսաւորուիլ հայր Շառմըթիանի , Սէվոնի , Բլէմանսոյի եւ ուրիշներու հրատարակութիւններէն : Պէռառ անձամբ Պոլիս գացած եւ 96ի կոտորածէն յետոյ , հայկական թաղերուն , մանաւանդ Հասգիւղի , տեսարանը աչքովը տեսած էր . իր նկարագրութիւնը սարսափի ու զայրոյթի կենդանի աղաղակ մըն էր , եւ աղաղակը լսուեցաւ : Այսօր , Ֆրանսա ճըշմարիտ գոյնովը տեսած ու հասկցած է հայկական խնդիրը . եւ եթէ պարագաները բերեն որ Եւրոպա մեզմով զբաղել ուղէ , Ֆրանսայի հանրային կարծիքը սրտանց մեզի հետ պիտի ըլլայ : Կրեաէի դէպքերուն ժամանակ , Պէռառ Կրեաէ գնաց եւ նոյն դերը կատարեց Կրեաացիներուն համար : Պէռառի ազդեցութեան տակ , Հավիս իր հոյակապ ուսումնասիրութիւնը հրատարակեց Ռըյիւ սը Բառիին մէջ՝ հարուածելու համար Ֆրանսական կառավարութեան ոճրագործ ընթացքը Արեւելքի գործերուն մէջ : Անկէց ի վեր , Կրեաէի խնդիրը , բազմակնճիւ պատճառներու երջանիկ արտագրոյթով մը , լուծում գտաւ , եւ թերեւս օր մը յայտնուի թէ ո՛ր աստիճանի կարեւոր եղաւ այն դերը զոր Ռըյիւ սը Բառիին կատարեց Ֆրանսայի արեւելեան քաղաքականութեան փոփոխման մէջ : Այս մէկ քանի ծանօթութիւնները տալ հարկ համարեցինք , որպէս զի մեր ընթերցողները ըմբռնեն նշանակութիւնը այն անձին որ այս բարեկամական խորհուրդները կը հաճի տալ մեզի :

Mon cher Tchobanian,

Je pense comme vous que l'heure présente peut être décisive pour le peuple arménien. Après la honteuse indifférence des gouvernements et des nations européennes, voici que vos souffrances commencent à être connues de tous et, dans tous les cœurs, le nom de votre malheureux peuple se grave, indélébile, parmi les noms des martyrs. Personne parmi les gouvernants n'ose plus répéter aujourd'hui les abominables paroles que nous avons entendues autrefois de la bouche même de nos ministres, — « Je ne puis prendre au tragique ces affaires arméniennes » —, et la presse elle-même hésiterait à ramasser l'argent turc que, pendant tant de mois, elle a accepté contre vous, pour vous calomnier ou pour se taire. Je suis sûr que vous pouvez compter aujourd'hui sur les sympathies de l'opinion, sur la conscience publique, et je suis sûr aussi que vous pouvez escompter l'appui des gouvernements.

Mais je pense, comme vous aussi, que, de votre part, la moindre faute pourrait encore annihiler tous les bons vouloirs. Les gouvernements sont défiants les uns des autres. L'opinion se laisse effrayer par les spectres d'anarchie et de révolution. Il ne faut pas qu'en ce moment vous fournissiez le moindre prétexte contre vous. Vous le dites avec raison : « L'agitation n'est pas de l'action », et l'on ne fait plus rien avec cette idée toute fétichiste qu'il faut du sang humain pour fléchir la destinée et fonder les œuvres nouvelles. Votre sang, vous l'avez gaspillé déjà ! le meilleur de votre sang, les meilleurs de votre race, vous les avez jetés sous les griffes du monstre et vous voyez aujourd'hui que le sacrifice était vain. Car les dieux d'autrefois pouvaient exiger des holocaustes; mais les dieux d'aujourd'hui, — je veux dire la Raison et le Progrès, —

Միրելիս Չոպանեան ,

Համակարծիք եմ ձեզի հետ թէ ներկայ ժամը կրնայ վճռական ըլլալ հայ ժողովրդին համար : Եւրոպական կառավարութեանց եւ ազգերու ամօթալի անտարբերութենէն յետոյ , ահա ձեր տառապանքները կը սկսին ծանօթ դառնալ ամենուն , եւ , ամէն սրտերու մէջ , ձեր դժբաղդ ժողովրդին անունը մարտիրոսներու անուններուն կարգը՝ անջնջելի կը գրոշմուի : Կառավարական մարդոցմէ ոչ ոք այլեւս կը համարձակի կրկնել այսօր այն դարշելի խօսքերը զոր ուրիշ ատեն լսեցինք նոյն իսկ մեր նախարարներուն բերնէն՝ « ես չեմ կրնար ողբերգական գոյնով մը տեսնել հայկական խընդիրը » . եւ մամուլն անգամ պիտի վարանէր հիմա գրպանել թուրք զրամը , զոր ամիսներով ընդունեցաւ ձեզի դէմ , ձեզ զրպարտելու կամ լուռ կենալու համար : Ապահով եմ որ այսօր կրնաք վստահ ըլլալ հասարակաց կարծիքին համակրութեան , հանրային խղճին վրայ , եւ ապահով եմ նաեւ որ կրնաք այժմէն հաշուի գրնել կառավարութեանց աշակցութիւնը :

Բայց նոյնպէս համախոհ եմ ձեզի հետ թէ ձեր կողմէն ամենափոքր սխալ մը կրնայ փճացնել բոլոր բարի կամեցողութիւնները : Կառավարութիւնները կասկածոտ են իրարմէ : Հանրային կարծիքը տրամադիր է խրտչելու անիշխանականութեան եւ յեղափոխութեան ուրուականէն : Պէտք չէ որ այս վայրկեանիս ամենափոքր պատրուակ մը մատակարարէք ձեզի դէմ : Իրաւամբ կ'ըսէք թէ «խլրտումը գործունէութիւն չէ» (1) , եւ այսօր այլեւս ոչինչ կը կատարուի այդ բոլորովին ֆէթիշապաշտ գաղափարով թէ մարդկային արիւն պէտք է ճակատադիրը ողորդելու եւ նոր գործեր հիմնելու համար : Ձեր արիւնը դուք մտնեցիք արդէն . ձեր արիւնին է՛ն ազնիւ մասը , ձեր ցեղին լաւագոյն զաւակները հրէշին ճիրաններուն տակ նետեցիք , եւ այսօր կը տեսնէք թէ զոհաբերութիւնը ընդունայն էր : Որովհետեւ երբեմնի աստուածները կրնային մարդազոհ պահանջել , բայց այսօրուան աստուածները — ըսել կ'ուզեմ Բանականութիւնը եւ Յոռաշղիմութիւնը — միմիայն կը պահանջեն յարստեւ աշխատանք , համբերատար եւ հաշուած ճիգ մը , անընկճելի հաւատք մը եւ անմահ արդարութեան վրայ յոյս : Դուք ուժը չունիք , բայց իրա-

(1) «Անահիտ», Թիւ Բ., էջ 84

demandent seulement du travail persévérant, un effort patient et calculé, une foi indomptable et l'espoir dans la justice immortelle. Vous n'avez pas la force; mais vous avez le droit pour vous. N'employez donc pas les armes inutiles de la force; ne renouvelez pas les comédies de la violence. Vos sacrifices n'ont servi qu'aux autres. Faites que votre sagesse vous serve à vous-mêmes. Vous savez, mon cher ami, que quoique vous fassiez, je serai toujours avec vous et que j'excuse vos folies parce que j'ai partagé vos souffrances. Mais ne faites rien, je vous en supplie, qui puisse diminuer encore ce qui reste de votre nation et de ses espérances, et croyez que tous les véritables amis des Arméniens pensent comme moi. Tâchez, par une union fraternelle entre vous, de montrer à l'Europe que vous êtes un peuple, et tâchez, par une conduite réfléchie, de montrer que vous êtes un peuple civilisé, capable de raison et de conduite.

En Crète, croyez bien que ce ne sont pas les pallikares et les coups de fusil qui ont eu le plus grand rôle dans la fondation du régime nouveau. Ce sont les sages conseils de l'Assemblée crétoise au peuple crétois qui ont gagné le bon vouloir des Amiraux et des Puissances. C'est la déférence de cette Assemblée aux désirs de l'Europe, c'est l'immuable patience de tout ce peuple, c'est sa sagesse et, pendant deux années, son abstention de toute mesure violente, qui, pacifiquement, sans holocaustes et sans massacres, ont été les véritables agents du succès. Que cet exemple des Crétois vous serve de leçon!

Songez aussi que ces mêmes Crétois ont réussi pour avoir su gagner le bon vouloir de toutes les Puissances. Du moins, si toutes n'ont pas travaillé pour eux, aucune n'a travaillé contre eux. Ni par leur conduite, ni par leurs paroles, ils ne s'étaient aliéné le bon vouloir de l'une d'entre elles. Et vous devez encore réflé-

ւունքը ձեր կողմն է: Մի՛ գործածէք ուրեմն ուժին անօգուտ զէնքերը. բունն միջոցներուն կատակերգութիւնը մի՛ վերանորոգէք: Ձեր գոհողութիւնները ուրիշներուն օգտակար եղան: Ջանացէք որ ձեր իմաստուն վարմունքը ձեզի միայն օգտակար ըլլայ: Գիտէք, սիրելի բարեկամս, թէ, ինչ ալ ընէք, միշտ ձեզի հետ պիտի ըլլամ եւ թէ կ'արդարացնեմ ձեր յիմարութիւնները վասն զի ձեր տառապանքները ձեզի չափ զգացած եմ: Բայց ոչինչ ըրէք, կը պաղատիմ, որ կարենայ աւելի նուազեցնել ինչ որ կը մնայ ձեր ազգէն եւ իր յոյսերէն, եւ հաւատացէք որ Հայոց բոլոր ճշմարիտ բարեկամները ինծի պէս կը մտածեն: Ջանացէք, ձեր միջեւ եղբայրական միութեամբ մը, Եւրոպային ցուցնել թէ դուք ժողովուրդ մըն էք, եւ ջանացէք, խոհական ընթացքով մը, ցուցնել թէ քաղաքակիրթ ժողովուրդ մըն էք, բանիմաց եւ ինքզինքը զեկավարել զիտցող:

Կրետէի մէջ, կը վստահացնեմ զձեզ, բաղիֆարներն ու հրացանի հարուածները չեն որ կատավարական նոր դրութեան հաստատման մէջ մեծագոյն դերը խաղացին: Կրետական ժողովին իմաստուն խորհուրդներն են Կրետացի ժողովրդին ուղղուած, որ ծովակալներուն եւ պետութիւններուն բարի կամեցողութիւնը վաստակեցան: Այդ ժողովին յարգանքը Եւրոպայի բաղձանքներուն, այդ ամբողջ ժողովրդին անդրդուելի համբերութիւնը, զգաստութիւնը, երկու տարի շարունակ ամէն բունն միջոցէ ձեռնպահութիւնը, ասոնք են որ, խաղաղականօրէն, առանց մարդազոհի եւ առանց ջարդի, յաջողութեան ճշմարիտ ազդակները եղան: Թող Կրետացիներուն այս օրինակը դաս ըլլայ ձեզի:

Խորհեցէք նաեւ թէ այդ նոյն Կրետացիները յաջողեցան որովհետեւ պիտցան շահիլ բոլոր պետութիւններուն բարի կամեցողութիւնը: Գոնէ, եթէ բոլորն ալ չաշխատեցան անոնց համար, ոչ մէկը աշխատեցաւ անոնց դէմ: Ոչ իրենց վարմունքով, ոչ իրենց խօսքերով, պետութիւններէն մէկուն բարի կամեցողութիւնը չէին հեռացուցած իրենցմէ: Եւ այս օրինակին վրայ ալ խորհրդածելու էք: Անցեալի հետքեր կան զոր ձեր յիշատակներէն ջնջելու էք: Թուրքն է որ ձեզ Պերլինի վեհաժողովը առաջնորդեց: (1) Թուրքն է որ ձեզի թելադրեց կաս-

(1) Պ. Վերքնոս Պէրա, որ ներքնապէս գիտէ Պերլինի Վեհաժողովին պատմութիւնը, կը հաստատէ «Անահիտ» ի անցեալ Թուրքի հրատարակուած յօդուածին մէջ մեր երեւան բերած յայտնութիւնը: Պ. Պէրա առդէն այդ գաղափարը մէջտեղ նետած եւ զայն վճարար շեշտած էր իր «Սուլթանին քաղաքականութեան» գրքին մէջ:

chir sur cet exemple. Il est des vestiges du passé qu'il faut arracher de vos souvenirs. C'est le Turc qui vous a conduits au Congrès de Berlin ; c'est le Turc qui vous a soufflé certaines paroles de défiance et de haine... Croyez-moi, la défiance et la haine sont de trop lourds fardeaux pour vos épaules meurtries. Sans renoncer à votre foi nationale, à vos préférences intimes, à votre amour de l'Arménie d'abord, acceptez et recherchez l'amitié de tous ; ne provoquez surtout l'hostilité de personne.

Ces pensées me sont venues en lisant vos derniers articles de l'«Anahit». Vous me pardonnerez de vous les avoir communiqués un peu longuement peut-être. J'ai cru que le seul service à vous rendre, à vous Arméniens, était de vous parler en toute franchise. Je n'ai pas la moindre prétention à vous donner des conseils. Mais j'ai toujours eu la prétention de prendre ma part de vos douleurs et de vos espérances, et j'ai eu quelque joie à rencontrer sous votre plume les idées qui depuis longtemps étaient miennes, qui, seules, je crois, à l'heure présente, peuvent servir la cause de votre peuple et rapprocher l'échéance inévitable où tout doit se payer, les deuils nationaux et les deuils privés, les fusillades et les massacres, les attentats publics et les machinations secrètes, où tout aussi sera récompensé, l'héroïsme et la folle bravoure, mais surtout la sagesse et la froide raison. Croyez, mon cher Tchobanian, à mon fidèle et cordial dévouement.

VICTOR BÉRARD

Paris, 3 janvier 1899

կածանքի եւ ատելութեան մէկ քանի խօսքեր... Հաւատացէք ինձի . կասկածանքը եւ ատելութիւնը շատ ծանր բեռեր են ձեր ճիւղած ուսերուն համար : Առանց հրաժարելու ձեր ազգային հաւատքէն , ձեր ներքին նախընտրութիւններէն , ու նախ եւ առաջ Հայաստանը սիրելու ձեր ձգտումէն , ընդունեցէք եւ հետամուտ եղէք ձեռք ձգելու ամենուն ալ բարեկամութիւնը . մանաւանդ , ոչ մէկուն հակառակութիւնը մի՛ զրգոէք :

Այս մտածումները ունեցայ կարդալով Անահիտի ձեր վերջին յօդուածները : Ներեցէք ինձի զանոնք թերեւս քիչ մը երկարօրէն ձեզի հաղորդած ըլլալուս : Կարծեցի թէ ձեզի՝ Հայոց դատուցուելիք միակ ծառայութիւնը , ձեզի բացարձակ անկեղծութեամբ խօսիլն էր : Ո եւ է յաւակնութիւն չունիմ ձեզի խրատ տալու : Բայց միշտ յաւակնութիւնը ունեցած եմ ձեր ցաւերուն ու ձեր յոյսերուն մասնակից ըլլալու , եւ ուրախ եղայ ձեր գրչին տակ հանդիպելով այն գաղափարներուն որոնք շատոնց իմիներս են , եւ որոնք , միայն , կարծեմ , այս վայրկեանիս , կրնան ձեր ժողովրդին դատին ծառայել եւ մօտեցնել անխուսափելի պայմանաժամը ուր ամէն բան պիտի հատուցուի , ազգային սուգերը եւ անհատական սուգերը , հրացանաձգութիւններն ու կոտորածները , հանրային ուժիրները եւ գաղտնի մեքենայութիւնները , ուր նաեւ ամէն բան պիտի վարձատրուի , զիւցազնութիւնը եւ յիմար քաջութիւնը , բայց մանաւանդ իմաստութիւնը եւ ցուրտ բանականութիւնը : Վստահ եղէք , սիրելիս Չօպանեան , իմ հաւատարիմ ու սրտագին անձնուիրութեանս :

Բարիկ , 3 յուն . 1899

Վ. Բ. Բ. Պ. Ե. Ա. Ռ.

ԳԻՏԱԿԻՑ ՁԱՆՔԵՐ

Ուրախութեան ու գոհունակութեան բազմաթիւ արտայայտութեանց հետ որ մեզի ուղղուեցան այն հաւատաւոր խօսքերուն համար զոր հնչեցուցեր էինք Անահիթի առաջին էջերուն մէջ, ընդունեցանք միանգամայն մէկ քանի զիտողութիւններ տարակուսող ու վհաս հոգիներէ, որոնք մեզ կը կարծէին անձնատուր ինքնապատիր լաւատեսութեան մը: Մենք մեկնած էինք Իրականութեան սերտ ուսումնասիրութենէ մը, հասնելու համար այդ եռանդի ու վստահութեան շեշտին. եւ հպարտութեամբ կը նկատենք որ իրականութիւնը օրէ օր աւելի ուրոշ ապացոյցներով կը հաստատէ ինչ որ մատնանիչ ըրինք: Անվիճելի իրողութիւն մըն է որ հանրային գործունէութեան կրակը այսօր ասանապատիկ աւելի վառ է հայ ցեղին մէջ՝ ամէն տեղ՝ քան վերջին դէպքերէն առաջ: Ոչ միայն վառ, այլ, ինչ որ այլապէս ուշագրաւ է եւ բերկրառիթ, աւելի գիտակից, աւելի որոշ, աւելի կանոնաւոր: Ոչինչ կ'անտեսանանք մեր ընդունած ծանր վէրքերէն, եւ գիտենք որ անոնք մեծ մասամբ մինչեւ այսօր կը շարունակեն արիւնիլ. ընդհակառակն, մենք առաջիններէն եզանք որ ընդհանուր ապշեցուցիչ անտարբերութեան մը մէջ, մեր կրած կորուստին համար կսկիծ յայտնեցինք. գիտենք նաեւ թէ նոյն իսկ այս վայրկեանիս Բարձր Հայաստանի մէջ ի՞նչ զարհուրելի կացութեան մը ենթարկուած են մեր ազգակիցները: Բայց մենք անոնցմէ ենք որ չեն սիրեր ու նոյն իսկ չեն ներեր որ ազգ մը իր ցաւերը ողբալով շատանայ. մենք մեզի նշանաբան դրած ենք ճշգրիտ ծանօթութիւն մը կազմել մեր կացութեանը, զգուշանալ հաւատարմապէս մահացու վհատութենէն եւ վտանգաւոր պատրանքներէն, պաղ արիւնով քննել անցեալին ու ներկային մեր սխալները՝ միմիայն զանոնք ուղղելու նպատակով, եւ նոյն ատեն, գնահատել ամէն անհատական կամ հաւաքական ճիգ որ նպատակ ունի մեր ցեղին բարձրացմանը նպաստել, վերջապէս, հեռու սմբած անշարժութիւն մը ու վախկոտ զազար մը քարողելէ, շեշտել անհրաժեշտ պէտքը գործունէութեան, երէկուան սխալներէն բացարցակապէս դերձ, գիտակից, հաշուուած, զրական գործունէութեան մը: Կը յուսամ որ ոչ ոք այլ եւս պիտի կրնայ սխալ մեկնել «գործունէութիւն» բառս, եւ անոր մէջ տեսնել, օրինակի համար, Պոլիս նոր ցոյցի մը կամ Վան նոր հրրոսարչաւի մը տեսչը. այդ մասին, բաւական յստակ կերպով արտայայտած եմ մտածելու եզանակս: Գործունէութիւն ըսելով կը հասկընամ այն բոլոր ջանքերը, զոր ըրինք արգէն, զոր ընելու վրայ ենք, եւ զոր պէտք է շարունակենք եւ բազմապատկենք, այն բոլոր ջանքերը որոնք նպատակ ունին ընդարձակել մեր բարոյական զարգացումը, ամրապնդել միութիւնը մեր մէջ, մեզ ճանչցնել օտարներուն,

քաղաքակիրթ պետութեանց ուշադրութիւնը հրաւիրել մեր ժողովրդին վրայ, համակրութիւնը չափիլ մեր ճակատագիրը բարելաւելու կարող ժողովուրդներուն, ջանքեր որոնք անհրաժեշտ են, որովհետեւ եթէ աններելի է որ քանի մը անհատներ, առանց արդիւնքին ապահով ըլլալու, ձեռնարկեն գործունէութիւն մը որ հազարաւորներու դժբաղդութեան պատճառ կըրնայ ըլլալ, նոյնչափ աններելի է որ ազգ մը, իր սխալներէն եւ աղետքներէն վհատած, անշարժ մնալու որոշմանը յանգի, իր յոյսերէն, հաւատքներէն, խանդերէն ձեռք քաշելու ինքնասպան եզրակացութեանը հասնի: Սխալ գործունէութեան մը դիմացը, պէտք է որ ուղիղ գործունէութիւն մը կանգնի: Եւ ուղիղ գործունէութիւնն է որ, շատ աւելի ազդեցիկ քան վայրյոյթի ճիչերն ու դժգոհութեան արտայայտութիւնները, պիտի յաջողի չէզոքացնել սրխալ գործունէութիւնը:

Այն բոլոր երեւոյթներէն որոնք յառաջ եկան վերջին դէպքերէն ի վեր, ամենէն կարեւորներէն մէկը ձգտումն է զոր մեր ցեղը կը ցուցնէ ամէն տեղ, հայ հողի վրայ ինչպէս օտար երկրի մէջ, կազմակերպուած մտաւորական կեանք մը ստեղծելու իրեն: Յիշեցինք թրքական Հայաստանին, մասնաւորապէս Փոքր-Հայքի եւ Կիլիկիոյ մէջ, դպրոցական, ինչպէս անտեսական, վերանորոգման ջանքերը: Այս օրերս իսկ, Պոլիս, նոր հաստատուած ամնաթերթ մը, դրական ու կազմ մըտքով մը վարուած, իրեն ուղղգիծ կը նշանակէ գիտական ոգին զարգացնել Հայոց մէջ եւ արդէն կը ներկայացնէ շատ գործնական ծրագիր մը մեր դպրոցական դրութեան բարենորոգման: Կիպրոս, հայ կեանքի երկու բոյն կը պատրուարէ այսօր, Նիքոսիայի հայկական որբանոցը, որ տիպար արհեստանոց-դպրոց մը ըլլալու սահմանուած է, եւ Լարնաքայի արհեստագործական հայ փոքրիկ գաղութը՝ հաստատուած սկովտիացի հայասէր գիտնական բրօքէսօր Կիտէսի ձեռքով, — երկու մեծապէս շահեկան հիմնարկութիւններ, որոնց մասին աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք ապագային: Պարսկահայաստանի մէջ, բարոյական զարթում մը կը ծագի: Պարսկահայերը մինչեւ հիմա իրենց վիճակուած նպաստաւոր ու թոյլատու կացութենէն օգտուած էին միմիայն նիւթական բարեկեցութիւն մը ձեռք ձգելու համար, այն ալ սահմանափակ իտէլալով մը. մտաւորական ու ազգային շարժումը որ Թրքահայոց եւ Կովկասի Հայոց մէջ դարուս սկիզբէն ի վեր արժարժուեցաւ, արձագանգ չէր ունեցած հոն: Այսօր, ցնցուած իրենց թրքահայ եղբայրներուն դժբաղդութիւններէն, թերեւս նոյն իսկ մտարկուած այն հաւածանքներէն որոնց իրենք ալ սկսած են ենթարկուիլ ատենէ մը ի վեր, Պարսկահայերը անշուքին կը բանան, կը փորձեն ելլել ասիական անշարժութենէն, մտաւորական գործու-

նէութիւն մը կ'ուրուագծեն , կը սենչան հա-
ղորդակից ըլլալ հայ ժողովրդին ընդհանուր բա-
րոյական կեանքին : Վերջին դէպքերուն հետե-
ւանքով Պոլիսէն ու Կովկասէն Պարսկաստան
փոխադրուած քանի մը Հայեր են որ նպաս-
տած են այս գեղեցիկ երեւոյթին կազմաւոր-
մանը : Փափաք կը յայտնուի դպրոցներ հաս-
տատել , որոնք կրթական ճշմարիտ հաստատու-
թիւններ ըլլան եւրոպական իմաստով . եւ ար-
դէն հիմնուած է , 1898ի մարտէն ի վեր , լսա-
բանական ընկերութիւն մը , որուն ծրագրին
ստացանք այս օրերս :

Միեւնոյն ատեն ընդունեցանք , Աղեքսանդ-
րիայէն , ծրագրիւր հայկական Մատենադարանի
մը , նոյնպէս 98ի մարտին հաստատուած , եւ
որ ահա կը սկսի իրագործման ճամբուն մէջ
մտնել :

Կը կարգանք վերջապէս , Տիգրիսի մէջ , թէ
Նիւ-Եորքի Հայերը՝ խուճեք մը հայասէր ամերի-
կացիներու հետ՝ ամերիկո-հայկական ընկերակ-
ցութիւն մը կազմած են . միանգամայն կ'իմա-
նանք թէ Պոսթոնի Հայերը հիմնած են ուսում-
նական ակումբ մը , որ նպատակ պիտի ունե-
նայ դաստիարակել տեղական հայ հասարակու-
թիւնը , զբամական հաւաքումներով օգնել թըր-
քական Հայաստանի կրթական գործին , եւ իր
գործունէութիւնը հետզհետէ ընդարձակելով՝
Ամերիկայի զանազան քաղաքներուն հայ գաղ-
թականութեանց միջեւ միութեան կապ մը
զանալ :

Հաճոյքով կ'արձանագրենք այս իրողութիւն-
ները , եւ , մաղթելով որ մեր ժողովուրդը սըր-
տանց խրախուսէ այդ կարեւոր ձեռնարկները ,
կ'ուզենք անոնց առթիւ ներկայացնել մէկ քանի
խորհրդածութիւններ :

Նախ , ինչ որ բոլոր այդ ձեռնարկներուն մէջ
ուշադրութիւն պէտք է գրաւէ , կանոնաւոր կազ-
մակերպութեան մը հանգամանքն է զոր ունին :
Մինչեւ վերջին ատենները , Ամերիկա , Եգիպ-
տոս կամ նոյն իսկ Պարսկաստան , այս կարգի
մանր մունր փորձեր եղած էին արդէն , բայց
հիմունքի եւ կարգաւորութեան պակասէն , ա-
մէնքն ալ կարճատեւ գոյութիւն մը ունեցած
էին : Այս նոր ջանքերը խորհրդածուած , հա-
մոզուած , գիտակից ջանքեր են , եւ ապահով
ենք որ պիտի յաջողին տեւական ըլլալ :

Պարսկահայոց լսարանական ընկերութիւնը ,
որ հաստատուած է ի Դաւրէթ , իրեն նպատակ
կը գծէ՝ «Ղալայի կամ Լիլաւայի դպրոցներուն
սրահին մէջ հայ հասարակութեան տալ ձրի
զաստիարակութիւններ , զանազան շահեկան եւ
օգտակար նիւթերու վրայ , գիտական , գրա-
կան , առողջապահական , պատմական , ման-
կավարժական , եւլն » :

Կանոնագիրը որոշ է եւ գործնական . ընկե-
րութիւնը ոչինչ ունի յարուան ու վասնգիշ .
իր նպատակը այնչափ զրական է որչափ գեղե-
ցիկ . իր լեզուն զերծ է իմաստակ ու վնասա-
կար խանդավառութիւններէ . ընկերութիւնը
արդէն ունի բազմաթիւ անդամուհիներ եւ ան-

դամներ . մինչեւ հիմա երեք բանախօսութիւն
տեղի ունեցած է լսարանին մէջ , եւ կանոնա-
գրին հետ հրատարակուած է ամբողջ ցուցակ մը
բանախօսութեանց , որոնց մէջ կը գտնենք ոչ
թէ զատարկ բացագանչութիւններ , այլ ժողո-
վրդին միաքը հրահանգելու , զայն կարեւոր
ծանօթութիւններով ճոխացնելու նկրտող ու-
սումնասիրութիւններ , ինչպէս՝ Պարսկահայոց
անցեալը , ներկան եւ ապագան , Մանկանց
կրթութիւնը՝ մտաւորական , բարոյական եւ
մարմնական , Գիւնեշիւնութիւն եւ գիւնի օ-
գուսն ու վնասը , Նախեկի մարտիրոսութիւնը ,
եւլն . եւլն : Համախմբել Պարսկահայերը մտա-
ւորական կեդրոնի մը շուրջը , հայ լեզուին
կենսականութիւնը արժարծել անոնց մէջ , եւ-
րոպական գաղափարներու հետ չփման մէջ զը-
նել հայութեան ամբողջ հատուած մը որ արեւ-
ւելեան թմրութեան մէջ մնացած էր մինչեւ
հիմա , մենք կը կարծենք որ ասիկա գերազան-
ցապէս ազգասիրական գործն է Պարսկահայոց
մէջ , ուր ուրիշ ոչինչ կայ ընկելք , ուր ոճրա-
գործ ապուշութիւն մը պիտի ըլլար քաղաքա-
կան ձգտումներ արթնցնել : Հայուն համար
քաղաքական երազները պէտք է սահմանաւոր-
ուին գործնական հանդամանք ունեցող կեդրոնի
մը մէջ . անկէց զուրս , հայ հասարակութիւն-
ները պէտք է միմիայն իրենց բարոյական զար-
գացմամբ եւ նիւթական բարգաւաճմամբ
զբաղին : Մենք կը փափաքէինք որ լսարանա-
կան Ընկերութիւնը ընդարձակուէր , հարկաւոր
հեղինակութիւնն ու նուիրագործումը ստանար ,
եւ Պարսկահայոց բարոյական վարչութիւնը
ձեռք առնէր . կազմուած՝ խոհական , հմուտ , ան-
կեղծօրէն եւ ուշիմօրէն ազգասէր անձերէ , գոր-
ծելով օրինական , անկասկածելի , կանոնաւոր
պայմաններու մէջ , այդ ընկերութիւնը կրնար
պարսիկ կառավարութեան եւ Հայոց միջեւ յա-
րաբեշութիւնները բարուքելու նպաստել , ար-
գիլել որ եկամուտ գործիչներ պարսիկ ժողո-
վուրդը չզրգան Հայուն դէմ , Պարսկահայոց
ամբողջ խանքն ու ջանքը կեդրոնացնել իրենց
բարօյութեանն ու վարգացմանը նպատակին ,
նպասակ որ կատարելապէս իրագործելի է քա-
նի որ պարսիկ կառավարութիւնը՝ նոյն իսկ իր
շահերէն մղուած՝ հայասէր վարմունք մը ցու-
ցուցած է ցարդ եւ պիտի միշտ ցուցնէ , եթէ
Հայերու պատճառով սահմանագլխու խռովու-
թիւններ չյարուցուին : Ընկերութիւնը կրնայ
հետզհետէ ճիւղաւորել եւ ընդլայնել իր գործու-
նէութիւնը , հաստատել լրագիր մը Պարսկահա-
յոց համար , հրատարակել ամեն տեսակ գրքեր ,
ճանչցնել Պարսկահայուն թրքահայ ու ռուսա-
հայ գրականութիւնները , եւրոպական քաղա-
քակրթութեան կարեւոր էջերը , եւ այսպէս՝
հիմը դնել պարսկահայ գրականութեան մը , որ
զեւ գոյութիւն չէ ունեցած :

Աղեքսանդրիոյ նորահաստատ մատենադարա-
նը ունի նպատակ մը մասնաւորապէս ուսում-
նական , այն է՝ «կազմել ըստ կարելւոյն ամբողջ

հաւաքածոյ մը ամէն լեզուով հրատարակուած գրքերու, հանդէսներու եւ թերթերու որ Հայոց ազգին եւ երկրին վերաբերեալ նիւթերու վրայ կը խօսին» . այդ մատենադարանը պիտի ծառայէ նաեւ իբրեւ ընթերցատուն, եւ ուրեմն իբրեւ տեսակ մը հաւաքավայր Աղեքսանդրիոյ հայ գաղութին : Ծրագիրը դժուարին է եւ կը կարօտի հասարակութեան կողմէ նիւթական խրախուսանքի եւ բանասէրներու կողմէ հաճոյակատար աջակցութեան : Եւ կը յուսամ որ երկուքն ալ գտնէ այդ ձեռնարկը, որուն կարեւորութիւնը կարելի չէ չտեսնել : Վենետիկի եւ Վիեննայի հոյակապ հաւաքածոներէն զատ, Հայերը արտասահմանի մէջ չունին դեռ ո եւ է ազգային մատենադարան որ ուսումնասիրութեանց կեդրոնավայր կարենայ դառնալ տեղին հայ հասարակութեան : Եզրպոստի պէս միջազգային երկրի մը մէջ, ուր ամէն գիւրութիւններ կարելի է գտնել եւ ուր բարեկեցիկ Հայեր չեն պակսիր, հաւանական է որ այս ձեռնարկը յաջողի եւ հայկական կեանքի խուզարկութեանց նոր նպատակ մը բերող հաստատութիւն մը դառնայ : Ձեռնհաս եւ անձնուէր անձեր են որ գործին պոլսն անցած են, եւ անտարակուսելի է որ ձեռնարկը պիտի գտնէ ամէն կողմէ գնահատում եւ աջակցութիւն :

Ամերիկայի Հայոց մէջ ոգեւորութիւնը աւելի ընդարձակ ու կրակոտ է քան ո եւ է տեղ : Ամէն այն ամերիկեան քաղաքներուն մէջ ուր հայ գաղութներ կան, լսարան, թատրոն, ընկերութիւններ հաստատուած են արդէն շատոնց ի վեր : Ամէն ազգային ձեռնարկ այդ աշխոյժ ու անձնուէր հասարակութենէն կը գտնէ սրտագին աջակցութիւն . Ձէյթունի համար հանգանակութիւնը, — որուն ամօթով կը հաստատեմ թէ ոչ մէկ եւրոպական հայ գաղթականութիւն դեռ չմասնակցեցաւ — 2—3,000 տուրքի պատկառելի գումարին հասնելու վրայ է : Եւ հոն ալ ոգեւորութիւնը հետզհետէ կազմակերպեալ ձեւ կ'առնէ : Նիւ-Եորքի Հայերը ամերիկո-հայկական ընկերութիւն մը կը հիմնեն : Փաղափարը շատ սիրուն է . մեր Նիւ-Եորքի ազգակիցները, սերտ ու մտերմական կապեր թող հաստատեն ամերիկեան տարրին հետ, անոր ճանչցնեն ներքնապէս մեր ժողովուրդը՝ իր ցաւերով եւ ձիրքերով, եւ իրենք ալ այդ հաղորդակցութեան մէջ ջանան իւրացնել ամերիկացի ժողովրդին յստակ ու գործնական յատկութիւնները : Փեղեցիկ իրողութիւն մըն է նմանապէս որ Պոսթմի Հայերը ուղին բարոյական կեդրոնավայր մը դարձնել իրենց ակումբը՝ Ամերիկայի ցրուած հայութեան համար : Թող այդ աւկումբը իրեն զխաւոր նպատակ ունենայ բարոյական բարձրացումը Ամերիկայի հայութեան, թող ջանք ընէ ամերիկեան քաղաքակրթութեան հետ աւելի մօտէն շփման մէջ դնելու Ամերիկաբնակ Հայուն միտքն ու բարքերը, թող ըլլայ ազբիւր մը՝ մերիններուն համար՝

մտաւորական ճոխացման :

Եւ ճիշդ այս փաղափարն է որ կ'ուզէի շեշտել, այս ընդհանուր գնահատական տողերէն յետոյ : Պարսկաստանի, Եզրպոստի եւ Ամերիկայի բոլոր լսարաններն ու ընկերութիւնները պէտք չէ որ շատանան մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան հետ հայ միտքը հաղորդակցութեան դնելու գործով, զոր սկսած են կատարել . պէտք է որ իւրաքանչիւր երկրի Հայեր ջանան մասնաւորապէս ուսումնասիրել իրենց ժամանակաւոր հայրենիքին քաղաքակրթութիւնը, զայն իրենց մէջ ընդհանրացնեն, ընտելացնեն եւ յետոյ զայն ընդհանուր հայութեան վրայ ցորացնեն : Դեռ ոչինչ փորձուած է այս ուղղութեամբ : Հայերը, իրենց նոր միջավայրներուն մէջ, անշարժ ու անփոփոխ մնալու ձեւն ունեցած են մինչեւ հիմա, կարծես միմիայն իրենք զիրենք տեսած են եւ շուրջներին նայելու չեն մտածած . բոլոր թերթերը որոնք կը հրատարակուին արտասահմանի մէջ, ազգային ներքին վէճերով, անձնական խնդիրներով միայն լեցուած են . լսարաններու մէջ ընդհանուր անորոշ հարցեր նիւթ կ'առնուին, կամ ազգային սովորական խնդիրները : Ո՛րչափ աւելի կենսականորէն օգտակար գործ մը կատարուած կ'ըլլար, եթէ մեր պզտիկ վէճերը երկրէ երկիր պտրտցնելու տեղ, ամէն մէկ երկրի մէջ մեզ ճոխացնող նոր տարր մը քաղել ջանայինք :

Պարսկահայերը կրնան մեզի ճանչցնել հին Պարսկաստանը իր պատմութեամբ եւ գրականութեամբ, նոր Պարսկաստանը իր բարքերով, աղանդներով ու կացութեամբ, գործ որ հայ լեզուին եւ գրականութեան համար ամենակարեւոր նշանակութիւն ունի եւ զոր անշուշտ Պարսկահայք ամենէն աւելի ձեռնհաս են կատարելու . նմանապէս, կրնան երեսան հանել Պարսկաստանի հայութեան պատմութիւնը, մանրակրկիտ քննութեամբ, հնագոյն օրերէն մինչեւ այսօր :

Ամերիկայի Հայերը կրնան ուսումնասիրել Նոր-Աշխարհին պատմութիւնը, ծանօթանալ այն հոյակապ դիւցազներգութեանը որով Ամերիկան ինքզինքն ազատագրեց, եւ այն հսկայական աշխատութեանը որով իր այսօրուան զօրութեանը հասաւ . մեր ամերիկեան ընկերութիւնները կրնան մեզի ճշգրիտ ու խնամոտ հրատարակութիւններ ձեռնարկել Լինքոլնը, Ուոշինգթոնը, Փրանքլինը, Նոր-Աշխարհին բոլոր մեծ քաղքենիները Հայոց ճանչցնելու համար, կրնան նաեւ հետամտիլ ամերիկեան գրականութիւնը, արուեստը, ճարտարագործութիւնը մեզի ծանօթացնելու : Ահաւասիկ աշխատութեան ասպարէզ մը շատ աւելի շահեկան եւ օգտակար քան հազար անգամ ծամծամուած նիւթերու վրայ դարձող բանախօսութիւնները կամ անձնական ու կուսակցական անվերջանալի վէճերը :

Միևնոյն բանը կրնային ընել Պուլկարիոյ , Յունաստանի , Եգիպտոսի Հայերը : Այդ երեք երկիրներուն մէջ , ուր կը վխտան մեր հայրենասէրներն ու յեղափոխականները , դեռ ոչ մէկը գաղափարը չունեցաւ լուրջ ուսումնասիրութեամբ մը ազգին ճանչցնել թէ ինչպէս իրենց ազատութիւնը գտան Յունաստանը եւ Պուլկարիան , եւ ի՞նչպէս Եգիպտոսը ճողոպրեցաւ թուրքին լուծէն . անաւասիկ գործ մը , իրապէս ազգասիրական* , բոլոր այն երիտասարդներուն համար որոնք տենդն ունին գրելու , գործելու . թող ամէն երկրի հայ երիտասարդութիւնը մեզի ճանչցնէ այդ երկիրը իր անցեալով ու ներկայով , իր բարոյական ու նիւթական կեանքին ամէն երեւոյթներովը , ընդարձակ , մանրագնին ու ճշգրիտ պատկերացմամբ մը : Եթէ այս աշխատութիւնը կատարուած ըլլար առաջուց , մեր ազգային գործունէութիւնը ուղղութիւն մը , խրատ մը , առաջնորդութիւն մը պիտի գտնէր անոր մէջ : Գործը անհրաժեշտ է , եւ միշտ կարելի , որ կատարուի :

Մնցողակի դիտողութիւն մը չէ որ կ'ընեմ , այլ առաջարկութիւն մը , զոր կը շնչտեմ : Արտասահմանի գաղթականութիւնները , որոնք պէտք եղածէն աւելի թուով լրագիրներ կը հրատարակեն եւ հայրենասիրական միօրինակ ու մնամէջ հետորութեամբ մը կը շատանան , գովելի արարք մը ըրած կ'ըլլան եթէ փութան այդ ուսումնասիրութիւնը սկսիլ , հիմա որ օրին ու միջոցները ունին , եւ գրքեր ու տետրակներ ի լոյս ընծային՝ այս նշանակուած ուղղութեամբ : Մենք Անահիտի մէջ պիտի հազորենք ազգին ինչ որ Ֆրանսա ունի ազնիւ ու մեծ : Սակայն , ստիկց զատ , սպասելով որ ուրիշ երկիրներու մէջ սկսին մասնաւոր հրատարակութիւնները , մենք սիրով պիտի տեղ բանայինք մեր թերթին մէջ՝ այդ կարգի ուսումնասիրութիւններու որոնք օտար ազգերը Հայուն ճանչցնել նպատակ ունենան :

Սխալ է մտածել — ինչպէս կ'ընեն ոմանք — թէ մայր-հայրենիքէն դուրս կատարուած այս ջանքերը կորսուած ուժեր են : Նախ՝ այդ ամէնը , ուղղակի կամ անուղղակի կերպով , կը փոխանցուի հայրենիքի հայութեան , ինչպէս շատ ուշիմ կերպով դիտել կուտայ նաեւ մեր մէկ թղթակիցը որուն նամակը կը հրատարակենք այս թուով . այդ ամէնը , զրոյն գէպ ի ներս՝ կեանքի հեղեղում մըն է , որ արդէնքները կը խորտակէ , կը թափանցէ խաւարով պաշարուած միջավայրին մէջ , եւ հայրենի հողին վրայ մնացած ժողովրդին միտքը , հոգին ու կեանքը կը հարստացնէ : Յետոյ , ազատ երկրի մէջ , բարձրագոյն քաղաքակրթութեանց անմիջական ազդեցութեամբ կանոնաւորապէս կազմակերպուած գործունէութիւն մը տեսակ մը նախափորձ է , որ վաղը կարելի պիտի դարձնէ հասուն ու գիտակից կառուցումը ազգա-

յին հաւաքական կեանքին՝ նոյն իսկ հայրենի երկրին մէջ , եթէ պայմանները ներեն որ այդ բազըր վիճակուի մեզի : Օտար երկրի մէջ հաստատուած տեսակ մը մտաւորական կեդրոններ , ինչպէս Վենետիկի ու Վիեննայի վանքերը , ինչպէս Բարիզի ողբացեալ Մուրատեան վարժարանը , աւելի օգտակար կրցած են ըլլալ հայրենիքի հայութեան քան շատ մը ձեռնարկներ որոնք երկրին մէջ , կապանքներու տակ , փորձուած են :

Հասկնանք այս բոլոր ճիգերուն նշանակութիւնը , եւ քաջալերենք դանոնք : Ըմբռնենք թէ , հեռու՝ շեղումներ ըլլալէ , անոնք գերազանցապէս « ազգային գործունէութիւն » են Նպատենք ամենքս ալ մեր չափովը բուժելու մեր ամենէն մեծ , ամենէն չարագործ ախտը , տգիտութիւնը : Կարող դարձնենք մեր ժողովուրդը իբրեւ ազգ զրականապէս կազմակերպուելու : Զարգացնենք Հայուն մէջ , ամէն տեղ , գիտակցութիւնը , փոխանակ անդեկ եռանդին : Այն ատեն միայն կրնանք յուսալ որ Հայը պիտի գիտնայ զգուշանալ այսուհետեւ սխալներէ , պաշտպանել ինքզինքը բարոյական եւ նիւթական վտանգներու դէմ , ապահովել ու ամրացնել իր գոյութիւնը :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Հ Ա Յ Գ Ի Ր Ք

Վ Ա Ր Զ Ա Կ Ը

Կարմրանդկար սըրահը մեծ կը ծըփայ
 Լուսով բոցով բոլոր . Բակրոյ խըրախճանն
 Ա՛լ վերջացած է եւ ծիծաղ անվախճան
 Կը բարձրանայ եւ կատակի ձայն ահա :

Բազմականին վըրայ նըստած , պերճ Սիւնին ,
 Ասպընջական Բագրատունւոյն Տըրդատայ
 Կը փաղաքչէ ողորկ մօրուս , կը խընդայ .
 Երկուքն ալ գոհ , ուրախ՝ գինի ձեռուընին :

Ծաղըր կ'ընեն , դատարկելով կոտինդ մեծ ,
 Արշակունին՝ որուն փեսայ էր Տըրդատ ,
 Եւ անարգեց կինն , որպէս կին անազատ ,
 Կըտտեց զանի , խոպոպիքներն ալ խըզեց :

Ապա փախաւ : Սիտականի հիմայ հիւր
 Կը վայելէ լեռնագինին կայծալից ,
 Եւ ըսպիտակ ցուլ կ'որսայ ձեան պէս անբիժ՝
 Փողաբարբառ ուրախութեամբ մահասփիւռ :

Կը ծիծաղին սէգ սեպուհներն ալ Սիւնի ,
 Որոնց աչերն ազու օժած է շուփայ ,
 Ու կը նազեն . մերթ սիրամարգ մը կուգայ
 Ագի ձօձել ոսկեճամուկ գեղանի :

Բայց քընարի մը ձայն հընչեց խիստ կակուղ ,
Եւ լըռեցին , հոտ կը մըտնար Նազենիկ ,
Բայց սընգուրած դէմքը , վըզով գեղեցիկ ,
Յայրատելով երկար մեղմեխ աչօք թուխ :

Եւ իւղաթուրմ վարսէն կ'ելլէ լոյս կարծես ,
Յօնքին մէջտեղ կը շողայ մեծ կարկեհան .
Ով որ նայի անոր՝ տըռիփ հոգեհան
Կը չարչարէ զանի անյազ մըշտապէս :

Ոտքերը մերկ , որոնց բոլոր կ'երերան
Կըրկին հընչուն ապարանջանք ոսկեղէն ,
Երբ մանրաքայլ մեղկութեան տեղ կը փոխեն ,
Կը տանին զքեզ դէպ ի պըղծած գերեզման :

Եւ իշխաններն ու սեպուհներն ակնապիշ
Տապնապայոյզ , խրոտվալից կը մընան ,
Եւ հագիւ հազ գինուով բերան կը թանան ,
Եւ կը նային գարշապարին կարմրանիշ :

Կը զողբոջեն իրենց պընչերն անանգորր ,
Քանզի Պոռնիկն է ան , կինն է հեշտաբեր
Որ հըմտարար հիւսել կարող է կապեր
Անխոնջ կըրից եւ հաճոյից ահաւոր :

Մըշտածիծաղ բերան ունի թերաբայ
Որմէ բոցոտ շունչ կը ժայթքէ դառնաղէտ .
Եւ կը լողան իւզի նըման հոտաւէտ
Վարար բըբերն որ չունին գուլթ , չունին լաց :

Կը ձօճի մէջքն եւ հըրուէր կը կարդայ
Ողջագուրման մեղմեխանօք մըշտաբոց .
Ու լըրբութիւն թըշին վըրայ ժանտագործ
Կը յորդորէ կ'ըսէ՝ Պա'գ զիս եւ խընդա' :

Կը քօղարկէ կուրծքը նըրբին վըտաւակ
Ջրատին վըրայ հերձած ամպի մը նըման .
Բոլոր ծոցերն ալ անոր տակ կ'երեւան
Երկու աղօտ լուսիններու պէս սպիտակ :

Ուսին վըրայ կը ծածանի արմաղան
Կարճ , ծոպաւոր , եւ կապուտակ է մանած .
Ականակապ ոսկի ագոյցք պինդ բըռնած
Բազուկներուն վերը մարմնեղ կը շողան :

Չեռքը բարձած է փոքրին վին մ'ոսկելար ,
Չոր խիստ մեղմիկ փայփայելով մատը վարժ
Կը հանէ ձայն մ'անուշութեամբ աղբխարշ .
Ո'վ վըհկութիւն , ա'լ ունին ատոր խեր չ'ըլլար :

Կ'երգէ : Այգ վէս մարդիկ լըռիկ կ'ունկընդրեն ,
Կը թալկանան կարծես , կ'ըլլան գունաթափ ,
Վայելքներու ողբումն է դա դիւրախար
Չոր քամահէլ զոյղըն սըրտեր կը զօրեն :

Բազմականի մը վըրայէն մերթ կ'ելլէ
Սիրապատար փափաքալից հեծութիւն .
Կը տոչորի Տըրդատ ըղձամար հեշտասուն ,
Հալաւէն թել մ'ատամնացի կը խըլէ :

Կը մըրմըռայ . Այգ կինն ինծի տուր , Սիւնի .
Բայց անբարբառ Բակուր պոքստեց յօնքը թաւ ,
Կուուի մը տըւաւ տաշտին պայծառ որ ինկաւ
Ու զօղանջեց գեանին վըրայ ծիրանի :

Ա'լ շունչ չ'ելլեր : Պարել սկըսաւ Նազենիկ .
Խորշկէն ու թօշ գեղին վարտեօք ծալաշատ
Որ ոտքերուն վըրայ կ'իջնայ անաշխատ ,
Ան կը թըւէր կախարգարար գեղեցիկ :

Աղջիկը տո'ւր , ունաց Տըրդատ յուսահատ ,
Տըրորելով ծուրը , Բակուր՝ տո'ւր զանի .
Եւ Նազենիկ կաքաւելով հոլանի
Կը գալարէ մարմինն ամբողջ պատ ի պատ :

Անոր լըպիրշ պորտը , կընիք ոսկեղէն ,
Կը գըրգըռէ Բագրասունին թասուն , ժանս .
Աչուըններուն գընտերն ուռած , դարձած շանթ'
Ահա կ'ելլէ , ահա կ'ոստնու ան տեղէն :

Կը շամբըշի՝ մէջքէն բըռնած վարձակը .
Կ'աղաղակէ սըրահն ողջոյն մըրրկաւէտ .
Եւ ոտք կ'ելլեն սեպուհներն ալ Բակուրյ հետ
Որ կը փութայ մերկացընել վաղակը :

Թո'ղ հարճըս , շո'ւն , կերկերաձայն կը պոռայ :
Բայց ըսկտեղով մ'արծաթի հաստ ու խոշոր ,
Կը պաշտպանէ զինքը Տըրդատ եւ խոժոռ
Կը փըրփըրի , կը մըրմըռայ , կը գոռայ :

Կինը ճըչիւն կ'արձակէր , մորթ կը ցըտէր .
Վայ արեւուս , կ'ըսէր , հոգիս փըրկեցէք :
Բագրասունին Բակուրյ գըլխուն վըրայ սէգ
Անօթը ձոյլ թակեց — ինկա'ր , Սիւնեաց Տէր :

Ճակատը խոր խոց մ'առած՝ խոռ կը հըռնաար :
Արիւնալից էին շըթներն եւ աչիւր :
Բայց ըսպանիչն արագ արագ կը փախչէր ,
Կ'աշտանակէր ձին , հարճը գիրկը կ'երթար :

Կ'ողբայ մըրրկոտ ձիւնագիշեր եւ քամին
Եղեռնաւոր բօթ մը կ'ըսէ լուսնին ցուրտ .
Բայց կը ցընծայ կինը , բերան ունի լուրթ ,
Կը փայփայէ արիւնակաթ հոմանին :

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ



Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

ՄԵՐ ԳՐԱՐԱՐԱՐԱՌՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ(1)

Այդ հարցը Պոլսի թէ՛ Բողոքարկայի մի հայ թերթ էր յարուցել . — Հանդիս Անստեան տեսնելով դորա անկարելիութիւնը՝ մերթել էր . Պ. Աբեղեանը Արարատի Թ., Ժ. եւ է. համարներում (1897) շատ հիմնաւոր պատճառներով ցոյց էր առել մեր դրաբարբառների բաժանումից առաջացած վնասը, նոցա միութեան կարեւորութիւնը, եւ մասնանիշ արել այն ճանապարհը, որ արեւմտեան լեզուն որոշ զիջումներից յետոյ հասկանալի կ'ըստնար կովկասեան Հայերին : Պ. Մանդինեանը (Արարատ, 1898, Գ. եւ Դ.) մի համալիր յօդուածով ցոյց է տալիս, որ Պ. Աբեղեանը՝ Ա. հարցը միակողմանի է դրել, ի նկատի ունենալով միայն երկու լեզուների ստուգաբանութիւնը, Բ. սխալ, կարծելով, որ Արարատեան լեզուն արեւմտեանից աւելի զարգացած է, Դ. կողմնակալ, միայն զիջումներ պահանջելով արեւմտեանից : Վերջ ի վերջոյ սակայն, երկուսն էլ գալիս են այն եզրակացութեանը, որ լեզուներն հիմա միացրելն անկարելի է, այլ պէտք է միայն մօտեցնել : Մենք խորհուրդ կ'տայինք ընթերցողին անպատճառ կարգալ յիշել յօդուածները, մանաւանդ Պ. Մանդինեանինը, ուր լաւագոյն կէտը պէտք է նկատել երկու բարբառների համեմատութիւնը, որտեղից ամեն մէկը պարզօրէն պիտի տեսնի արեւմտեան բարբառի նրբութիւններն ու առաւելութիւնները :

Ինչքան էլ տարօրինակ երեւայ, այսօր մի դառն իրողութիւն է մեր երկու գրաբարբառ ունենալը : Պատմական Հայաստանը այդպիսի բան չի՛ տեսել . հարիւրաւոր իշխաններ, միմեանցից անկախ մի քանի տէրութիւններ ունեցած ժամանակն էլ, նա ունեցել է ազգային միութեան երկու մեծ օղբեր, մի՛ գրական լեզու եւ մի՛ եկեղեցի . եթէ կրօնական բաժանումը չատերին ցաւ է պատճառում, մեր լեզուների բաժանումը, մեզ, նոր սերնդիս համար, թւում է

է միանգամայն տարօրինակ եւ մեր լեզուաչէնների անհետատեւութեան մի ցաւալի ապացոյց : Պ. Մանդինեան ասում է, որ Նազարեանից ու Նալբանդեանից առաջ արեւելեան հայերէնն արդէն խօսւում էր Ներսիսեան դպրոցում եւ Նազարեան ճեմարանում . — Դորանով չարդարացան նրանք . Պարսկաստանումն էլ այսօր անշուշտ մի խօսուն հայերէն կայ, դա իրաւունք չի՛ տայ, որ մի նոր Նազարեան կամ Նալբանդեան հիմք դնեն մի Պարսկահայ-գրական լեզուի : Եկեղեցին իւր մէջ ծագող աղանդի հետ կուռել է, դրաբարբ նոր ծագող աշխարհաբարբի դէմ կատաղի կուռ է մղել, բայց սկզբից եւ ետ մի աշխարհաբարբ ունենալու հետատեւութիւնը չեն ունեցել մեր լեզուի հիմնադիրները եւ մենք կատարուած իրողութեան առաջ կանգնած, արուեստական միջոցներով ենք ուղում նորա առաջն առնել : Այդ միջոցն էլ լեզուները միմեանց մօտեցնելն է համարում : Սակայն, երկու առարկայ մօտեցնելուց առաջ, պիտի չափենք նոցա մէջ եղած տարածութիւնը, նոցա ծանրութիւնը, եւ դորա վերայ կատարուելիք ծախսի քանակը . մի խօսքով մենք պիտի ընտրենք օգտակարն ու հնարաւորը : Եթէ մինը ծանր է եւ շարժման տեղը անյարմար, իսկ միւսը թեթեւ ու աւելի շարժուն դիրքի մէջ, հասկանալի է, տարրական խելքն էլ պիտի վերջինը առաջինին մօտեցնէ . առհասարակ դանակն են տանում եղան մօտ եւ ոչ հակառակը . — Այս տեսակէտը կարեւոր է, որ մենք, ամէն մի վճռից առաջ, անկողմնակալ եւ անաչառ կերպով դիտենք մեր լեզուների դիրքը . մեր եմ ասում, որովհետեւ այստեղ իմ եւ քո չկայ . Դուրեանը մեզ նոյնքան սիրելի է որքան Պատկանեանը արեւմտեան հայերին, որովհետեւ նրանք երկուսն էլ մերն են, նրանց երկուսի լեզուն էլ մեր սրտի, մեր հոգու հարազատ արդիւնքն է . ուստի մենք ամենայն սառնութեամբ պիտի աշխատինք որոշել մեր լեզուների փոխադարձ յարաբերութիւնը . թէ արդեօք իրերի բնական ընթացքը նուցակից 1) որի՞ն է առաւելութիւնը տուել, 2) որի՞ դերը աւելի ներգործակալն է, 3) մեր ազգային գիտակցութիւնն ու մտածութեան ուրուևութիւնը որի՞ մեջ աւելի է երեւան գալիս, եւ 4) նուցակից ո՞րն աւելի ունի կենդանի շինելու պայմանները : Ինձ թւում է որ սոքա են մեր լեզուների դիրքն ու նոցա կարեւորութիւնը բացատրող ծանրագոյն վայրկեանները : Եթէ այս հարցերին ուղիղ պատասխանել կարողա-

(1) Մեր գլխաւոր մտադրութիւններէն մէկն էր «Անահիտ»-ի մէջ զբաղիլ արեւելեան եւ արեւմտեան աշխարհաբարբերուն միացման, կամ գէթ տեսակ մը մերձեցման, խնդրովը, զոր ուստի մամլոյն մէջ սկսած են յուզել ատեն : մը ի վեր մէկ քանի գրողներ եւ որուն ամենամեծ կարեւորութիւնը գրական որքան ազգային տեսակէտով՝ աւելորդ է բացատրել : Գոյ ենք որ մեր մերձին մէջ ուստի գրող մը կ'ըլլայ որ կը բանայ այդ հարցը : Պ. Վանցեանի նրբագիտն եւ անաչառ բաղդատութիւնը նշանակելի նպատակ մըն է այդ խնդրոյն, որու մասին պիտի ընդհուպ ներկայացնենք մեր տեսութիւնները :

ցանք, ապա, ըստ իս, մօտիկ ապագայի համար գէթ, մենք մեր ուժերը ներածին չափ պիտի աշխատինք զիջումները թողլից պահանջներու, թէեւ մենք հաւատացած ենք թէ արհեստական զիջումները միշտ էլ պիտի մնան անաջող փորձեր:

Պ. Մանդինեանը ցոյց է տուել արեւմտեան լեզուի առաւելութիւնները համոզիչ համեմատութեամբ, սակայն դորանով հարցը չլուծուեցաւ. միթէ մեր աշխարհաբարը համեմատուել կարո՞ղ է իւր փարթամ նախորդի՝ գրաբարի հետ, սակայն գրաբարը տեղի տուաւ. միթէ նոր յունարէնը համեմատուել կարո՞ղ էր իւր փարթամութեամբ եւ պերճութեամբ յայտնի հին յունարէնի հետ, որին նա յաղթեց. միթէ ուսմանական նոր լեզուները մի քանի դար առաջ համեմատուել կարո՞ղ էին լատինարէնի հետ, որ նոքա տապալեցին: Յաղթողը լեզուի հարստութիւնն աւ ճոխութիւնը չէ: Յաղթողը ժամանակն ու խօսող ժողովուրդն է: Այստեղ, սակայն, պայմաններն արտաքուստ հաւասար են. մեր երկու գրաբարբառներն էլ մանուկ, երկուսն էլ խօսող, երկուսն էլ փոխադարձ յարաբերութեան որոշ չափով նաեւ փոխադարձ կռուի մէջ են. — Յաղթութեան մասին առ այժմ խօսք չի կարող լինել. այն էլ է յայտնի, որ արեւմտեանը աւելի փարթամ է. ո՞րն է կենսունակ, ո՞րն է ազդող. այս է հարցը. — անտարակոյս արեւմտեանը: Կեանքը, որ մասնակի համեմատութիւններից շատ աւելի լաւ ունուցիչ է, համոզիչ կերպով վճռել է այդ եւ ամէն օր մեզ ցոյց է տալիս, որ մենք շարունակ տպում եւ արտատպում ենք արեւմտեան լեզուով յօդուածներ ու գրքեր, այնինչ Պոլսեցիք, նոյն իսկ Նոր-Նախջեւանցիք կարիք են զգում մեր գրքերն ու յօդուածները թարգմանելու: Ի՞նչու նրանք իրանց մի այդպիսի նեղութիւն են պատճառում, իսկ մենք ոչ: Պատասխանը մի քանի կարող է լինել. կա՞մ նրանք մեր գրածը չեն հասկանում եւ կամ մեր լեզուին չեն հաւանում: Իսկ մենք, եթէ չենք թարգմանում, թէ՛ հասկանալ պիտի կարողանանք եւ թէ՛ հաւանելիս պիտի լինինք: — Կըրթուած Ռուսը առհասարակ զիտէ գերմաներէն եւ օգտոււմ է նրա գրականութիւնից. կըրթուած Գերմանացին ո՛չ ուսերէն գիտէ, ոչ էլ նրանից օգտուելու կարիք է զգում. — Այդ է իրերի ընական ընթացքը եւ լեզուների ուժաւոր. հասկանալի է որ ուսերէնը անհամեմատ թոյլ է գերմաներէնից. եթէ նոյն համե-

մատութիւնը նույն չափերով վերցնելու լինենք, պիտի տեսնենք մեր լեզուի թուլութիւնը արեւմտեանի յանդիման իրերի ընական ընթացքով վճռած, եւ մեր բաղմամբիւ փոխառութիւնները յայտնի ապացոյց են դորան. հեռագիր, յրագիր, քղրակից, երկաթուղի, հեռախօս, տրաստանակ, հեծակաւ եւ ուրիշ բազմաթիւ ընտիր ուսումնական բառեր մենք պարտական ենք միմիայն արեւմտեան լեզուին. ուր մենք փորձեր ենք ուրիշ ինքնուրոյն բարդութիւններ կազմելու, այնտեղ երեւում է մեր կատարեալ բոբիկութիւնը. — Իսկ թէ Հայի մտածութիւնը աւելի անարատ է երեւում արեւմտեան բարբառի մէջ, քիչ թէ շատ լեզուի ճաշակ ունեցողն ու մեր լեզուներով զբաղուողը տարակոյս ունենալ չի՛ կարող: Մենք չենք կարող երկու զոյգ մի կինտ գրողներ հաշուել, որ մաքուր, անարատ հայերէն գրէին, բայց արեւմտեան գրողների մեծագոյն մասը հայերէն գրողներ են: Եթէ մեզանում մաքուր հայերէն գրողներն են բացառութիւն, արեւմտեանի մէջ ընդհակառակը. — Չմոռանանք, որ մեր ամենամեծ վիպասանը, Րաֆֆին, եւ ամենամեծ հրատարակախօսը, Արծրունին, իրանց օտարաբան լեզուով, միմեանց հաւասար էին. — Այստեղ էլ ուրեմն, առաւելութիւնը արեւմտեան բարբառի կողմն է: Յետոյ, լեզուի կենդանութեան հարցը. — Լեզուն կենդանի է միայն մարդկանց բերանում. ինչքան էլ մի լեզու հարուստ, փարթամ եւ պերճ լինի, ինչպէս մի յունարէն, մի լատինարէն կամ մի հին հայերէն, նորա վիճակը մոռացութիւնն է, որովհետեւ նա խօսող չաւնի, եւ մի լեզուի վիճակը կատարելապէս կարելի է որոշել նորա խօսողների թւում. — Ո՞վ եւ ո՞րքան հոգի են արեւելեան գրաբարբառով խօսում, — իմ հաշուով հազիւ մի երկու հազար հոգի (1): Այսօր ուտիերէն խօսողների թիւը աւելի շատ է, քան արեւելեան հայերէն. կարո՞ղ ենք մենք մի այդպիսի լեզու կենդանի անուանել. հաղի՛ւ: Հոչակաւոր ներսիսեան գաբրոյի ուսուցիչներից սկսած մինչեւ վերջին գործակատարը օտար լեզուով են «ծեքախօսում». ծանօթացէք մեր խմբագիր հրատարակիչներին հետ, մեր այսպէս անուանեալ «ինտելլիգենցիայի» հետ, մտէք անուանի հայ ընտանիքները, խօսեցէք հայ վարժուհիների, հայ գրագէտներին հետ, բոլորը, բոլորը օտարախօս են: Բացառութիւնների մասին չէ, հար-

(1) Մօտաորայէս նոյն կարծիքն է յայտնում հայերէն խօսողների Թեի մասին եւ Պ. Արախանեանը ՍՈՒՐՃում:

կաւ, խօսքը . բացառութիւնը սովորաբար հաստատում է եղած իրողութիւնը : Մենք պիտի չմոռանանք Հրատ. ընկերութեան մի յայտնի նիստը , ուր մի Պոօշեան յանդիմանութիւն էր ստանում օտար լեզու հասկանալ չկարողանալու համար . բնորոշ , շա՛տ բնորոշ են այս երեւոյթները , եւ ոչ ոք աւելի չի արհամարհում իր լեզուն քան հայ «ինտելլիգենտ»ը . — սա էլ փարիսեցիութեան մի նոր տեսակ է , գրեւ , քարոզել , խրատել որ ուրիշները սովորեն , բայց իրան միշտ հեռու պահել քարոզածից . Քաթիպայի , Նազարեանի եւ Սունգուկեանի զաւակները իրանց հօր գործերին միայն սուսերէն թարգմանութիւնից են ծանօթ : — Երկարելն աւելորդ է :

Պետերբուրգ , Մոսկուա , Խարկով , Բերլին եւ այլ տեղեր հայ ուսանողների մեծամասնութիւնը հայերէն չի խօսում եւ շատերն իսկ չեն էլ հասկանում հայերէն : Մայրենի լեզուի արգիտութեամբ փայլում են ի մասնաւորի հայ ուսանողներէք , մեր ապագայ մայրերը... Մեզանում դեռ մի հայ կին չեք եւաց , որ հայերէն մի որ եւ է բան արտայայտէր . Տիկին Խատիւեանի եւ Իշխանուհի Արզութեանի գործերի բընագիրը ուսերէն է : — Մի լեզու , որ կինը չի՛ խօսում , որ մանկանոցի , օրօրոցի եւ ընտանիքի սեփականութիւնը չի՛ դարձել , նորա գոյութիւնն ու ապագան սաստիկ կասկածելի է : Եւ հայ հասարակութեան հողերանութեան հետ մի քիչ ծանօթ անձի համար շատ էլ դրաւիչ չէ՛ այդ ապագան , եթէ իրերը այս ընթացքով շարունակուին :

Հարց է հիմա , արդեօք արեւմտեան լեզուն խօսում է : Պոլիս Եսասած չունիմ , բայց ինչ որ եզրակացնել կարելի է գրականութիւնից , լեզուի թեթեւութիւնից , ձեւերի ձկունութիւնից , եւ արտայայտութիւնների կենդանութիւնից , այն է , որ այդ լեզուն կենդանի չըթուցաների յայտնի հետքեր է կրում . եւ մինչև անգամ կնոջ չըթուցաների հետքեր : — Անտարակոյս Պոլսումն էլ մի ստուար դասակարգ թըրքերէն է խօսում նոյն իսկ ընտանիքում — (հայ «բուրժուա»)ն միշտ օտարախօս է , ուր էլ որ նա լինի) , բայց նոցա քաղաքական եւ հասարակական պայմանները այնպէս են , որ հայերէնը մի մեռած լեզու չի՛ մնացել ինչպէս մեզանում... Թէ հայերէնը նոցանում ընտանիքի լեզու է , երեւում է նրանից , որ նոքա արտայայտել են ո՛չ միայն կին վիպագիր ինչպէս տիկին Տիւսաբն է կամ տիկին Սվաճեանը , այլ եւ այնպիսի տաղանդաւոր հրա-

պարակախօս որպէս Տիկին Սիրելն է , եւ բաւական է միայն Թիֆլիզի բեմը տեսնել , համոզուելու համար որ եթէ մի երկու ուղիղ հայերէն խօսող գերասանուհի կան , Պոլսեցի են :

Գանք հիմա ժողովրդին , որ ոչ կարգալ գիտէ , ոչ էլ կատարելապէս հասկանալ է կարողանում մեր հնարած լեզուն :

Մեր ժողովրդի ամենից առողջ , ամենից ընդունակ մասը , անտարակոյս Ղարաբաղցիք են . ձեռնարկող , անձնալստահ , եսական , բայց եւ մինչև ևս ոսկորների ծուծը օտարամուլ : Դեռ ազիւն իր միջմասն չի՛ փոխել , դեռ որդիքը չեն մուսայել իրանց հօր փալանը , որով հայրը միլիոններ է դիզել , բայց հայերէնը նոքա վաղուց են մոռացել : Ես մի Ղարաբաղցի չտեսայ , որ հայերէն կարգին խօսել իմանար : Իսկ մեր կըրթուածների մէջ Ղարաբաղցիք ամենամեծ տուկոսն են կազմում : Եթէ ի նկատի ունենանք արեւելեան բարբառներով խօսող ժողովրդի թիւը , ապա նա 7—8 հարիւր հազարից աւելի պիտի չլինի , մինչ արեւմտեան բարբառներով խօսող հայերի թիւը հաւանօրէն միլիոն ու կիսից մինչև երկու միլիոն պիտի հասնի , եթէ նորանց մէջ հաշուենք Ղարս , Ալեքսանդրոպոլ , Ախալքալաք եւայլն , իրանց բազմահայ գաւառներով , որոնք իբրեւ Տաճկաստանցի գաղթականներ , բոլորն էլ արեւմտեան բարբառով են խօսում , թէ չյիշենք նաեւ Օլթին , Արտահանը , Խրիմը եւ Նոր-Նախիջեանը եւայլն : Ուրեմն , արեւմտեան լեզուն , ժողովրդի թուով երկու անգամ գերազանց է արեւելեանից : Այս կէտը ծանրակշիռն ու ամենակարեւորն է , որովհետեւ ինչպէս ասացինք , կենդանի լեզուի կարեւորութիւնը կախուած է նորա խօսողների թուից : Յետոյ չպիտի մոռանալ արեւմտեան հայերի գերազանցութիւնը լեզուի եւ ճաշակի վերաբերմամբ : Նրանք առ հասարակ խօսելու ընդունակութիւն ունին . «հոս-հոս» ասելով մենք հասկանում ենք նաեւ շատախօս . դա էլ ընդունակութիւն է , շատախօս լինելու համար լեզու պէտք է ունենալ , իսկ լեզուին տիրելու եւ իրանց մտքերը լաւ արտայայտելու համար ընդունակութիւն . . . Մի Խրիմեան , մի Սըրուանձտեան , մի Նարբէյ , մեզ համար մեռած են սիպար խօսողներ , որոնց նմանը մենք ո՛չ ունեցել ենք , ոչ էլ ունենք :

Մոռանալու չէ եւ այն , որ մեր լեզուի մեծագոյն հիմնադիրները , Նալբանդեան եւ Քաթիպա , եւ նորա առաջին քերականութիւն կազմողը , Պալասանեան , արեւմտեան Հայերից

էին . եւ այսօր մեղանում հայ գրականութեամբ եւ լեզուով զբաղուողներինց յայտնիները զարձեալ արեւմտեան հայերից են, Խալաթեան, Կոստանեան, Տէր-Մկրտչեան, Մալխասեան եւ այլն : Մենք տամնեակ բառարաններ ունենք եւրոպական լեզուների համար, եւ ոչ մի բաւարար բառարան ուսերէնի համար . դա մի շատ բնորոշ երեւոյթ է . հարիւրաւոր համալսարանականների մէջ, մի Յովհաննիսեան եւ մի Եղուբեան են փորձել բառարաններ կազմելու, թէիւ երկուսի մասնագիտութիւնն էլ լեզուաբանութիւնն է՛ : Դրանք երկուան էլ արեւմտեան Հայերից են (Ալեքսանդրապոլ եւ Ախալքալաք) . մայրենի լեզուի սէրն ու նրա ուսումնասիրութեան բնազդը աւհամեմատ աւելի հին ու զօրեղ է արեւմտեանների մէջ . մենք ամեն բանում նրանց աշակերտներն ենք :—

Մեր արծարծած անկողնակալ դիտողութիւններից եզրակացնելը դժուար չէ, որ իրերի բնական ընթացքը բոլոր կարեւորագոյն եւ արմատական առաւելութիւնները տուել է արեւմտեան բարբառին . արդ՛ հարկ կա՞յ այդ առաւելութիւնների դէմ կռուելու, — երբե՛ք : Երբ հարցը միմեանց մօտենալն է, երբ մենք տեսնում ենք արեւմտեան բարբառի առաւելութիւնը, ամենախելացի միջոցն այն է, որ օգտուինք նորա առաւելութիւնից, աշխատինք նմանել նորան, վերցնենք նորանից այն, ինչ որ մեզ հարազատ ու պիտանի է թւում, եւ ջընջենք մեր լեզուից այն տարրերը, որոնք խորթ, օտար ու անճաշակ են . — Պ. Աբեղեանի միթոստի սխալն այն է, որ արեւմտեաններին խրատ է տալիս այս կամ այն ձեւով մեզ մօտենայու . աւելի խելացի կ'լինէր, եթէ նա մեզ խրատէր արեւմտեանի այս կամ այն առաւելութիւնից օգտուելու :

Առանց լեզուների միութիւնն ի նկատի ունենալու, մենք տարիներ շարունակ զբաղած ենք եղել մեր լեզուի մշակութեան խնդրով եւ զարմանալին այն է եղել ստացւած արդիւնքներից, որ ինչ որ մեր լեզուում ուղղել, կոկել ու պարզել հնարաւոր է եղել, հետեւանք շատ ու շատ տեղերում նման է դուրս եկել արեւմտեան ձեւերին :

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

Բերլին, 10 Օգոս. 1898

ՄՏՔԻՍ ԽԱՌՆԱՐԱՆԷՆ

ԵՐԳԵՐ

Ա

Սառոյցէ կապայ հագցուցիր ինձի, ու տանջեցիր զիս, սիրելի՛ս . սառոյցին փուշերը, սո՛ւր սո՛ւր, մարմինս ասղատեցին, արիւնյուայ չարչրկեցին :

Երեք տարի կայ, սիրակա՛նս, ինձի հագցուցիր կրակէ պատմուճան . ատիկա սէրդ էր . ու անմատչելի եղած էի ես . քեզմով հպա՛րտ էի, քեզմով կո՛յր էի :

Եւ վառուեցայ տարիներով, մե՛ղք որ չայրեցայ, մոխիր չդարձայ : Հողմը զիս ս՛ւր չէր տաներ :

Սառոյցէ կապայ հագցուցիր ու կը տանջես զիս : Ու ինչպէս կրակը զիս չայրեց, անանկ ալ սառը չի պողեցներ :

Կրակը չարչարեց զիս, խանձեց զիս, տանջեց զիս . սառոյցն ալ կը չարչարէ, կը տանջէ զիս . խորունկ սիրտս սակայն նոյնը կը մնայ միշտ . հպուստս միայն փոխեցիր, սիրելի՛ս :

Ու զոնէ ուրախ եմ, այսպէս ինձմով կը զբաղիս : Վա՛ղն ալ, թերեւս, հողէ կապայ հագցնես ինձի, սիրելի՛ս :

Բ

Կարմրած նետերու պէս էին նայուածքներդ . սիրաս խոցեցիր :

Տարիներով խշխշաց սիրտս, երբ շէկ նայուածքդ գամուեցաւ հոն . հիմա կ'ուզես դուրս քաշել ու նորէն կը խշխշացնես :

Արիւնս քամեցիր, ջղջիկ եղար : Վէրքը որ բացիր, չզգացի . թեւովդ ալ մէկ կողմանէ կը հովհարէիր :

Ու անքուն ջղջիկի մը պէս, ննջարանիս մութին մէջ թռչտեցար . միշտ երազուն պահեցիր զիս :

Կէս քուն, կէս արթուն, ամիսներ անցուցի . բարձիս վրայ կը թառէիր մղձաւանջի մը պէս, սիրակա՛նս :

Գ

Շարաթ իրիկուն էր : Մեռելոցի խունկը ծըխուած էր մեր տան ամէն յարկերուն մէջ :

Մենք բարձրացանք Գուզկունճուքի լեռներուն վրայ, եւ ուրուականներու պէս սկսանք մթնշաղին թափաղիլ . սիրակա՛նս, մոռցա՛ր :

Հոն ալ յիշատակներու հոգեկան խունկը պիտի ծխէինք . բացիր ինկածուխ բերանդ ու ամբողջ լեռը միսալ սկսաւ : Սինայի վրայ էինք . ետքը Բորեբ գացինք, ուր ես վառեցայ երբ համբուրեցիր զիս : Ու կը թոթովէին մեր լեզուները :

Դ

Հնչեցին տխուր կոչնակները եւ քարերը ա-

ղազակեցին, բովանդակ երկիրը գերեզման մը եղաւ, ուր թաղեցի հանգիստս:

Ա՛լ այնուհետեւ ատեցի ամէն բան. կեանքը չարիք մը եղաւ ինծի, եւ մտածումներս պատուհասեցին զիս:

Քեզի, ո՛վ Տէր, քեզի դարձուցի աչքերս, եւ հեռո՛ւ էիր ինձմէ: Ե՛ս քեզ ստեղծեցի, եւ դուն ինչ երես դարձուցիր...

Միս մինակ գտայ ինքզինքս... մտքի անծայր պարապի մը մէջ, սարսափահար հալածուեցայ ստուերէս. դժոխքը մէջս փակուած էր ու կը վառէր բոցածաւալ. դիւափաղանգներ ժուռ կուգային կուրծքիս մէկ անկիւնէն միւսը: Ալ փրկութիւն չկար ինծի ու մխիթարութիւն ալ չկար:

Հիմա, կեանքը նպատակ մը չունի ինծի համար, դերեզմանը յոյս չի տար. փառք ու գովասանք զատապարտութիւն են լոկ: Պարուս՝ ձեռքեր:

Մարդը իր ամբողջովին մերկ վիճակովը տեսայ. աղուոր պողան մըն է: Գանկը բացի նայեցայ... խնթ մըն է մարդը:

Ինքզինքը բացատրելու անկարող: Ոչինչ սուրբ կայ անոր մէջ:

Ե

Մարդոց տառապանքին վրայ նայելով կը հրճուի իմ Աստուածս... Սիրականիս արցունքին շողին ինկարոյր կը թռչի, կը բարձրանայ Անոր առջեւ: Ու մեր աչքերը կրակով լեցուած խնկածուխներ եղան, անդադրում կըսկիծ միացող:

Ես չուշան մը ունիմ, հովտի շուշանէն զեղեցիկ. արցունքովս ոռոգուեցաւ ան, սիրո՛վս մնաւ. ու այնքան փափուկ՝ որ կ'երեւայ ամէն հովէ...

Զ

Դա՛նն է, չե՞ս հասկնար արգեօք, քեզի՛ կ'ըսեմ, դա՛նն է, Տէ՛ր, կորուստը բարեկամին՝ որուն համար միայն ապրիլ միտքդ կը դնես:

Հոգիս մխիթարութենէ զուրկ է, աչքերս քուն չունին, մարմինս չի հանգչիր, միտքս կը տանջուի գիշերները ու սիրտս կը ճանկըռտուի:

Կը յիշե՞ս, Երբայեցիք երբոր զաւակդ խաչեցին, երկինք գետին իրար անցուցիր, չղիմացա՛ր. եւ դուն Աստուած մըն էիր. ես ի՞նչպէս տոկամ:

Եւ եթէ անմահ չըլլայիր, հետը պիտի մեռնէիր:

Ամո՛ւլ է այս երկիրը եւ անգութ. նոր աշխարհ մը ստեղծէ՛, եւ ինծի ու սիրականիս պարգեւէ:

Մեծ աշխարհ մը չեմ ուզեր. անոր սրտին չափ միայն մեծ, եւ այդ արդէն շա՛տ է:

Ջատկեր է երկիրը, պատուե՛ր. արիւն քրքրտինք կը թափէ շիպչիտակ քալելու, կանգուն՝ առոյգ երիտասարդի մը պէս: Ու չի յաջողիր:

Ես կ'ուզեմ աշխարհք մը, նոր աշխարհք մը ստեղծել, ու պատու երկրին թիկունքը դնել. իսֆա՛ծ ջատուկին կուզիկը դո՛ւրս գայ:

Եւ իմ նոր աշխարհքս պէտք է ըլլայ Բարձրեալ-Թագաւորին ոտքերուն նոր պատուանդան մը:

Աստուած մը կ'ուզեմ ըլլալ, եւ Արարա՛տ մը ստեղծել:

Է

Վառուեցան թռքերս կարօտովը իր բնական տանը որ աւերակ է հիմա. ու մրկեցաւ կուրծքս ծարաւովը սիրականիս:

Լուռ է բովանդակ երկիրը. խժըղուկ մը կը լսեմ, ցորտ եւ անբարոյական հեգնութիւն մըն է ատ, կուշտ փորէն դեպ ի թշուառ թափառականը:

Հոս երկինք չկայ... յո՛յս չկայ:

Հոս երկինքը գլխուս կը փլի. մթնոլորտը ապականուած է հոս՝ քաղաքակրթութեան մուխովը ու ծուխովը...

Ը

Այս երկրին մէջ ամէն գիշեր երազ կը տեսնեմ... Անցեալ օր տեսայ որ կը մեռնէի: Ո՛չ այդ ժամուն քովս էիր դուն, սիրականս, եւ ո՛չ ալ երբ արթնցայ: Ա՛խ, ինչո՞ւ իրաւ չէր, ինչո՞ւ չմեռայ:—Որովհետեւ արդէն մեռած եմ:

Ես ո՛չ բանաստեղծ եմ ոչ գիտնական. ո՛չ մեռած եմ ո՛չ կենդանի:

Բանաստեղծ եմ, գիտնական ալ եմ. եւ մեռած եմ եւ կենդանի:

Բանաստեղծները երգ պիտի գրեն վրաս, երբոր աշխարհ ծիծաղի: Բժիշկները գիւտ մը պիտի ընեն իմ մէջս, իմ վրաս, ինձմով, նոր տեսակ ցա՛ւ մը: Ու ոչ ոքի պիտի յաջողուի դարման մը գտնել:

Անուն չունիմ: Բարեկամ չունիմ: Տուն չունիմ:

Անունս Հառաչանք է, Տենչ է, Կարօտ է անունս: Աստուած մը ըլլալ կ'ուզեմ ես:

Բարեկամս Սէրն է. Տիեզերքն է բնականս. տունս կ'որմափակուի Անհունին սարսափներովը:

Թ

Տասը տարի կայ. Չիս ամէն աստու կը զըրկէին ամբարը, գարնան աղուոր օրերուն: Գեղացիները կը թափէին հոն, իրենց սայլերը կը ցրքնէին դաշտին լայնարձակ տարածութեանը վրայ:

Իրենք ալ ամբարը կուգային, ու անդադար հայնոյելով, պոռչտալով ցորենը կը չափէին. բիւրբաւոր գրիւններ կը համրուէին:

Աղան, ամէն վայրկեան հրաման մը կը զըրկէր որ ուշադիր ըլլամ, ամբարէն դուրս չելլեմ,

չափողները խարդախութիւն չընեն . . .
 Աղան , ինքը , բարի մարդ էր . . . ամէն առ-
 տու եկեղեցի կ'երթար . . .
 Մայիսի աղուոր առաունները , ես , անօթի փո-
 րանց , փոշիի թանձր մառախուղը կը կլլէի . . .

+

Հայրս աղքատ էր . մենք շատուոր ընտանիք
 մըն էինք : Երբեմն ուտելիք չէինք ունենար :
 Ու հատիկ մը իսկ չէին տար ինձի լեռնակու-
 տակ ցորենէն . . .
 Կիրակի օրերը քաղաքին մէջէն չէի անցներ ,
 աղային աչքէն խոյս տալու համար : Այդ ատե-
 նէն ի վեր է որ դաշտ ու անտառ կը սիրեմ ես :
 Հովը ինձի հառաչել սորվեցուց , փոթորիկը՝
 որոտալ , ոռնալ : Ատողերն ինձի լալ սորվե-
 ցուցին , թռչունները՝ սիրել : Եղեւինը լոփկ կո-
 ծել , մաշիլ սորվեցուց ինձի , ու եղնիկը՝ ար-
 տասուել : Առուակը խորհրդակոծել սորվեցուց
 ինձի , չքաւորութիւնը կռուել սորվեցուց ինձի .
 իսկ մարդոց կեղծաւորութիւնը՝ աղաղակել
 բարձրաձայն :

Տժգոյն եւ անօթի տղաքներ կը վազվուտէին
 փոշեկից ու աղտոտ քաղաքի մը փողոցներուն
 երկայնքը . մօտեցայ անոնց . ու չէի կրնար
 խօսիլ . կտոր մը հաց տուի :
 Քաղցատանջ եւ անբարբառ շուներու պէս՝
 կարմիր աչքերնին արտայայտող ապուշութեամբ
 մը դարձուցին ինձի , հացի կտորը մէջերնին
 բաժնեցին , եւ սկսան կրծել :
 Կուշտ փորով դամիւռ մը վրաս յարձակեցաւ ,
 զիս պիտի փառատէր : «Ես ատոնց համար դա-
 գաղ եմ պատրաստեր , ըսաւ , մե՛ղք հացին ,
 մե՛ղք դագաղներուս . . .»
 Սիրականս , որմէ պաշտպանութիւն ու գուր-
 գուրանք կը սպասէի , «փառատէր մըն ես դուն»
 ըսաւ ինձի :
 Ես միայն ցաւեցայ անոր համար որ չէր հաս-
 կըցած զիս տակաւին , — ի՛նք էր իմ փառքս ,
 եւ ես զի՛նքը կըսիրէի միայն : . . .

ԺԱ

Երակներուս մէջ թոյն է վազեր , աչքերս ա-
 պակի են դարձեր . Ա՛ստուած , ի՛նչ ցաւ է սա :
 Աղջամուղջը ծածկեց խիտ ու լայն անտառը ,
 — ուխտատեղիս . տիեզերքը բոլոր խաւարով
 ծածկուեցաւ ու տրտմութիւնը ծածկեց հոգիս :
 Ե՛րբ պիտի տեսնես արդեօք , Ե՛նովա՛յ . տե՛ս ,
 կա՛յ ուրիշ մէկն ալ , որ տառապի ինձի չափ :
 Սասանեցաւ հոգիս :
 Սպառեցաւ ոյժը բազուկներուս ու ջիղերս
 հալեցան :

ԺԲ

Օր մը օձիքէն բռնեցի ու բռնի սննեակս տա-
 րի զինքը . հոն պաղատեցայ . « Ա՛ստուած ,
 կամ մեռի՛ր անգամ մըն ալ . . . կամ մեռցո՛ւր
 զիս , հուսա՛ , հիւսա՛ . ա՛լ չեմ գիմանար :
 «Նայէ՛ , նայէ՛՝ անգամ մը տառապանքիս , կը

քաշուի՞ աս . երբեմն միտքէս կ'անցնեն թէ ,
 մեղա՛յ , գթութիւնդ արդեօք կը բաւէ՞ զիս ըս-
 փոփելու եւ վերստին ապրեցնելու . . .»
 Երբ հառաչեցի , սրախս լեռ մը փրթաւ իր
 հիմերովը , ու հոն ծով մը կաղմուեցաւ արիւնի
 ու արցունքի :

ԺԳ

Մութ ամպերուն մէջէն ծագեց առաւուան
 լոյսը աչքերուս , յոյսս ծովէն ելաւ :
 Եւ ես հրճուեցայ յաջորդ առաւօտը այն սեւ
 իրիկուան ուր արցունքով խոոված գլուխս
 բարձին դրեր էի :
 Տէրն է իմ օգնականս , ու ամէն մարդ թող
 այսպէս ըսէ . ես չպիտի ըլլամ ամօթապարտ :
 Ո՛վ է որ բարձունքէն կը դիտէ մարդոց որ-
 դիները , անոնց վաղը ո՞վ կը պատրաստէ :
 Հրճուեցուց զիս մանուկի մը պէս իմ ցաւի
 առաւօտիս . ու մահիճէս , իբրեւ գերեզմանի մը
 կուշտէն , վարդի պէս ծաղկեցուց կորովս ջլա-
 տուած :

ԺԴ

Այն ատենը ծանր հիւանդ էիր դուն : Սրտիդ
 վէրքին համար դացի ամէն տեղ փնտոտեցի ա-
 մենարոյժ սպեղանիս :
 Ժամագործի մը խանութը մտայ : Հոգեվար-
 քի մէջ էիր դուն այդ օրը : Հացուցի թէ ժա-
 մանակ կը ծախես . . .
 Խենթ կարծեցին զիս ու վճռեցին :
 Այդ օրէն ի վեր , կը յիշեմ , հարիւրաւոր ժա-
 մացոյցներ թիք-թաք կ'աշխատէին : Աչքս վե-
 րուցի նայեցայ , ոչ մէկ ժամացոյց կը ցուցնէր
 միւսին պէս . ամենքն ալ օրուան տարբեր տար-
 բեր ժամանակները կը ցուցնէին . ո՞րը ձիւղ էր ,
 ստ չեմ գիտեր :
 Այդպէս ալ է ամբօխը , ամէն մարդ բան մը
 կը խօսի , ու մէկին խօսածը միւսին հաւատացու-
 ցածին պէս չէ . ինչո՞ւ պէտք է ականջ կախես
 խուժանին որ հազար բերան ունի եւ սակայն
 ոչ մէկ աչք , սիրելիս :
 Դուն զիս չե՞ս ճանչնար , ի՛մ ժամացոյցիս
 հաւատա դուն : . . . Դեռ պէտք չէ լքանենք
 զիրար . սիրելու ժամանակ ունինք . . .

ԺԵ

Նետածիգ ու նիզակաւորներ , որ պատերազ-
 մէն կը դառնաք , դեռ մի՛ վար դնէք ձեր զէն-
 քերը , նշան առէք հոգիիս եւ սպաննեցէք զա-
 նիկա :
 Պատերազմի դաշտին վրայ , շատ անմեղ ա-
 րիւն թափեցիք . կը քաւուին ձեր բոլո՛ր մեղ-
 քերը եթէ նետահարէք հոգիս եւ սրտիս տաք
 հանգիստը գերեզմանին :
 Լեռներէն ինկայ , ու թէպէս ջարդուփշուր
 պորուեցայ անդունդ , եւ սակայն տակաւին
 մողէսի մը յօշոտուած մարմնոյն կտորուանքնե-
 րուն պէս են իմ ջախջախուած մարմնոյս մա-
 սունքն , ալ ու չե՛ն մեռնիր :

ժԶ

Միտքս ատենօք վճիտ էր, ջինջ ու պայծառ, հիմա ամպոտ է սն ու պղտոր :

Ու խոյս տուի ինքզինքէս :

Նախ ծովէն փախայ, ու ծովին ջուրերը երեսին կը թքնէին. որոտագոչ կոհակներ «վա՛տ» կ'աղաղակէին ետեւէս. ու ես սարսափահար կայմերուն կը փաթթուէի :

Եւ երբ ցամաքի ճամբան բռնեցի, ճանապարհին փուշերը վիրաւորեցին զիս. արինչուայ կիսամեռ թողուցին զիս ճամբուն վրայ :

Ո՛վ Սամարուհի, եկուր կապէ՛ վէրքերս ու զիս սննեակդ տար : Թերեւս կ'աղեկնամ եւ կը կանգնիմ վերստին :

Եղո՛ւկ, կանգնուածս յիշել պիտի տայ սակայն թէ անկում մը տեղի ունեցած է : Եւ անկումն է ստեղծի :

Ինկա՛յ, ու կտորեցան ծունկերս, ընթացքս կասեցաւ եւ ես կորսուեցայ :

Ա՛ստուած, թերի հաւատքովս իսկ քեզի դիմեցի եւ աղաղակեցի զիշերները :

— «Ի զո՛ւր կը պոռաս. ըսին ինձի, որո՞ւ կը խօսիս :»

— «Աստուած մը կար հին, բարի, ո՞ւր է Ան հիմա» :

— «Չենք գիտեր», ըսին :

— «Ես հատ մը ինձի համար յատկապէս ստեղծեք եմ, պատասխանեցի իրենց, անպատճառ պէտք ունիմ մէկ հատի» :

Եւ աչքերնին ու բերաննին լայն լայն բացած ինձի կը նայէին . . .

ժԷ

Ղօղանջը զանգակներուն, եւ փողերուն զընդհանր դատաստանը յարուցին :

Ու զօղանջեցին զանգակները, փողերը հընչուեցան եւ լէգէտներ թափեցան դուրս սանդղարամէտէն :

Եւ հուր ցանեցին երկրին երեսը . . . մահը հեղեղուեցաւ արիւնի գոյնով :

Սրբուհի ճապաղիքը հալեցուց սառած գետինը աշնանավերջի :

Ես ծովն ինկայ, ալիքները քշեցին տարին զիս ու քարերուն զարկին. պաղ ջուրերու հըպու՛մէն ընդոստ արթնցայ :

Ա՛լ իմ տունս չէի գտնուեր, օտար աշխարհ մը փոխադրուեր էի, ուր՝ նոր մարդոց հետ չըփու՛մս քարերուն զարնուելու պէս էր :

Երազ չէր աս, — տեսի՛լք մը զարհուրելի . . .

ժԸ

Երբ քեզի կ'աղաղակէի ճայնամբարձ, ձեռնամբարձ, եւ աղաներուն ձեռքէն արցունք կը թափէի, ո՛վ իմ Աստուածս, զիս հայր ըրիր զաւակներու :

Ու ատիկա իմ մխիթարութիւնս եղաւ, ու զաւակներովս օրհնեցիր զիս :

Օրհնէ՛ զանոնք, Տէ՛ր, ու թող մէկտեղ բնակին յափտեան :

Յայտնէ՛ անոնց որ, իրենք օրհնուա՛ծ են քեզմով, ու զիտեն իրենց պարտականութիւնը դէպի քեզ եւ դէպի իրենց ընկերը. ասոր համար ալ երջանիկ թող ըլլան :

Մարիամ-Յակովբային պէս չպիտի խնդրեմ, Տէ՛ր, որ երբ գաս թագաւորութիւնովդ, անոնք նստին աջ ու ձախ կողմերդ :

Սյլ պիտի աղօթեմ որ ազգերու հայր ըլլան, Յովսէփ եւ Բենիամին, Մովսէս եւ Յուդայ :

Եւ ա՛յնքան իմաստուն ըլլան որքան բարի, եւ այնքան շնորհալի ըլլան որքան պարտաճանաչ, եւ այնքան զարգանան որ իրենց չարչարուած Հայրենիքին մխիթարանք ըլլան, եւ ա՛յնքան ազնիւ ըլլան որ պսակին արիւնոտ ճակատը իրենց Հայրենիքին :

Ինչո՞ւ սխուր եմ չատ անգամ ու սեւ պատկերներ կ'ահարեկին զիս :

Դուն ինձի մե՛ծ մե՛ծ խոստումներ ըրիր, կըք քեզ տեսայ առաջին անգամ, ո՛վ խանդավառութեան Աստուած. վանքի սեմերուն վրայ, կէս գիշերուան լուսնին կարմիր շողերուն տակ, երբոր պա՛ղ շրթունքս կը քսէի, դուն չըսի՛ր որ չյուսահասարիմ :

Եւ հիմա, ահա ընկղմելու մօտ եմ, երկնցո՛ւր ձեռքդ ու սրտայնդ՝ սիրելիներս. ես անոնցմով պիտի զօրանամ :

Չաւակներս թող գիտնան որ իմ հետս ես, ահա ասոր համար զիրենք ինձի պարգեւեցիր :

Եւ եթէ իմ հետս ես, անո՛նց ալ հետ ես. եւ իրենք կ'ապրին ինձի՛ համար ինչպէս ես կ'ապրիմ քեզի համար :

Եւ դուն ու ես, եւ անոնք ու դուն, եւ ես ու անոնք, ամենքնիս կ'ապրինք մեր մօրը, մեր Հայրենիքին համար :

Մովը երբոր մոնչեց, ես ծովափը կը թափառէի. մութ մութ գիշեր մըն էր ձմրան. ու երբ ծովը մոնչեց, հովերը ոռնացին, վժացին. ըսի. «Ուրեմն մօտ է գալուստդ» ու ստեղծեցի :

Եւ իսկոյն մտածել սկսայ. տեսայ որ ինչպէս ես՝ նոյնպէս ալ դուն կը դոռաս կը մոնչես ու անվճռական կը մնաս գութի եւ պատիժի մէջտեղը :

Կ'ուզես որ մարդիկ ապրին եւ երջանի՛կ ըլլան, եւ երբ տեսար որ կորուստի ճամբան կ'ընթանայ ապուշ մարդկութիւնը, երկար ու երկար դարեր անվճռական շուարած կը մնաս :

Պատժե՛լ, կը մեղքնաս. խրատե՛ս, անսաստ են. թողու՛ որ ապրի՛ն, կորուստի ճամբան կ'երթան. եւ յուսահատ կուլաս :

Ա՛խ, երանի թէ օգնէիր ինձի, զօրացնէիր զիս, եւ ես ալ օգնէի քեզի, պատրաստելով Հայոց սրտերը եւ սիրելով զիրենք :

Կ'ուզեմ քեզի պէ՛ս ըլլալ. Աստուա՛ծ մը :

Փողեր գոռացին եւ զանգակներ հնչուեցան. այն ատեն բացուեցան դժոխքի դուռները, եւ գարշահոտ գոլորչիքի խոյժին հետ դուրս պոռթ-

կաց ամբողջը ծոյլ ու արիւնածարաւ գաղանձե-
րուն :

Մերկ սուրբը շողացին տխուր օրուան մը ա-
րեւին լոյսովը , աշտարակներու բարձունքին ա-
ղաղակներ լսուեցան . «Անէ՛ճք Բրիտանոսին» :

«Հատցուցէ՛ք, ջնջեցէ՛ք այդ խորհրդաւոր ժու-
ղովուրդը . փա՛ռք մարդարէին» :

Իուն այդ պահուն հիւրանոցդ էիր . իսկոյն ,
զիւանասրահդ մտար , արձանագրեցիր եղածներն
ու ըլլալիքները , եւ որոշեցիր , — գիտե՛մ , ո՛վ
իմ Աստուածս , որոշեցիր դուն , «Այս ժողովուր-
դը արժանի է փրկութեան» .

Ու երկնագունդը «Ամէ՛ն» աղաղակեց :

(Անգլիա)

ԽՈՍՐՈՎ



ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

ՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ



Նուպար փաշայի մահը եւրոպական դէպ-
քի մը համեմատութիւնները առաւ : Անգլի-
ոյ Թագուհին , լորա Սոլդպէրի , խտիւրը , եւ
բազմաթիւ զիւանագիտական , գրական եւ աշ-
խարհիկ անձնաւորութիւններ ցաւակցական հե-
ռագիր ուղղած են մեծարոյ այրիին : Տիկին
Նուպար փաշա , որ այնքան գորովատ որքան
կորովի ընկերուհին եղած է այդ պաշարալից
կեանքին եւ զոր հանդուցեալը հիացական ու
հիանալի պաշտումով մը կը սիրէր , իր այդ ա-
հաւոր կորուստին մէջ կրնայ տեսակ մը բարձր
սփոփանք գտնել ի տես այս տիեզերական ցա-
ւակցութեան որ պաշարէ իր սուզը : Եւրոպա-
կան մամուլը ընդարձակ յօդուածներ նուիրեց
գործիչին որ անհետացաւ եւ գործին որ անկո-
րուստ է . այդ յօդուածներէն մէկ քանին կը
թարգմանենք ստորեւ : Յուզարկաւորութիւնը
պիտի կատարուի եզրափակման կառավարու-
թեան խնամքով , եւ պատմական հանդիսաւո-
րութեամբ մը , Աղեքսանդրիոյ մէջ , ուր Նու-
պար փափաք յայտնած է թաղուիլ , — իր այն-
քան խանդաղատալից ընտանեկորութեան վեր-
ջին ապացոյց մըն ալ տալով , — իր Առաքել
եղբօրը եւ Պօղոս հօրեղբօրը քով : Բովանդակ
Եգիպտոսի համար , այդ յուզարկաւորութեան
օրը ազգային սուգի օր մը պիտի ըլլայ , բոլոր
պաշտօնատուներն ու վաճառատուները գոց պի-
տի մնան , ըստ կառավարական որոշման , եւ նոյն
օրը Լոնտոնի Սէնթ-Բեթըրս եկեղեցւոյն մէջ հո-
գեհանգոտի արարողութիւն մը պիտի կատարուի
ի յիշատակ Նուպար փաշայի :



ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Ծնած 1825ին՝ Իզմիր , Նուպար փաշա հայ-
կական ծագումէ էր : Ֆրանսական կրթութիւն
մը ստացաւ Սորէզի դպրոցը , ուր իրեն աշա-
կերտակից ունեցաւ էքզլ-Սանթուալի ապագայ

տնօրէն մը զոր ուղեց յետոյ Եգիպտոսի հան-
րային գործոց նախարար կարգել :

Իր հօրեղբայրն է , Պօղոս պէյը , որ , զինքը
Եգիպտոս կանչելով , անոր ապագան ապահո-
վեց : Տասնեօթը տարեկան էր այն ատեն :

Եգիպտոսը , Մեհմէտ-Ալիի օրով , բաց դաշտ
մըն էր ամէն տեսակ կարողութեանց առջեւ :
Նուպարի կարողութիւնները քաղաքագիտու-
թեան համար՝ սովորական մակարդակէն բարձր
էին :

Իր հօրեղբօրը հայկական շրջանակին մէջ է որ
մտերմութիւն կը հաստատէ յաջորդաբար Իպ-
րահիմ եւ Ապպաս փաշայի հետ : Իպրահիմին
կ'ընկերանայ Կ. Պոլիս՝ անոր մէկ ճամբորդու-
թեանը մէջ , եւ սուլթանին արքունիքին ամե-
նէն ազդեցիկ անձերուն համակրութիւնը կը
գրաւէ : Ապպասին կը յարի երբ անի իշխանու-
թեան գլուխը կ'անցնի 1849ին , անոր ընթեր-
ցողը , քարտուղարը , եւ խորհրդականը կ'ըլլայ :
1850ին մասնաւոր պաշտօնով Լոնտոն կը զըր-
կուի , պաշտպանելու համար Եգիպտոսը Թուր-
քիոյ դէմ եւ 1853ին Վիեննայի դեսպան կ'ան-
ուանուի : Բասնըլութը տարեկան երիտասարդը
այդ վայրկեանէն կը թուէր արդէն յղացած ըլ-
լալ ինքնօրէն Եգիպտոսի մը յատակագիծը եւ
կը ջանար քակել այն շատ սեղմ կապերը որ
զայն Թուրքիոյ կը կապէին :

Բայց ստիպուեցաւ պալատի յեղափոխու-
թիւնները հաշուի գնել : 1854ին , Ապպաս սպան-
նուեցաւ եւ Սայիտ փաշա իշխանութեան գլու-
խը անցաւ : Արդ , Սայիտ կը կասկածէր Նուպա-
րէն : Վիեննայի մէջ Նուպարին տեղ ուրիշ մը
գրաւ , եւ փոխանակ զայն արքունիքը մտցնե-
լու , առաւ անոր Եգիպտոսի երկաթուղիներուն
տնօրէնի համարժէք պաշտօն մը : Դեսպանու-
թենէն , Նուպար-պէյ անցաւ վարչագէտ կազմա-
կերպիչ ըլլալու , եւ այդ նոր սահմանին մէջ
յաղթանակեց , ինչպէս միւսին մէջ , Հնդկաս-
տանի տրամանցութիւնը (transit) կազմակեր-
պելով Աղեքսանդրիայի , Գահիրէի եւ Սուէզի
ճամբով : Նոյն իսկ այս նոր պաշտօնները զին-
քը առաջուց պատրաստեցին եւ կապեցին ար-
դի Եգիպտոսին մեծագոյն գործին , Սուէզի ջը-
րանցքին պեղմանը : Նուպար փաշա այսպէսով
իր գիրքը վերստին ձեռք կը ձգէր բարձր պայ-
քարով մը , եւ Սայիտ փաշա զինքը նորէն ար-
տասովոր պաշտօնով կը զրկէր Վիեննա :

Եգիպտոս գտնուած միջոցին , Նուպար բա-
րեկամը եղած էր երիտասարդ իշխան Իսմա-
յիլին , որ զանաժառանգ Ահմէտ իշխանին կըրտ-
սեր եղբայրն էր : Ահմէտ զո՛ր երթալով երկա-
թուղիի արկածի մը , Իսմայիլ փոխարքայ կ'ըլ-
լայ : Նուպարի բաղդը այլեւս ապահովուած է :

Այնքան անձնուէր իր տիրոջը սրքան իր
գաղափարին , կը պնդէ Պոլսոյ մէջ , ուր զըր-
կուած է իբր պատգամաւոր զահակալութեան ,
ի նպատակ եգիպտական ինքնավարութեան եւ
միանգամայն բաճախու համար խոչընդոտները
չոր Թուրքիա կը յարուցանէ Սուէզի ջրանցքին
պեղմանը : Յետոյ փաշայութեան տիրոջս կ'ըն-

գունի եւ կը կարգուի նախարար հանրային գործոց . վերջապէս 1866ին , արտաքին գործոց նախարար : 1867ին , կը յաջողի սուլթանէն խլել «Ստիլ» տիպոսը Եգիպտոսի փոխարքային համար , ինչպէս նաեւ կէս-անկախութիւն մը : Իր առաջին մեծ մտածումը գրեթէ կատարուած է :

Այնուհետեւ , ինքզինքը կը նուիրէ դատարանական բարենորոգման , ամենակարեւոր ծառայութիւններ մատուցանելէ յետոյ , ի Բարիզ ինչպէս ի Գահիրէ , Սուէզի ջրանցքին ձեռնարկին : Երկրի մը մէջ ուր կը խառնուէին բոլոր իրաւասութիւնները , ուր խաբիթիւրախոններու գրութիւնը կը թոյլատրէր օտարականներուն որ երկրին օրէնքներէն զերծ մնային , պէտք էր կազմակերպել միակերպ ու յարգուած միջազգային արդարութիւն մը : Բոլոր Պետութիւնները պէտք էր որ հաւանէին ատոր : Դիւրին է երեւակայել ս'րքան դանդաղ ու դժուար եղած ըլլալու են բանակցութիւնները : Նուպար փաշա հազիւ թէ բարենորոգեալ դատարանները հաստատած էր , եւ անա նոյն իսկ Եգիպտոսի գոյութիւնը վրտանալի տակ ինկաւ , Իսմայիլի պատճառով : Երևտական կործանումը կատարեալ էր : Նուպար փաշա ընդունեցաւ Ֆրանքո-անգլիական ֆոնտրոնիտումը եւ անոր ծառայեց : Յետոյ , երբ Եգիպտոսի անգլիական գրաւումը կատարուած իրողութիւն մը եղաւ , զարձեալ ընդունեցաւ ինչ որ Ֆրանսան ալ ընդունած էր : Բայց , մէկէ աւելի անգամներ , իբրեւ նախարար , եւ միշտ իբր պաշտօնեայ , ցուցուց թէ երբեմնի Նուպարը մնացած էր , հաւատարիմ «Եգիպտոսը Եգիպտոսին համար» նշանաբանին , ժամանակաւոր կերպով հպատակած՝ օտար միջամտութեան , Բայց երբեք յանձնառու՝ անոր ծառայել կամ զայն երկարացնելու :

Իր բնած ընթացքը վարչագէտի մը ընթացքն էր որ , բարիքին համար երկրի մը որուն հոգը վրան առած է , կ'ուզէ զերծ պահել զանի , որչափ որ կարելի է , օտարական պաշտօնեաներուն լուծէն : Այդ կէտին վրայ , յաճախ հակառակեցաւ Ֆրանսայի դիւանագիտական գործունէութեան : Բայց անգլիական իշխանութեանց աւելեւ աւելի ձկուն չգտնուեցաւ : Եթէ ուզեց մեր Պոսփոռ էմիրաթին լրագիրը ջնջել եւ չյաջողեցաւ , նոյն Նուպարն է որ ուզեց նեղացուցիչ անգլիական պաշտօնեայ Լոյսը ճամբու դնել , եւ յաջողեցաւ :

Վերջապէս , 1888ին , վճռականապէս կռուի մտաւ լսրտ Բրոմբերի հետ , եւ տկար Թէվֆիքին քով բաւական նեցուկ չգտնելով , ստիպուեցաւ քաշուիլ : Դեռատի Ապպապը աւելի կորովի խառնուածք մը թուելով իրեն , 1894ին զարձեալ ընդունեցաւ պաշտօնի գլուխ անցնիլ : Բայց տարիքէն եւ ատողական վիճակէն բռնադատուած , եւ արդէն այլեւս ինքզինքն անկարող զգալով իրականացնելու իր քիչ մը ցնորական երազը որով կը կարծէր պահել վարչականապէս ինքնավար Եգիպտոս մը՝ օտար սուլթաններու տակ , քանի մը ամսէն գործէ վերջնապէս քաշուեցաւ :

Բայց իր գլխաւոր գործը կը մնայ : Սրբարութիւնը կը տիրէ Եգիպտոսի մէջ : Խառն Գառաբանները , որոնց գոյութիւնը վտանգի մէջ կը թուէր , պաշտօնավարման երկարաձգում մը ընդունած են նորէն :

Նուպար փաշայի վերջին տարիները տառապանքով լեցուն եղան , Ֆիզիքական տառապանք՝ արդիւնք երկարատեւ հիւանդութեան մը , բարոյական տառապանք զոր կը պատճառէին Հայաստանի ողբալի զէպքերը : Նուպար փաշա ոչինչ իննայած է մեղմացնելու համար , իր կրքյածին չափ , իր ժողովրդին թշուառութիւնը : Գահիրէ ինչպէս Բարիզ , շատ մը նպաստամատոյց յանձնախուժներու հոգին եղաւ :

Իր վախճանին արտմութեանցը մէջ , յաճախ ցաւի աղաղակներ արձակեց՝ իմանալով Հայոց կրած տառապանքները եւ կարելի է ըսել թէ իրեններուն հետ ինք ալ բարոյապէս խաշուեցաւ :

Կրնանք ցաւ զգալ որ Նուպար փաշայի ծրագիրները միշտ համաձայն չեն գտնուած Եգիպտոսի մէջ մեր քաղաքականութեան ընթացքին հետ : Բայց պէտք է յիշել նաեւ թէ Նուպարի կեանքին ամենամեծ մասին մէջ՝ մեր իրաւագիտութիւնը , մեր լեզուն , մեր պղքեցութիւնն է որ տիրեցին Նեղոսի եզերքներուն վրայ : Վերջապէս , Բարիզի մէջ է որ եկաւ մենիլ Նուպար փաշա , որ անվիճելի կերպով դարուս մեծագոյն պետական մարդոցմէ մին եղաւ :

(Թան , — 16 յուն . 99)

Հայազգի Նուպարը կը պատկանէր այդ զբժբաղչ ու ցրուած ցեղին որ իր զանազան տէրերուն տուած կամ ընդդիմադրած է մէկ քանի առաջնակարգ քաղաքագէտներ , Լորիս Մելիքոֆը , Ազարեան պատրիարքը , Նուպար փաշան , յիշելով միայն երեքը՝ անոնցմէ զոր մըտերմարար ճանչցած եմ : Լորիս կրցաւ իր տաղանդը ցուցնել կայսրութեան մը կատարը : Պարագանքէն նուազ նպաստաւորուած , նոյնքան լաւ օժտուած , միւս երկուքը ինծի երեւցած են հաւասար , եթէ ոչ գերադաս , այն պետական մարդոց որոնց գործերը տեսած եմ եւրոպական բարձրագոյն պաշտօններուն մէջ : Պերճախօսութիւն , համոզողական ձիրք , նկարագրի տոկունութիւն , հրաշալի կերպով ճապուկ իմացականութեան մէջ բեղմնաւոր հնարագիտութիւն , ոչինչ պիտի պակսէր իրենց՝ աւելի ընդարձակ եւ աւելի ազատ թատերարեմի մը վրայ , նշանաւոր դառնալու համար այն զեղեցիկ գործերով կամ այն մեծ անամօթութիւններով որոնք անուն մը յաւերժաբար կը սեւեռեն մարդոց հիացմանը մէջ :

Նուպարի ճակատագրին մէջ սա ողբերգական պարագան ներկայացաւ որ անոր հանձարը մաշեցաւ սպերախտ նիւթի մը վրայ , չափազանց տկար նեցուկ իր ուժեղ խորհուրդներուն : Կը նմանէր ճարտար քանդակագործի մը , որ միշտ կը փնտսէ եւ երբեք չի գտներ կաւ մը զոր կարենայ իր երազին ձեւովը զանգել :

Իզմիրցի ընտանիքի մը զաւակ, Սորէզի մէջ կատարեալ կրթութիւն մը ստացած, Եգիպտոս ինկած՝ մզմամբը այն դիպուածի հովերէն մէկուն որոնք թափառիկ արեւելցիներուն պատահական հայրենիք մը կը սահմանեն, այդ Հայը իր որդեգրած հայրենիքը զերծանելու ծրագիրը յղացաւ զանի ձեռքէ ձեռք քաշող ասիական կամ եւրոպական տէրերուն լուծէն: Երեսուն տարի մաքառեցաւ ինքնօրէն պետութեան մը վերափոխելու համար թրքական մեծ նաւաբեկութեան այդ խլեակը, անկախ ազգի մը վիճակին հասցնելու համար այդ անուրդի դրուած ստրուկը: Պատմական օրէնքներուն նախասահմանութենէն յաղթահարուած, ծերացաւ անուշի յուսահատութեանը մէջ մարդեր վարել գիտցողի մը որուն մարդիկ կը պակսին:

Իր վարչագէտի եւ զիւանագէտի չափը այն ատեն կրցաւ տալ երբ փոխարքայ եղաւ Իսմայիլ, որ զանի իր յօժար կամքովը ընտրած էր: Անոնք որ տեսած են՝ կը յիշեն, եւ անոնք որ չեն տեսած՝ երբեք պիտի չկրնան երեւակայել թէ ի՞նչպիսի զիւթական պերճանք մը ունեցաւ Եգիպտոսը այդ միլիաններ լափող տասնասերկու շողջողուն տարիներուն միջոցին: Հարեւանցի դիտողներուն այնպէս կը թուէր, —ու Եւրոպայի մէջ շատեր խաբուեցան— թէ նոր Փարաուն մը ափրիկեան մեծ իշխանութիւնը կը վերակենդանացնէր, հին օրերու հզօր ու փայլուն քաղաքակրթութիւնը: Արդարութեան պարտք մըն է Նուպարին վերագրել, որ այդ վաղանցուկ մեծութեան արուեստագործն էր, արժանիքը այն ամուր մասերուն որոնցմով այդ մեծութիւնը կրցաւ ինքզինքը բռնել: Այդ վէտերը, որ Գահիրէի Հարուն-էլ-Ռաշիտին խորհրդատունն ու չափաւորողն էր, արդի ոգւով Տէրութեան մը պատկերը ուրուագրեց Արեւելքի մէջ. ի զուր յուսաց անոր կառուցումը ամբողջացնել, եւ զայն պաշտպանել այն ցանկութիւններուն դէմ զոր այդ կրկնորեւոյթը բորբոքած էր:

Իր ճարտարութիւնը յաջողեցաւ նախ ստեղծել այն գործիքը որուն պէտք ունէր գործելու համար, —իրապէս անկախ Եգիպտոս մը՝ Սուլթանին անուանական գերիշխանութեան տակ: Ճարպիկ բանակցողը Կ. Պոլիս եկաւ, ոսկի բանալիներովը. Բ. Դունէն խլեց 1867ի Ֆերմանները եւ «Ստիվ» երկգիմի տիտղոսը որ եգիպտական ինքնօրինութիւնը կը նուիրագործէր: Յետոյ իր զիւանագիտական տաղանդը — եւ թերեւս իր ոսկի բանալիներն ալ — փոխադրեց Բարիզ, այն Բարիզը ուր այն ատեն կը կարգադուէին աշխարհիս գործերը, եւ մասնաւորապէս Նեղոսի հովաթին վերաբերեալները: Ասոնք ստորագրատուած էին այն փշալից ինչդիրներուն զոր կը յարուցանէր ջրանցքին պեղումը. Նուպար՝ Կայսրը պաշարեց իր գրաւիչ հրքայոյրովը, հարթեց ջրանցքին հետ կապ ունեցող դժուարութիւնները, եւ այս ամենէն յետոյ, նոյն իսկ իր տիրոջը գրեթէ վեհապետա-

կան յաւակնութիւնները ընդունելի դարձուց: Դիւրին չէր գործածել այդ աէրը, անստոյգ նեցուկ եւ մշտական խոչընդոտ իր նախարարին օգտակար խորհուրդներուն, մսխող, նենգամիտ, խանութպաններու ամենէն վարպետորդին, արեւելեան միապետներու ամենէն խորամանկը՝ քաղաքակրթութեամբ նրբացածի ազատական ճոռումբանութեան ու մարդահաճոյ դիմակին ներքեւ: Կոչում կ'ընեմ յիշողութեանը ամէն անոնց որոնք գործ ունեցած են Սպտինի յափշտակիչ խաբերային հետը: Ի՞նչպէս սանձել անոր քմայքները, ի՞նչպէս քննութեան ենթարկել անոր անսահման կամայականութիւնը: Մէկ քանի Եւրոպացիներ, խորհրդարանական դրութեան միւսամուկ, կարծեցին կամ կարծել կեղծեցին թէ պիտի յաջողէին այդ գործն ի գլուխ հանել շնորհիւ այն սահմանադրական զաւեշտին որով Իսմայիլ փաշա պահ մը զուարճացաւ, այդ համբաւաւոր Գահիրէի խորհրդարանին ուր մեծ դժուարութիւնը ձախակողմնան կուսակցութիւն մը գտնելն էր, խաղալիքին լրջութեան երեւոյթ մը աալու համար: Ի զուր առաջուց կը վարժեցնէին երեսփոխանները որոնք «ոչ» մը պիտի արտասանէին Ստիվին կամքերուն դէմ. խարագանին ժառանգական վախը սորվուած զերը կը մոռցնէր: Նուպար այդ փուճ բաներով չէր դոնանար. փնտնեց եւ գտաւ վերաքննութեան գործիքը, որ իր մըտքին պարծանքը կը մնայ, զատարանական բարենորոգումը:

Երկու խօսքով կարելի է բացատրել ատոնց չիւնուածքը այն անձերուն որոնք մօտէն ծանօթութիւն չունին Գարիթիւլասիոններուն վրայ: Եգիպտոսի մէջ, քիչ շատ կարեւորութիւն ունեցող շահերը կը յանձնուէին իրենց հիւպատոսներուն պաշտպանութիւնը վայելող եւրոպացի կամ արեւելցի գործի մարդոց ձեռքը. եւ այդ շահերը մեծ մասամբ եգիպտական տէրութեան կամ տիեզերական յափշտակիչ Իսմայիլին անհատական կալուածներուն պատասխանատուութիւնը պայմանի տակ կը զնէին: Դատարանական վէճերը, զիւանագիտական պահանջմանց փոխուելով, լուծման չէին յանդեր երբ փոխարքան կը յաջողէր հիւպատոսներուն խաղ խաղալ, կամ խեղճ ֆելլահներուն ի վնաս լուծում մը կը գտնէին՝ երբ եւրոպական զօրութեան կշիռը յաղթանակել կուտար պահանջումներ որոնք ծայրայեղ էին յաճախ: Նուպար մտածեց հիւպատոսական գործունէութեան տեղը դնել Սաուն Դատարաններու իրաւասութիւնը, վարչութեանը տակ եւրոպացի դատաւորներու որոնք որոշ շրջանի մը համար անփոփոխելի էին, Ստիվին ուժիկ կ'ընդունէին եւ իբրաւունք պիտի ունենային քննել այն բոլոր խնդիրները որոնց մէջ օտարական մը դատախազ ըլլար:

Այս առաջարկութիւնը գրեթէ միաձայն ընդգիմութեան հանդիպեցաւ եւրոպական դանլիճներուն մէջ, մանաւանդ Ֆրանսա. մեր իրաւասութեան տակ եղողները ամենէն աւելի շահեր

ունենին հին եգիպտական գործերուն մէջ, եւ մինք մեզի սկզբունք ըրած էինք ամբողջ Արեւելքի մէջ հաստատ կենալ Բաբելոնի լատիններու ժայռին վրայ, որ մեր դարաւոր երաշխիքն էր: Ինչպէս հաւատալ թէ փոխարքան կարեւորութիւն պիտի տար զասարաններու գոր ինքը պիտի հաստատէր եւ վճարէր: Ատի՛ առանց երկարաբանութեան՝ մեր ազգայինները անոր կամայականութեանը յանձնել ըսել էր: Մեր համոզումն էր այդ, եւ անշուշտ Խորվիկն ալ թաքուն յոյսը. ապահովագէս կը սպասէր այդ բարենորոգումէն այն յոյսը արդիւնքները գոր մենք վախով կը զուշակէինք: Միայն Նուպարն էր որ իր գողափարին վրայ հաւատք ունէր: Եկաւ պայքարիլ բանակցութեանց կեդրոնատեղին, Կ. Պոլիս: Դեռ միտքս են այն կատաղի վիճարանութիւնները, զանոնք ներշնչողին կորովն ու ճարպկութիւնը. այդ կասկածելի, պարտքերով բեռնաւոր, եւ արդէն շատ տկարացած կէս-վեհապետին անդէն ներկայացուցիչը, կը մաքառէր դեսպանատանց հետ, թիզ առ թիզ վաստկուած հողին վրայ կամաց կամաց կը յառաջանար: Արեւելեան մեծ գաղանիքը ձեռք առաւ, այն է դահլիճներուն միջեւ պատակտում յառաջ բերել, զանոնք իրարու դէմ հանել. տարիներ տեւող տաժանելի պայքարէ մը յետոյ, յաջողեցաւ ուզածը ձեռք ձգել:

Խօստովանինք անկեղծաբար. իր հաւատքը իրաւունք ունէր մեր սկիստութեանը դէմ: Իրողութիւնը շուտով ատոր ապացոյցը տուաւ: Նոր դատաւորները անկախ եւ անկողմնակալ եղան. անոնց վճիռներուն ամէն ոք հնազանդեցաւ: Խտիվը պարտաւորեցաւ խոնարհիլ նոյն իսկ զինքը անձնապէս հարուածող վճիռներուն առջեւ. այդ յոռի պարտատէրը ստիպուեցաւ հատուցանել, երբ բարապանները Սպարտի պալատին վրայ փակցուցին անոր դէմ արձակուած կոչնագիրները: Ֆելլանը, այդ անձանօթ էակը՝ Արդարութիւնը տեսնելուն արմնցած, վատահոլութեամբ կը վազէր Բարենորոգեալ Դատարանները՝ երբ գանգատ մը ունենար ներկայացնելու: Նուպար գտած էր միակ ազդեցիկ վերաքննիչ իշխանութիւնը, միակ գործնական միջոցը՝ Արեւելքի մէջ կառավարական կամայականութիւնը սահմանաւորելու:

Ասի այնքան լաւ հասկցուեցաւ որ իսկոյն ինդիք ելաւ այդ դեղը գործածել «հիւանդ մարդուն» ամբողջ մարմնոյն: Հնարողին բուն բաղձանքն էր այդ. երազեց վէզիրութիւն մը, որ իրեն թոյլ տար թրքական պետութեան ամբողջութեան վրայ տարածել եգիպտոսի մէջ նախափորձուած դարմանումը: Խալիֆայութեան փրկութիւնը՝ միմիայն արդարութեան գորութեամբ: Չափազանց գեղեցիկ էր գաղափարը. անոր յաջողմանը համար երկու անիրականանալի պայմաններ կային, հիւանդին հաւանութիւնը, եւ հիւանդութիւնը սնուցանելու մէջ շահ ունեցող բժիշկներուն հաճութիւնը:

Նուպար արդէն ուրիշ հոգեր ունէր Գահիրէի մէջ, ուր մըրանսայի ու Անգլիոյ մրցակ-

ցութիւնը կ'աճէր օրէ օր, ուր այդ վերջինը հետզհետէ աւելի սպառնալիս միջոցներ ձեռք կ'առնէր: Իր տիրոջը պէս, միշտ ճօճանակի քաղաքականութիւնը բռնած էր երկու պետութեանց միջեւ: Մենք իրեն դառնապէս կը մեղադրէինք որ անգլիական մեքենայութեանց գործակից կ'ըլլար, այն շրջանին երբ մենք ամենէն հզօրը, ամենէն վտանգաւորը կ'երեւայինք: Խոստովանինք թէ լաւ փաստեր պիտի ունենար պաշտպանելու համար իր եգիպտական նախարարի եւ հայրենասէրի տեսակէտը: Մեր կողմը դարձաւ, երբ ճշմարիտ վտանգը ամենուն աչքին յայտնի երեւցաւ: Շատ ուշ էր: Ինքը մեր պակասը զգաց ինչպէս որ մենք ալ իր պակասը զգացած էինք:

1876 տարին տեսաւ մեր վերջին ճիգերը գոր թափեցինք մեր աւանդական կացութիւնը պահպանելու համար եգիպտոսի մէջ: . . . Այդ թուականին կրցայ դնահատել Նուպարի մտերմական յարաբերութեանց սիրունութիւնը: Այլ եւս աշխոյժ մարանչողը չէր որուն յարձակումները ետ մղած էինք Կ. Պոլսոյ մէջ, քանի մը տարի առաջ: Պաշտօնէն ինկած, վաղորդային վրայ մտահոգ, տխուր կը տեսնէր, եւ ճիշդ կը տեսնէր: Կը պահէր սակայն քաղցրութիւնը զարդարուն մտքի մը, բայց՝ ամէն գաղափարներու (անոնց անցքը կը տեսնէր մարդ իր շարժուն ու նուրբ դիմագծութեան վրայ), խանդավառ իր երկրին հնութեանց եւ զայն վերակենդանացնող խուզարկութեանց համար: Արուեստներու սիրող, մանաւանդ երաժշտութեան, կը մխիթարուէր իր Շուպրայի տանը մէջ՝ ունկընդրելով իր քնքուշ աղջիկը որուն տաղանդը պետական մարդուն հոգերը կը քնացնէր:

Երբ Անգլիացիք եգիպտոսը գրաւեցին, Նուպար ոգորեցաւ անոնց ձեռքէն ճողոպրելու վարչական ինքնօրէնութեան մէկ քանի ծուէններ, քանի մը տարի ալ ճարտարութեան իր վիժած ստեղծագործութիւններուն բեկորները ազատելու համար: Յետոյ, որովհետեւ այն պարզապետներն չէր որ կը կարծէին թէ գրաւումը ժամանակաւոր էր, գործէն ձեռք քաշեց, ելաւ հայրենիքէն: Ուրիշ երազներ իր մտքէն անցան, դեռ ինքզինքը ճակատագրէն պարտուած չհամարած. քանդակագործին դատարկ ձեռուրները ուրիշ կաւեր փնտռեցին զանգելու:

Օր մը, 1878ին, իրիկուան այն խօսակցութեանց մէկուն մէջ ուր կորչաքոֆ իշխանը յոգնութիւն կ'առնէր, ծերունի նախարարապետը ըսաւ ինձի մէկէն ի մէկ. «Նուպար փաշան Իկնաթիէֆին միջոցով ինձի առաջարկութիւն մը ըրեր է, կ'ուզէ կուսակալ անուանուիլ անկախ Պուլկարիոյ:» Իշխանը եգիպտական նախարարին վրայ խօսեցաւ անոր գործելու ճարտարութեանը մասին բարձր համարումով մը, բայց եղբակցուց իրաւամբ թէ ցեղերու հակառակութիւնը այս ցնորական բաղձանքին կ'ընդդիմանար. Հայ մը պիտի չկրնար երբեք այդ սլաւներուն վրայ հեղինակութիւն ունենալ: Նուպար կը ճզնէր արդարեւ որ զինքը գործա-

ծին իբր կառավարիչ այն փոքր ազգերէն մէկուն որոնք թրքական լուծէն կ'ազատագրուէին. իր ամենէն սիրական բաղձանքն էր իր ազգը վերանորոգել, հայկական տէրութեան մը վերածնութեանը նախադասել: Ծանօթ են այն աշխարհադրական եւ քաղաքական զժուարութիւնները որոնք այս բաղձանքը անիրագործելի կը դարձնէին: Հասկցաւ ասիկա, այլ եւս՝ եւ է բաղձանք չունեցաւ, լռիկ ծերացաւ մեր Բարիզին մէջ, հանգստաւէ՛տ ապաստանարան այն նաւաբեկեալներուն համար որոնք զբաւարկը ազատած են:

Է. ՄԵԼԻՒՈՒ ՏԸ ՎՈԿԻԻԷ (1)
(Ֆիկառօ. — 17 յուն. 99)

Նուպար փաշայի ընտանիքը երէկ կ'ընդունէր հետեւեալ հեռագիրը. «Մեծ կեանք մըն է որ կանգ կ'առնէ, մեծ իմացականութիւն մըն է որ կը չիջանի. կրնաք հպարտանալ իր յիշատակովը»: Այս հեռագիրը լաւ կ'ամփոփէ Նուպարի կեանքը, գործը եւ իր ջանքերով ձեռք ձգուած արդիւնքները: Եօթնաստուշորս տարեկան հասակին մէջ մեռաւ, թէպէտեւ ընդհանրապէս, — եւ իր կատարած բազմաթիւ մեծ պաշտօնները կը բացատրեն այս կէտը — ութսուն տարեկան կը համարուէր: Բայց մնացած էր ուղիղ ու բարձր, արրունքի թարմ ու պայծառ մոյշնքովը, համոզիչ ժպիտով, եւ խոր ու քաղցր նայուածքովն իր արեւելեան գեղեցիկ աչքերուն որոնք կը սքողէին իր մտքին սրութիւնը՝ պարզութեան երեւոյթով մը: Գրեթէ մինչեւ վերջը, նոյն իսկ ամենէն առեւի շարչարանքներուն մէջ, իր խօսակցութիւնը միշտ շահեկան էր. եռանդոտ ուշադրութեամբ մը հետեւած էր Սուտանի պատերազմին. նախատեսած էր զժուարութիւնները եւ գուշակած էր յաջողութիւնը, եւ գծած էր խանդավառութեամբ Սուտանի նոր Պետութեան ապագան: Արդէն այդ երկիրը կը ճանչնար, որովհետեւ իր եղբայրը Խարթումի կառավարիչ եղած միջոցին, գացած բաւական երկայն ատեն հոն մնացած էր. ջանացած էր տիրանալ Սուտանին՝ այդ երկիրը բարեբեր դարձնելով:

Յաճախ կը կրկնէր ինծի սա հակերձ բառերը որոնք ըստ իրեն՝ ամբողջ եգիպտական ծրագիրը կը համառօտէին. «Եգիպտոս երկու բանի պէտք ունի մեծ ու բարգաւաճ ըլլալու համար, արդարութեան եւ ջուրի»: Ուսգման միջոցներուն կատարելագործումները մեծ գոհունակութիւն կը պատճառէին իրեն. եւ մինչեւ վերջը հպարտութեամբ կը յիշէր իր Խառն Դատարան-

ները, զորս հաստատել յաջողեցաւ հակառակ բովանդակ Եւրոպայի ընդդիմութեան եւ անյօժարութեան: «Իսլամութեան Վոսփորի վրայ հաստատուելէն ի վեր, կ'ըսէր, Մահմետականը քսան անգամ Եւրոպան կործանման եղբը հասուցած է. Եւրոպա, հարիւր փորձական միջոցներով ջանացած է անկէջ ի վեր բժշկել արեւելեան հիւանդը եւ ազատել թէ ինքզինքը եւ թէ օսմանեան կայսրութիւնը: Միայն մէկ միջոց մը կայ, եւ ասիկա շատ պարզ միջոց մըն է զոր Եւրոպա չէ ընդունած կամ որուն վրայ չէ խորհած անգամ, այն է արդարութիւնը: Այն օրը որ Թուրքին կարենաք տալ ոչ միայն արդարութիւնը, այլ արդարութեան ըմբռնումը, պիտի ազատէք Թուրքիան ու Եւրոպան»: Նուպար փաշա մինչեւ վերջը Եգիպտոսի հաւատարիմ մնաց, արդարութեան բաշխումին եւ երկրագործութեան բարգաւաճման մէջ տեսնելով անոր մեծութիւնը եւ վերանորոգումը:

Վայրկեան մը Նուպար քիչ մնաց որ գահ մը պիտի բարձրանար. Եկաւ զիս գտաւ, երբ Պուլկարիոյ իշխանին ընտրութիւնը, ինչպէս որոշած էր Պերլինի վեհաժողովը, վէճի տակ էր: Ամէն մարդ գիտէր թէ պետութիւնները ով ընտրելնին շուարած էին. — «Ինչո՞ւ չէ, ըսի, ընտրելի մը եղէք»: Իմացայ որ լորտ Պիքընսֆիլտը, Կորչաքոֆ իշխանին եւ Շուվալով կոմսին հետ խօսակցած միջոցին, ձեր վրայ մեծ գովեստներ ըրեր է եւ անոնք ալ հաւանութիւն ցուցուցին եւ: Կոմս Անտրաշիին աչքը մտած էր, եւ Պ. Տիւֆոռ եւ Պ. Վատինկընո շատ մեծ համարում ունին ձեր վրայ իբրեւ պետական մարդ: Գալով Գերմանիոյ, վաղը պիտի իմանամ թէ այդ կողմէն ի՞նչ կրնաք յուսալ. եթէ ան ալ նպաստաւոր է, միայն Թուրքիան պիտի ունենաք ձեզի դէմ, բայց մինչեւ անգամ կ. Պուլտոյ մէջ համակրութիւններ կը վայելէք, յաջողութեանը համար այն պաշտօններուն որոնք ձեզի յանձնուած էին»: Նախ զողոքեց, բայց յետոյ ինծի արտօնեց որ տեղեկութիւն հաւաքեմ: Նոյն իրիկունը իշխան Հոնէնլոհէին հանդիպեցայ Սատրոնի մը մէջ, եւ միջնարարներուն՝ այս խնդրոյն վրայ վիճեցանք. գաղափարը իրեն հաճելի թուեցաւ: Հետեւեալ օրը տեսակցեցայ Պ. Տիւֆորի, Վատինկընի եւ լորտ Լայընսի հետ, եւ յետոյ խորհրդակցեցայ իշխան Պիզմարքին հետ, որ շատ հեռու էր ծրագիրը մերժելէ:

Դժբաղդաբար՝ Նուպարի համար, եւ կը համարձակիմ ըսել՝ ամենուն համար, իր Պուլտոյ թշնամիները, իմանալով անոր ընտրելիութիւնը, գայն հրապարակեցին, դեռ Թուսիա գայն իրապէս չքննած, եւ անոր արգելք եղան: Այս բանակցութիւններու միջոցին, յաճախ կը տեսնէի զինքը. երախտագէտ էր ինծի այն դիմումներուն համար զոր կ'ընէի. իմ առջիս երազներու անձնատուր կ'ըլլար: Երբեք այնքան մեծ հաճոյք մը զգացած չեմ որքան երբ մտիկ կ'ընէի Նուպարը որ իր յատակագիծներն ու յոյսերը կը

(1) Եօթն Մելիոռ տը Վոկիւէ դերկոմը, անգամ ֆրանսական ակադեմիային, եւ որ անուանի է իր «Ռուս վիպասանութիւնը» գրքով, դասպատան քարտուղար եղած է Ս. Բեզերսպուրի եւ Պոլիս, եւ մօտէն ճանչցած է Նուպար փաշան, ինչպէս եւ Լորիս Մելիքօֆը:

պարզէր : Կը հաւտամ որ եթէ իր ընտրելիութիւնը յաջողէր , Պալքանեան Թերակղզին պիտի տեսնէր այնպիսի վերկենցադում մը իր մեծութեան ու բարօրութեան լաւագոյն օրերուն , որպիսին յիշատակ մըն է միայն այդ կառավարութիւններէն ոմանց համար , եւ միւսներուն համար ալ անձանօթ բան մը : Կը հաւտամ որ պիտի չունենայինք ոչ հայկական ջարդեր , ոչ ալ թրքոյունական պատերազմը . եւ թէ վառնայէն մինչեւ Չէթինեէ , երկու մեծ տէրութիւններ , Ռումանիայէն զատ , պիտի բաժնէին հիմա Թերակղզին , թողլով Ռուսիոյ իր խոշոր բաժինը՝ առանց զոհելու արգարութիւնը եւ ազատութիւնը զոր կ'երազէր Նուպար : Սիրտը նեղացաւ երբոր ծրագիրը չյաջողեցաւ . բայց իր փրկաստիպութիւնը , միանալով իր քըրիստոնէական ոգւոյն եւ իր արեւելեան համակերպութեան , դանուութիւն ցուցընելէ արգիլեցին զինքը :

Սորապէս զգածուած էր իր Զիպա աղջկան մահուամբը , որովհետեւ իր ընտանեկան սէրը զօրաւոր էր , եւ իր ընտանիքը որուն գլուխը կը գտնուէր իր ամուսինը , իրեն նկատմամբ կը տածէր անհուն գորով ու հիացում : Իր կեանքը այնուհետեւ անցաւ մեծ մասամբ իր գործին զբաղելով , մերթ գիւղը քաշուելով , երբեմն ալ Բարիզ այցելելով , ուր գնած էր Պուասիէն փողոցին մէջ՝ տուն մը , եւ հոն է որ մեռաւ : Հոն կ'ընդունէր Հայաստանէն եւ Եգիպտոսէն եկող բոլոր մարդիկը : Աւելի հաւատք ունէր Հայոց զիւստիտական իմացողութեան քան թէ Նեղոսի հովտին կառավարութեան Եգիպտացուոց յանձնուելուն կարելութեանը , եւ երբ Աղեքսանդրիայի կամ Գահիրէի ինքնավարական մը կը բացազանչէր՝ « Եգիպտոսը՝ Եգիպտացուոց » , ուսերը թօթվելով կ'ըսէր՝ « Չկայ եգիպտացի ... » Սոսկալի հիւանդութիւն մը իր վրայ գալով , ծանր գործողութեան մը ենթարկուեցաւ . ֆրանսացի մեծ վիրաբոյժ Տր. Բոցցի , որ Տր. Պէրժէի հետ զործողութիւնը կատարեց , բաւ ինձի՝ « Մեր պարտականութիւնն էր գործողութիւնը կատարել , բայց մեր տխուր համոզումը այն է որ տառապալից կեանք մը պիտի ունենայ եւ քանի մը ամսէն պիտի մեռնի : » Գուշակութիւնը իրականացաւ : Իր ընտանիքը , որուն համար , նոյնիսկ տառապանքէն ընկճուած , անիկա պարծանք մը եւ մխիթարանք մըն էր , արժանի է զթութեան . բայց իրեն համար , ինչպէս կը գրէ ինձի իր Պօղոս որդին , մահը ազատում մը եղաւ :

ՊԼՈՎԻՅ. — Թայրեզ, 16 յուն. 99

Պովից , « Թայրեզ » թարգման մեծահոշակ Թովակիցը , Նուպար փաշայի հին բարեկամներէն մէկն էր ու մինչեւ վերջին վայրկեանը անոր մտերիմը մնացած էր :

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ եւ « ՍԻՍՈՒԱՆ » Ը . — Վերջին պահուն կ'իմանանք , ուրախութեամբ , թէ աւարտելու մօտ է տպագրութիւնը այն գրքին զոր Նուպար փաշա յանձնարարած էր Վենետիկ Մխիթարեան միաբաններուն եւ որուն դեռ հրատարակուած չըլլալուն համար ցաւ յայտնած էինք մեր այս Թուոյն նախօրուածին մէջ : Այդ գիրքը պիտի ըլլայ Շ. Ալիշանի « Սիսուան » ին ֆրանսերէն թարգմանութիւնը : Պսակ մըն ալ , ամենէն գեղեցիկներէն եւ անթառամներէն մէկը , ու պսակ մը զուտ հայկական , որ կուգայ զարդարել այդ մեծ Հայուն յիշատակը :



Կը հրատարակենք հետեւեալ նամակը զոր մեզի զրկած է մեր ընթերցողներէն մէկը . այդ նամակը կը շեշտէ եւ կը լրացնէ մեր նախորդ գրածները : Իպրոցներու եւ ժողովրդական հրատարակութեանց խնդիրներով , որոնց կ'ակնարկէ նամակագիրը , պիտի զբաղինք Անահիճի մէջ , անմիջականօրէն կարեւոր հարցերէն յետոյ : Իսկ երկրին մէջ ինքնապաշտպանութեան պատրաստուելու խնդրոյն գալով , այժմէն պարտք կը զգանք սա կէտը ճշդել որ ինքնապաշտպանութեան պատրաստութիւնը , կատարուած՝ բնական , ինքնարեւակաւ եղանակով մը , առանց ազմուկի , առանց լրագրական մատնասու տեղեկաբերութեանց , ամենէն խելացի , ամենէն հասկանալի եւ ամենէն յարգելի գործն է , եւ զոր պէտք է սրտանց բաղձանք , առանց անոր խօսքը հրապարակաւ յեղյեղելու . բայց այդ պատրաստութիւնը եթէ արտասահմանի անխոհեմ գործիչներու ձեռքով արուեստակաւորեմ , յանկարծակաւ ու բռնագրօսիկ կերպով կատարուի , նոր զըրզըմանց , նոր աղետքներու շարժառիթ միայն կրնայ դառնալ , եւ դատապարտելի է : Այս կէտը ճշդելէ յետոյ է որ կրնանք հրատարակել նամակը մեր թղթակցին , որ ապահովաբար արգէն համակարծիք է մեզի այդ մասին :

... Մեր հասարակական կեանքին մէջ դարազրուիս մը բացուած է իրօք . զէպքերը , պարագաները ստեղծեցին զանի , եւ այսօր կը հիւսենք ազգային մեծ շղթային կարեւոր օղակներէն մէկը . նոր շրջան մը կը մտնանք , մեր ետեւը ունենալով արիւնով ողողուած դաշտ մը եւ մէկ քանի բարոյական յաղթանակներ , իսկ մեր առջեւը ընդարձակ ասպարէզ մը : Նիւթական պարտութիւնը զոր կրեցինք երէկ պատճառ մը եղաւ մեզի որ քննենք մեր թերութիւնները , մեր սխալները , եւ աւելի փորձառու , աւելի զիտակից՝ մտնանք նոր ճամբայ մը : Անցեալին մէջ բաւական ժամանակ եւ

նանդը ամենակարեւոր զսպանակը եղաւ մեր հանրային գործունէութեան, ժողովուրդը իր մորթին վրայ զգացած սաստիկ ցաւերէն ստիպուեցաւ նետուել կրակի մէջ եւ այդ նոր ճամբուն վրայ փրտակցութիւնը չկրցաւ իրեն առաջնորդ առնել: Բայց հիմա տարբեր երեւոյթ մը կը ծնի. դարագլուխը յուսատու եւ յատկանշանական է. ժամանակաւոր յուսահատութիւնը, որ յաջորդած էր մեր գոյութեան կռիւին մէջ կրած առաջին ժամանակաւոր պարտութեան հետզհետէ կը կորսուի. գաւառներէ եկած մարդեր ու նամակներ կը հաստատեն այն գաղափարը թէ գաւառի ժողովուրդը, հայութեան այդ ամենէն հարագաս ու հզօր տարրը, սթափած է իր թմրութենէն, առոյգ, ուժեղ եւ նոր կեանքի մը սկզբնաւորութիւնը կը ցուցնէ. այդ ժողովուրդը հետզհետէ կ'ըմբռնէ իր վիճակին ծանրակշռութիւնը, կը տեսնէ թէ ո՛ր էր եւրէկ, ո՛ր է այսօր, եւ կ'աշխատի դռնել այն ճամբան որ զինքը պիտի ազատէ իր այս նեղ դրութենէն: Գիտակցութիւն մը արթնցած է ժողովրդին մէջ, եռանդը ստորադասուած է ա՛լ, եւ ասիկա ամենամեծ նշանն է փրկութեան. ահա այս առողջարար տրամադրութիւններն են որ լաւ ձեռքերով առաջնորդուած, օգտակար ու նպատակայարմար ուղղութեան մէջ գրուած, բարերար արգիւնքներ կրնան յառաջ բերել. եւ ազգին ճակատագիրը վարողները, ըլլան ատոնք հրապարակագիր, գործիչ, կամ ո՞ եւէ հանրային գործերով զբաղող անհատ, մեծ ուշադրութիւն պէտք է դարձնեն հոգեբանական այս նոր երեւոյթին վրայ: Բաւական ժամանակներ առաջ գաւառներու մէջ յեղափոխական մարմիններ կային եւ անոնց քով ալ հակայեղափոխականներ. գաղափարի մեծ անջրպետ մը կար երկու դասակարգներուն մէջ եւ գծտութեան, պառակտումի աղբիւր մըն էր ատ. հիմա այդ գաղափարի անհամաձայնութիւնը վերցուած է մէջտեղէն. այսօր գաւառի ժողովուրդը ոչ յեղափոխական է, ոչ ալ հակայեղափոխական, այլ պարզապէս դիտակից՝ իր վիճակին, եւ միտքը սեւեռած միակ կէտի մը վրայ, այն է «ինքնապաշտպանութիւնը»: «Սրտանց կ'ուզէի, կ'ըսէք Անահիթի մէջ, որ եթէ մահմետականներ նախայարձակ ըլլան, մերինները կարենային, փոխանակ անխուսափելի մահուան մը դիմացը ոչխարի պէս երթալու, զիրենք պաշտպանելու միջոցը ու քաջութիւնը ունենալ»: արդ՛ ջարդերէն ազատողները երկրորդ ընդհանուր ջարդի մը ժամանակ ոչխարի պէս մորթուիլ չեն ուզեր եւ

«միջոց»ները կը մտածեն. իսկ «քաջութիւն»ը սորվեցան արդէն՝ արիւնի գաշտերու մէջէն անցնելով: Ստացած վերջին տեղեկութեանցս համեմատ, գաւառներուն մէջ, շատ սեղ, մեր գիւղացիները, ուտելիքէն, խմելիքէն առաջ՝ ինքնապաշտպանութեան գործիք մը ձեռք ձգել ջանալու սկսած են: Այսօր ամէն մարդ համոզուած է որ Թուրքն ու Բիւրաքը մեր օձիքը պիտի չձգեն. մեր կողմէ յոգնածութեան կամ յուսահատութեան նշան մը պիտի քաջալերէ մեր թշնամիները. ինքնապաշտպանութեան հարկը անհրաժեշտ է: Այդ հարկը ա՛լ աւելի կը շեշտուի մասնաւորապէս այն բանին համար որ Եւրոպայի քաղաքական վիճակը երթալով կը կնճռոտի, բաղխումներ հաւանական կը դառնան եւ այդ պատճառով ամէն եւրոպական կառավարութիւն պարտականութիւն կը համարէ՝ պատրաստուիլ այդ բաղխումի օրուան՝ յանկարծակիի չզալու համար. մեծերը եթէ այդ ջանքերը կ'ընեն, ինչո՞ւ մենք մեր ջանքերը խնայենք, ինչո՞ւ մենք չաշխատինք յանկարծակիի չզալու. դիւանագիտութիւնը մեզի պիտի օգնէ առաւելապէս այն ժամանակ երբ ուժ մը ցուցնենք. երբ ինքզինքնին պաշտպանել գիտանք, մեզի պիտի համակիրն՝ փոխանակ մեր վրայ արգահատելու: Տաճկաստանի մէջ գոյութեան կռիւը երթալով կը սաստկանայ. մեր թշնամին չեմ կարծեր որ անկեղծ հաշտութիւն մը ուզէ մեզի հետ. Տաճկաստանի մէջ, «ապրիլ» ու «կուլիլ» իրարու հոմանիշ եղած են սկսելով Ալպանիայէն, Մակեդոնիայէն, Արաբիայէն մինչեւ մեր երկիրը:

Ներսը, դիմադրութեան ուժ, դուրսը՝ դիւանագիտական նպատաւոր պայմաններ, ասոնք միայն կրնան մեզի օգտակար ըլլալ ներկայիս մէջ: Չմոռնալով անշուշտ այն կարեւոր գործը որ վերապահուած է արտասահմանի ազատ մամուլին իր զօրաւոր, ազգային գրականութիւնովը ազդելու մտքերու վրայ եւ մտքի յեղափոխութիւնը վարելու: Պէտք է մտրակենք մեր թերութիւնները եւ ատիկա մամուլը կրնայ ընել: Հայերու մէջ անհատական գործունէութիւնը որքան բարձր, ուժեղ է, նոյնքան տրկար է հասարակական գործունէութիւնը. եւ այս բանը պատմական հին շրջաններէ սկսելով մինչեւ հիմա ճշմարտութիւն մը դարձած է: Համբաւաւոր չէգոքութիւնը որ շատերու «հաւատամք»ը դարձած է տեսնուեցաւ թէ ո՛րչափ վնասակար եղաւ. կը յուսամ որ Անահիթ իր ազգային գրական անկախ ուղղութիւնովը պի-

տի յաջողի չէզոքները գործունէութեան մէջ մտցնել . Տրէյֆիւսի ինչորը շատ աւելի շուտ , շատ աւելի զօրաւոր կերպով կը բացուէր եթէ Փրանսայի «չէզոք»ները այդչափ երկար ժամանակ հետու չպահէին ինքզինքնին այդ տեսակ փափուկ ու ծանր խնդրէ մը . ուղղութիւնները զծուած են , կոխը սկսած է արդէն եւ ուշ կամ կանուխ ամէն բան կը պարզուի , եւ այդ պարզութիւնը ամենէն օգտակար արդիւնքները կը ստեղծէ : Մեր մէջ ալ չէզոքներու դերը պէտք է վերնայ . ուղղութիւնները պէտք է որոշուին , կոխը աւելի բարոյական ձեւ մը պէտք է առնէ , եւ պէտք է որ ազգը իր բոլոր ուժերը դնէ այդ կոխին մէջ :

Արտասահմանի մէջ Հայոց մտաւորական գործունէութիւնը մեծ օգուաններ պիտի փայ : Կայ կէտ մըն ալ զոր պէտք չէ երբեք ուշադրութենէ հեռացնել , այն է մեր դպրոցներուն ինչորը , հին խնդիր մը որ միշտ նոր է : Ազգի մը վերակենդանացմանը մէջ դպրոցն ու մամուլը առաջին դերն ունին . վերջին ժամանակներու մէջ ջանքեր եղան մամուլին ազդեցութիւնը զօրացնելու համար , մինչդեռ վարժարանները կը մնան նոյն մարդոց ձեռքը նոյն ուղղութեան մէջ , անփոփոխ . մեր հին «զագէթածի»ներուն տեղ ունեցանք հրապարակագիրներ . բայց պատուելիները պատուելի մնացին : Արդեօք Անահիթի մէջ տեղ պիտի չտա՞ք դպրոցներու հարցին : Արտասահմանի մէջ յուզուած մտաւորական շարժումը աստիճանաբար երկիր կը փոխադրուի . այսօրուան ուսանողները երկրին մէջ վաղուան գործող երիտասարդութիւնը պիտի կազմեն . ինչ որ առ այժմ չենք կրնար ընել երկրի մէջ՝ գոնէ աշխատինք դուրսը ընել : Այս առթիւ ուրիշ խնդիր մըն ալ կը ներկայանայ մտքիս . ընթերցանութիւնը երթալով պէտք մը կը դառնայ մեր ժողովրդի հասարակ դասակարգին մէջ . խօսքս մասնաւորելով Աղեքսանդրիայի համար , ըսեմ թէ հոս կայ բանոր դասակարգ մը որ կարգալ կ'ուզէ , կրթուել կ'ուզէ , թերթ ու զիրք կը փնտռէ : Անշուշտ այդ փափաքը կը տեսնուի ուրիշ երկիրներու գաղթականութեանց մէջ ալ : Պէտք չէ՞ որ արտասահմանի հայ ուսանողութիւնը այդ փափաքը գահացնելու աշխատի , եւ տայ ժողովրդին պրզտիկ գրքոյկներ զանազան պարունակութեամբ , թարգմանութիւն կամ հեղինակութիւն , ինչ որ մեծ աշխատութիւն մը չէ մեր ուսանողութեան համար : Մոսկուայի ու Բեթերսպոլի հայ ուսանողները ընկերութիւններ ունին ու ժողովր-

դական գրքեր կը տպեն , եւ մեծ յաջողութիւն կը գտնեն : Մերինները կրնան անոնց օրինակին հետեւիլ :

Այս բոլոր բազմադիմի գաղափարները կ'ուզեմ ձեզի յայտնել՝ կարգալէ յետոյ Անահիթի խմբագրականները : Տեսնել մեր թերութիւնները , խրատուիլ անցեալէն , գործել գիտնալ , ու գործել : Այս է իմ մտածելու եղանակս :

Աղեքսանդրիա ՕՇԻՆ

Պ. ՉԵՐԱՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այս բոլորէս ձեռքս կը համարի Պ. Չերաչի պատասխանը «Պատասխանատուութիւնները» յօդուածիս , եւ պէտք կը զգամ երկու բառ ըսելու :

Այն ենթագրութիւնը որով Պ. Չերաչ կը նկրտի պահ մը մտքէն անցնել թէ ես «Պատասխանատուութիւնները» յօդուածս գրած ըլլամ «ծայրայեղ փափաքով մը հաճելի ըլլալու նուպար փաշային» որ դեռ կ'ապրէր» , պատիւ չի բերեր l'Arménieի սնօրէնին : Նախ , նուպար փաշային հաճելի ըլլալ ուղղով մը անոր հոգեվարքի օրերուն չպիտի սպասէր իր յօդուածը գրելու համար . Պ. Չերաչ գիտէր որ երեք չորս ամսէ ի վեր , նուպար փաշա , շարժելու եւ նոյն իսկ խօսելու գրեթէ անկարող , կեանքի ստուեր մըն էր միայն : Բայց արդէն ես միամտութիւնը ունեցիր էի կարծելու թէ Պ. Չերաչ զիս քիչ մը ճանչցած է եւ զիտէ թէ ո եւ է անձի հաճելի ըլլալու համար յօդուած գրելու սովորութիւնը երբեք չեմ ունեցած : Ներսէսին , Օտեանին , Խրիմեանին ու Չերաչին գործունէութիւնը քննադատած ատենս , ես բաւականացած էի ապացուցանելով թէ այդ գործունէութիւնը սխալ հաշիւներու վրայ հիմնուած էր , եւ ո եւ է ձգտում չէի ունեցած այդ սխալին ներքեւ եսական նկատումներ փնտռելու : Լաւագոյն էր որ Պ. Չերաչ իմ օրինակիս հետեւած ըլլար : Քննադատողին անձնականութեանը դպչելու գրութիւնը պէտք է ձգել այն տեսակ քննադատողներուն որոնք փաստ չունին տրուած փաստերուն դէմ հանելու եւ քննադատութիւնը կը կարծեն ջրել՝ անձնական նկատումներ ստեղծելով անոր տակ :

Եւ Պ. Չերաչի պատասխանը , զժբաղդաբար , հարուստ չէ փաստերով : Այդ երկայն յօդուածը , որ դեռ առաջին մասն է եւ պիտի շարունակուի , ուրիշ բան չի պարունակիր բայց եթէ պարզամիտ ու անդրդուելի ջատագովութիւն մը Ներսէսի

ընթացքին : Ես մէկիկ մէկիկ , իրողութիւններ թուելով , ցուցուցած էի սխալները , եւ անոնց հետեւանքները . Պ. Չերազ նկատողութեան չ'առնէր զանոնք , կը շատանայ հրատարակելով Օտեանի մէկ նամակը որ Ներսէսը կ'ատուածացնէ , որպէս թէ Ներսէսի սխալին գործակից եղող անձի մը հիացումը փաստ մը ըլլար Ներսէսը քննադատողներուն դէմ :

Պ. Չերազ կը կարծէ թէ Պերլինի 61րդ յօդուածը Սան-Սթեֆանոյի 16րդ յօդուածէն աւելի արժէք ունէր . այդ մասին պիտի գրեմ վերստին , հիմա սաչափը ըսեմ որ այդ հրաշագործ 61րդ յօդուածը չկրցաւ 200,000 հայեր կորուստէ ազատել . . .

Պ. Չերազ կը յայտարարէ թէ Պերլին գացող հայ պատգամաւորները աննպատակ մը ըսած չեն Ռուսիոյ մասին . կը զարմանամ որ Պ. Չերազ կը յամառի հերքել բան մը զոր ամէն ոք գիտէ այսօր եւ որուն դրական ապացոյցները պիտի տամ ընդհուպ : Եւ Պ. Չերազ ոչինչ կ'ըսէ յօդուածիս ամենէն կարեւոր կէտին վրայ , այն է թէ Պերլինի պատգամաւորները , անգիտակցաբար , թուրքին կամքը կատարած եղան . արդ՝ անա բարձրօրէն ձեռնհաս անձ մը , Պ. Պէռառ , որ արդէն այդ դաղափարը երեք տարի առաջ յայտնած էր իր Սուրբաբնիկ Բաղաբնիկապետի մէջ (1) , այսօր իմ կարծիքս կը շեշտէ իր նամակով որ այս թուով կը հրատարակուի :

Պ. Չերազ կը շարունակէ մեծ քաղաքագէտի տեղ դնել Ներսէսը , որ հաշուետուութեան ժողովին օրը «ճամբայ ելէք դէպ ի Հայաստան» կը գոչէր ժողովականներուն , առանց գուշակել կարենալու թէ իր ճառէն շարքս մը յետոյ Եզրիա Տնտեսեան պիտի ձերբակալուէր եւ պիտի սկսէին սեղմումներն ու հալածանքները . . .

Փոխանակ մեղադրելու ինձի որ չեմ անուանած երկու անձեր որոնց ակնարկած եմ յօդուածիս մէջ , Պ. Չերազ աւելի խոհեմ ու խղճամիտ վարմունք մը ունեցած կ'ըլլար եթէ ինքն ալ տեսակ մը անուններ այս առիթով հրապարակելէ զգուշանար :

Վերջապէս , չեմ կրնար չգիտել որ Պ. Չերազ , — այն վայրկեանին իսկ ուր կը կարծէ ուրիշներուն քով տեսնել ծայրայեղ հաճոյակատարութիւն այնպիսի անձի մը համար որ պէտք չունէր շողջորթուելու եւ որ շողջորթները կ'ատէր , — ինքը կը ձգտի , նոյն իսկ դազաղին

(1) Վ. Պէռառ . — «Սուլթանի քաղաքականութիւնը» , էջ 146

առջեւ Հայերէն չհասկցուած այդ Հայուն , մշտնջենաւորիլ անարգար եւ ապաշնորհ անտարբերութիւնը զոր հայ ազգը ցուցուց այդ մարդուն կեանքին ամենէն հայկական , ամենէն գեղեցիկ ձեռնարկին հանդէպ . Պ. Չերազ չի յիշատակեր , Նուպարի կենսագրութեան մէջ , անոր հայկական ծրագիրը : Եւ սակայն պա՛րտք մըն էր որ , գոնէ այս հանգիստաւոր պարագային մէջ , Պ. Չերազ հրապարակաւ խոստովանէր ինչ որ մինչեւ հիմա ծածուկ պահած էր : Ազնիւ ու քաջ բան մըն է սխալը խոստովանիլ գիտնալ : Պ. Չերազ որ , չեմ գիտեր ի՛նչ իրաւունքով , կ'երեւակայէ թէ ես նախատած եմ (!) Ներսէսի յիշատակը , ճշմարտապէս կը վիրաւորէ Նուպար փաշային յիշատակը՝ իր լուսթեամբը զգացնելով թէ Ներսէս աղէկ ըրաւ անոր միջամտութենէն չօգտուելով :

Առ այժմ այսչափ Պիտի դառնամ այս խնդրոյն երբ Պ. Չերազ աւարտէ իր պատասխանը : Չեմ սիրեր վիճաբանիլ . բայց այս խնդիրը , ամէն անձնականութենէ վեր , ազգային կենսական կարեւորութիւն ունի , եւ օգտակար է որ լուսաբանուի : Պ. Չերազ ամբողջ անցեալ շրջան մը կը ներկայացնէ . անոր խօսքը նշանակութիւն ունի . եւ գոհ եմ որ զինքը մղեցի բացատրութիւն տալու : Իր ըսածներէն սիրով պիտի քաղեմ ինչ որ գտնեմ ճիշդ : Բայց կը փափաքեմ որ կարենայի համոզել զինքը թէ նուիրագործուած սրխալին յարգանքը վնասակար յարգանք մըն է , եւ թէ պէտք չէ ըլլալ այն անձերէն « որ ոչինչ կը սորվին եւ ոչինչ կը մոռնան » :


Ա. Չ.

«ԱՆԱՀԻՏ»Ը ԱՍԵՐԻԿԵԱՆ ՄԱՄԼՈՅՆ ՄԷՉ

Պոստոնէն , Պ. Խորէն Անդրէասեան , որ անգլիերէն սիրուն րանաստեղծութիւններ տուած է ամերիկեան Պերսերու , մեզի կ'իմացնէ թէ տեղական լրագրի մը մէջ հրատարակած է մարգամաւորի մը Միլ-Երօի «Շէյխորդի» ին , Բաշալեանի «Յեղին Ձայն» ին եւ Փափագեանի «Ինչո՞ւմն էր ոյժը» ին , որոնք «Անահիտ» ի առաջին մուտքն մեջ երեցան :

«Իմանի՞նէ Նուվէլ» հանդէսին յունուարի թիւը կը պարունակէ գեղեցիկ նորավէպ մը , «Ուրուականը» տիպոգոսով , մեր աշխատակից Օր. Չապէլ Յովհաննէսեանէն :

Le gérant : Georges WALINE



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նուպար փաշա	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
Նամակ խմբագրութեան	ՎԻՔԹՈՌ ՊԷՌՍՈ
Գրաստանի ջանքեր	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
Հայդիրք, Վարձակը	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
Երկու խօսք մեր զբարարբանների միութեան մասին	Գ. ՎԱՆՑԵԱՆ
Մաքիս խառնարանէն	ԽՈՍՐՈՎ (ԹԱՆ)
Նուպար փաշա	ՄԷԼԻՔՈՌ ՏԸ ՎՈԿԻԻԷ
	ՊԼՈՎԻՅ
Նամակ խմբագրութեան	ՕՇԻՆ
Պ. Չերազի պատասխանը	Ա. Չ.

Տեղի նուագութեան պատճառով, յառաջիկայ թուոյն ստիպուեցանք թողուլ Վարդ եւ Մոխակին ու Հերովիլային շարունակութիւնը, Գաղաքական անտութիւնը եւ ազգային յրոնիկը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑՍԻ

Ա. Ղ. Ե. Բ. Ս. Ա. Ն. Դ. Ր. Ծ. Ս. Տ. Ո. Ի. Բ. Ե. Ա. Ն. Ի.

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ZUSNR P.

Դիմել հեղինակին

Sadovaja Karetnij
Nomera Ivanovoj, N. 10
Russie MOSCOU

Գին մէկ ռուպլի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԵՑՈՅՑ

ՀԱՅՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

ԽՄԲ. ՂԵՒՈՆԴ ԲԱԶ. ՓԱՓԱՋԵԱՆ

Կալաց

Գին մէկ ֆրանք

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՐՄԷՃԵԱՆ

ԳՐԱՎԱՃՍՈՒ, ԹՂԹԱՎԱՃՍՈՒ ԵՒ ՏՊԱԳՐԻՉ

Մասնաւոր պահեստ Ռուսական հրատարակութեանց: Գագրոցական եւ գրասենեկի ամեն յետադիմութեան: Տպագրութիւն՝ հայերէն, ճարտարագիտական, պոլիտեխնիկական, գիտական եւ անգլիերէն լեզուներով:

Աշխատանքից՝ Հայերէն գրեւոր Հրատարակչական ընկերութեան Թիֆլիզի:

Գործակալ՝ «Արաբ», «ՀանդէսԱմսօրեայ», «Ազգագրական Հանդէս», «Լուսնայ», «Անտի» եւ ուրիշ հրատարակութեան:

Արժեքուցակներ կը յղուի 25 սնդի չգործածուած ֆրանկագրով փոխարկով:

Դիմել՝ K. Deukmédjian, Roustchouk, Bulgarie.

Ընդունած ենք՝

ՎԵՐԺԻՆ, ՎԷՅ ՇԱՆԹԻ (Թիֆլիս):

ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ.— ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԵԱՆ (Թիֆլիզ):

ԱՐԱՔՍ զեղարուեստական հանդէսին 1899ի զիւրքը (Ս. Բեղբրսպուրի):

Ն. ՅԱՐՈՅ.— ՆԱՐՆԵՐ (Թիֆլիս):

Պիտի խօսինք ի մօտոյ այս հրատարակութեանց վրայ:

«ԱՆԱՀԻՏ» Ի ԲԱԺՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիս պիտի շրտարակուի ամիսը մէկ անգամ. իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ, եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսայ), 20 սենդ (Սանտօ), 1 ֆր. 25 (օտար երկիրներ):

Բաժանորդագրին է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսայ), 12 ֆրանք (օտար երկիրներ), 5 ռուպլի (Ռուսիա), 2 սուլար (Ամերիկա). Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսայ), 6 ֆրանք (օտար երկիրներ), 2, 50 ռուպլի (Ռուսիա), 1 սուլար (Ամերիկա):

Բաժանորդագրի կանխիկ է:

Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ համար Անանիսի գործակալն է Պ. Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսչուք, Պուլկարիա):

Չհոսողները եւ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամէն տեսակ ազգեր:

Նամակ, յօղուած եւ բաժանորդագրին ղրկել առ Ա. Չօպանեան, 6, Place de l'Odéon, Paris.